<<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորաշեն գյուղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի

2024-2029

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն գյուղի հիմնական դպրոց>>
ՊՈԱԿ-ի տնօրենի հավակնորդ՝ Թեհմինե Վարդանի Հակոբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3

2. Զարգացման ծրագրի կառուցվածքը----------5

3. Հաստատության գործունեությունը ----------6

4. Իրավիճակի վերլուծությունը,ուժեղ և թույլ կողմերը.

5. Դպրոցի շենքային պայմանները----------22

6. Դպրոցի նյութատեխնիկական բազան ----------24

7. Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները----------30

8. Դպրոցի համագործակցության վերլուծությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ----------41

9. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները ----------42

10. Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները և

նորարարությունները--- ----------47

11. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը----------49

12. Բազմակարծիք ,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն----------65

13. Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն ----------68

14. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը , ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության,ցուցանիշների, շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից----------69

15. Դպրոցի հիմնախնդիրները ----------79

16. Դպրոցի զարգացման նպատակներն ու խնդիրները ----------79

17. Սահմանված նպատակները և խնդիրները, խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան գործողությունները , ակնկալվող արդյունքները, պատասխանատուները , իրականացման ժամկետները,գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը, ռիսկերի կանխման գործողությունները----------80

18. Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները վերահսկողության մեխանիզմները----------97

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երիտասարդ սերնդի դաստիարակությունը,նրա կրթությունը միշտ փոփոխվում և զարգանում է կյանքի պահանջներին համապատասխան:Ներկայումս այդ օրինաչափությունը իր ցայտուն արտահայտությունն է գտնում Հայաստանի Հանրապետությունում,երբ կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում խոշոր վերափոխումներ,որոնք անհրաժեշտ են դարձնում վերափոխումներ նաև հանրակրթության բնագավառում:

Այդ գործում դպրոցի գործունեության հիմնական ելակետը բազմակողմանի զարգացած անձնավորության ձևավորման պահանջն է,որից բխում են դպրոցի ներկա խնդիրները՝ կրթության բովանդակության արմատական վերափոխումը, սովորողների անհատական ընդունակությունների բացահայտումը , սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը , մարդկային արժանապատվության պահպանումը,իրենց ընդունակություններին , կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցումը,ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերումը և ինքնուրույն կյանքի նախապատրաստումը , մասնագիտական կողմնորոշումը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստումը, ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումը, յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումը ,այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ,զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումը, ուսուցչի և աշակերտի,դպրոցի,ընտանիքի և հասարակայնության համագործակցության ուժեղացումը, մանկավարժական պրոցեսի արդյունավետ կազմակերպումը, դպրոցի լայն ժողովրդավարացումը:

Այդ խնդիրների լուծումը ենթադրում է դպրոցի կառավարման կատարելագործում, որը ամենից առաջ ենթադրում է արմատական բարեփոխում՝ լայն ժողովրդավարացում և հրապարակայնություն, հնացած ոճի և մեթոդների վերացում, կառավարման գիտական մակարդակի բարձրացում, դպրոցի կոլեկտիվի ստեղծագործական ակտիվության զարգացում, կառավարման և ինքնակառավարման զուգորդում, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծում, ներդպրոցական կառավարման ինքնուրույնության ընդլայնում:

Դպրոցի շարունակական զարգացումը պահանջում է.

- աշխատանքի ընթացքում հաստատության գործունեության համապատասխանեցում սովորողների կրթական կարիքներին , պետության կրթական քաղաքականության միտումներին, առկա մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին,

- դպրոցի շենքային պայմանների բարելավում և արդյունավետ օգտագործում, նյութատեխնիկական բազայի համալրում, ուսումնական միջավայրի հարմարեցում սովորողների որակյալ ուսուցմանը և ուսումնառության կազմակերպմանը,

- կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով դպրոցի արդյունավետ համագործակցություն կրթության կառավարման մարմինների, համայնքի, շահառու կազմակերպությունների հետ (ծնողներին ժամանակին իրազեկել ուսումնական գործընթացի մասին ՝ ապահովելով նրանց մասնակցությունը կառավարման գործընթացին , ներկայացնելու իրենց դիտարկումներն ու առաջարկությունները, նախագծային և այլ աշխատանքների իրականացման ժամանակ իրականացնել համայնքային կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն),

- դպրոցի խորհրդի,խորհրդակցական մարմինների և տնօրենի արդյունավետ համագործակցություն,

- մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումների իրականացում,օբյեկտիվորեն գնահատելով մակավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքները, ապահովելով նրանց մասնակցությունը մասնագիտական զարգացմանը նպաստող առկա և հեռավար դասընթացներին, վերապատրաստումներին ՝ նրանց կարիքներին համապատասխան, իրականացնելով մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում և հետադարձ կապի ապահովում,

- չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում(յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսումնական պլանի կազմումն՝ որպես մասնակցային գործընթաց, հիմնված լինելով հանրակրթության պետական չափորոշչի, համայնքի և դպրոցի գործունեության նպատակների վրա, պետք է իրականացվի դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ,դասաբաշխումները պետք է իրականացվեն կրթության որակի բերալավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով, ուսումնական տարվա ընթացքում և ուսումնական տարվա ավարտին պետք է պարբերաբար իրականացվի սովորողների առաջադիմության տվյալների անցկացող ընթացիկ , ամփոփիչ և արտաքին գնահատումների,օգտագործվող մանկավարժական մեթոդների և մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավելով առաջադիմության ցուցանիշները՝ ամեն տարի ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատման և առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցով, ըստ անհրաժեշտության վերանայելով մանկավարժական մեթոդներն ու եղանակները),

- տեխնոլոգիաների և նորարարությունների արդյունավետ կիրառում,

- ներդպրոցական արդյունավետ վերահսկողություն, մանկավարժական աշխատողների աշխատանքի մշտադիտարկում, նրանց աշխատանքի արդյունավետության գնահատում, վերահսկողության արդյունավետ մեթոդների ընտրություն և կիրառություն,

- կրթական միջավայրի արդյունավետ կառավարում , ուսումնառության հավասար պայմանների ապահովում բոլոր սովորողների համար, ներառական կրթության համակարգի զարգացում,բոլոր աշակերտների լիարժեք մասնակցություն և անհատական մոտեցումներ,

- ուսումնական տարվա աշխատանքների պլանավորում դպրոցի զարգացման ծրագրի ,հանրակրթության պետական չափորոշչի, առարկայի ծրագրի պահանջներին, ուսումնական պլանով առարկայի հատկացված ժամաքանակին և գնահատման մեթոդաբանությանը համապատասխան,

- աշխատանքի բնույթին համապատասխան արդյունավետ պլանավորել և օգտագործել կրթական ռեսուրսները և աշխատաժամանակը, ՏՀՏ կիրառմամբ պլանավորված աշխատանքի,այդ թվում՝ ներդպրոցական վերահսկողության իրականացումը և հաշվետվողականությունը դարձնել ավելի մատչելի,

- դպրոցում յուրաքանչյուր աշխատողի աշխատանքն ու մասնագիտական գործունեությունը պետք է իրականացվեն հանրակրթության և աշխատանքային օրենսդրության,մասնագիտական բարեվարքության և ժողովրդավարական արժեքների պահանջներին համապատասխան՝ ստեղծելով առողջ բարոյահոգեբանական, փոխադարձ հարգանքի մթնոլորտ . մասնագիտական զարգացման տարաբնույթ ծրագրերի մասնակցության համար մանկավարժական աշխատողների խրախուսում այն հաշվով,որ դպրոցում ամեն տարի մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցող և դրա արդյունքում վարձատրության բարձրացում գրանցող մանկավարժների թիվը ամեն տարի աճի,

- դպրոցում ապահովել և պահպանել սովորողների և աշխատողների համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ սանիտարահիգիենիկ և անվտանգ պայմաններ,կազմակերպել առողջության պահպանման համապատասխան միջոցառումներ:

ԴՊՐՈՑԻ 2024-2029 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դպրոցի՝ 2024-2029 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները>> հաստատելու մասին N35-Ն հրամանի (խմբագրված ՀՀ ԿԳՄՍ նախարարի 08.02.2024 թ.-ի N 09-Ն հրամանով) հավելվածի պահանջներին համապատասխան ՝ հաշվի առնելով դպրոցի առանձնահատկությունները,դպրոցի վերջին տարիների ձեռքբերումները, առկա

հիմնախնդիրները,դպրոցի մանկավարժական,ծնողական և աշակերտական խորհուրդների հետ կայացած հանդիպումների ընթացքում ներկայացված առաջարկությունները :

Զարգացման ծրագիրն այն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պետք է պլանավորվի աշխատանքը հաստատությունում և ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

1. Հաստատության գործունեությունը.

2. Իրավիճակի վերլուծությունը,ուժեղ և թույլ կողմերը.

3. Նպատակների և խնդիրների սահմանումը.

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.

5. Պատասխանատուները.

6. Արդյունքների գնահատման չափանիշները.

7. Ռիսկերը.

8. Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.

9.Զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները:

1. Հաստատության գործունեությունը

Տեղեկություններ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն գյուղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մասին

Դպրոցը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ,իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:
Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:
Դպրոցը հանդիսանում է <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորաշեն գյուղի 8-ամյա դպրոց>> պետական հիմնարկի իրավահաջորդը:

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, <<Կրթության մասին >>,<<Հանրակրթության մասին >>,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին >> , <<Նախադպրոցական կրթության մասին>> օրենքներով,այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ (հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 22.11.2002 թ.-ի թիվ 173 որոշմամբ , նոր խմբագրությամբ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 27.08.2010 թ.-ի թիվ 406-Ա , 26.10.2017 թ.-ի թիվ 263-Ա, 21.11.2020 թ.-ի թիվ 479-Ա որոշումներով), իսկ ՀՀ

իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 15.01.2003 թ.-ին, գրանցման համարը՝ 87.210.00987:

Դպրոցի հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,Սևան համայնք,բնակավայր(գյուղ) Նորաշեն, 4-րդ փողոց, 2-րդ փակուղի, շենք 12:

Դպրոցը՝որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվամբ ձևաթղթեր, պաշտոնական կայք,որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, հաստիքացուցակը, հայտարարությունները, թափուր աշխատատեղերը, ֆինանսական հաշվետվությունները և դպրոցի գործունեությանն առնչվող <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ տեղեկություններ:

Դպրոցը ՀՀ օրենսդրությանը և ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան կարող է համագործակցել օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ:

Դպրոցում արգելվում է իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն,կրոնական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են ՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության,մարդասիրության, հանրամատչելիության,թափանցիկության,անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

Դպրոցի կրթական գործընթացի կազմակերպումը

Դպրոցը՝ ըստ կրթական մակարդակների իրականացնում է.

1. Նախադպրոցական (ավագ տարիքային խումբ 5-6 տարեկան) կրթական ծրագիր ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.02.2020 թ.-ի N241-Ա/2 հրամանով դպրոցին տրվել է ավագ նախադպրոցական տարիքային խմբի, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային 25 տեղով գործունեության լիցենզիա՝ N0657 ,

2. Տարրական ընդհանուր 1-ին աստիճան հանրակրթական ծրագիր ՝ ՀՀ ԿԳ նախարարի 02.07.2010 թ.-ի N746-ԱՔ հրամանով , առկա ուսուցմամբ ,4 տարի տևողությամբ ,համակազմի սահմանային 181 տեղով գործունեության լիցենզիա ՝ N0420,

3. Հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան հանրակրթական ծրագիր՝ ՀՀ ԿԳ նախարարի 02.07.2010 թ.-ի N747-ԱՔ հրամանով,առկա ուսուցմամբ, սահմանային 5 տարի տևողությամբ, համակազմի սահմանային 192 տեղով հործունեության լիցենզիա՝ N0412:

Դպրոցի գործունեության առարկան և նպատակը յուրաքանչյուր սանի և սովորողի կրթության կազմակերպումն է ՝ նախադպրոցական(իրականացվում են նաև նախադպրոցական (ավագ տարիքային խումբ՝ 5-6 տարեկան) ծրագրեր՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու լիցենզիայի առկայությամբ, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի, <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի և նախադպրոցական կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան),հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրերի իրականացման միջոցով:

Կրթադաստիարակչական գործընթացն իրականացվում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի , հանրակրթության պետական չափորոշչի, <<Նախադպրոցական կրթության մասին>> և <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքների, նախադպրոցական կրթության և հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերի ,երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին,հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ .նպատակը յուրաքանչյուր սանի և սովորողի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ,նախադպրոցական և հանրակրթության պետական չափորոշիչներով սահմանված արդյունքների ապահովումն է :

Դպրոցը պատասխանատու է յուրաքանչյուր սանի և սովորողի կրթության մատչելիության , հավասար մասնակցության հնարավորության և կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման, նախադպրոցական և հանրակրթության պետական չափորոշիչների,նախադպրոցական ավագ խմբի, հանրակրթական պետական ծրագրերին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրության,յուրաքանչյուր սանի և սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը խթանելու նպատակով ֆիզիկական միջավայրի մատչելիության և անհատական , խելամիտ հարմարեցումների ապահովման, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ապահովման համար՝ հաշվի առնելով սաների և սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, հակումներն ու ընդունակությունները, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանումը:

ա) ի՞նչ կրթական կարիքների է բավարարելու դպրոցի գործունեությունը

- ուսուցման և խնամքի,ուսումնառության և դաստիարակության գործընթացին յուրաքանչյուր սանի և սովորողի համար հավասար հնարավորությունների և մատչելիության, հասանելիության ,ներառականության ապահովմամբ նպաստել կրթության իրավունքի

իրացմանը՝ հաշվի առնելով նրանց կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, երեխայի մտավոր,հոգեկան,ֆիզիկական և սոցիալական զարգացման ձեռքբերումների արժեորմանն ու անհատականության բացահայտմանն ուղղված երեխայակենտրոն,ներառական և զարգացնող միջավայրի ապահովման առաջնայնությունը,ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերումը,սեփական դիրքորոշում ունեցող ,բազմակողմանիորեն զարգացած, մասնագիտական կողմնորոշում ունեցող, հայրենասեր, համամարդկային արժեքներ կրող անձի ձևավորմանը,

- կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմանների, բնականոն աշխատանքային ռեժիմի,բժշկական օգնության և սպասարկման,ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմանների,անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտությունների ձևավորում,

- իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացում ծնողական համայնքի ներգրավվածության ապահովում,

- արատավոր երևույթները կանխարգելելու համար միջոցառումների ու ծրագրերի իրականացում, որոնք միտված կլինեն սովորողների հոգևոր և ֆիզիկական առողջության զարգացմանը,

- երեխայի հոգեբանական կամ ֆիզիկական ճնշման բացառման ուղղությամբ միջոցառումների իրականացում՝ ներգրավելով աշակերտական,ծնողական և մանկավարժական ու վարչատնտեսական կոլեկտիվներին,խորհրդակցական մարմիններին,

- աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանեցում ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին ,այն հաշվով,որպեսզի աշակերտական խորհրդի առաջարկություններն արտացոլեն սովորողների կարիքները և աշակերտական խորհրդի գործունեությունը կառուցվի փոխադարձ վստահության և աջակցության պայմաններում ,

- դպրոցը պետք է ապահովի սաների և սովորողների առաջխաղացումը և նպաստի նրանց մասնակցությանը բազմաբնույթ միջոցառումներին, (ներդպրոցական ,համայնքային,մարզային,հանրապետական, մշակութային, մարզական մրցույթներին , օլիմպիադաներին),սոցիալական աջակցության թափանցիկ ծրագրեր իրականացնի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ,ուսումնական նախագծերի,արտադպրոցական ու արտադասարանական միջոցառումների նպատակային իրականացումով նպաստի սովորողների ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական, մշակութային և այլ կարողունակությունների զարգացմանը,

- ուսումնական պլանները պետք է մշակվեն ՝ համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռբերումները, առաջընթացը,

- ուսուցիչները ուսուցման գործընթացը պետք է հարմարեցնեն սովորողների կրթական կարիքներին համապատասխան և մշտապես խրախուսեն նրանց, դրսևորեն դրական

դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ, գիտակցեն ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկեն համապատասխան քայլեր, դրսևորեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից, կարողանան հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում,դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում,

- դպրոցում ևս սովորողները պետք է գիտակցեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնեն փոխել դրանք , այդ նպատակով պետք է կազմակերպել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնություններ,ապահովել այդպիսի երեխաների հավասար մասնակցությունը արտադասարանական խմբակներում, աշակերտական խորհրդում, զանազան միջոցառումներին և այլ գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի:

բ) հաստատության գործունեության համապատասխանությունը պետության քաղաքականության միտումներին,համայնքի,շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Դպրոցի գործունեությունը պետք է համապատասխանի հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությանը,որը հռչակում և երաշխավորում է հանրակրթության բնագավառի զարգացումը՝ որպես անհատի և հասարակության անվտանգության և կայուն զարգացման ապահովման, հայ ինքնության պահպանման կարևոր երաշխիք:

Ազգային դպրոցը ,հանդիսանալով հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը, գլխավոր նպատակ է համարում համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության , պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումը և հետևաբար դպրոցի գործունեության վերը նշված ուղղությունները համապատասխանում են հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության նպատակներից և սկզբունքներից,որոնցից համընդհանուր ներառական կրթությունը հանդիսանում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք և նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության ,հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը.

-կրթություն ստանալու հավասար հնարավորություններ և մատչելիություն բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց միմյանցից տարբերվող ուժեղ կողմերի ու կրթության առանձնահատուկ կարիքի,

- դպրոցն պետք է ապահովի հանրակրթության բնագավառում պետության կողմից երաշխավորված հետևյալ սկզբունքները.

-հանրակրթության մարդասիրական բնույթը,ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի և առողջության, անհատի ազատ ու համակողմանի զարգացման առաջնայնությունը, նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը,արժանապատվությունը, աշխատասիրությունը, հայրենասիրությունը, պատասխանատվությունը, հայրենասիրությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը, քաղաքացիական գիտակցության կարևորումը,

-ժողովրդավարական սկզբունքների ապահովումը (դպրոցի գործունեության թափանցիկություն և հանրամատչելություն),

-հանրակրթության հավասար հնարավորությունները,մատչելիությունը, շարունակականությունը,հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին,

-դպրոցում ստեղծագործական աշխատանքի խթանումը սովորողների վերլուծական , քննադատական մտածողության,գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը,ուսումնառության և կրթական ծառայությունների շարունակական որակի բարելավումը սովորողների և աշխատողների իրավահավասարության ապահովումը,
-կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ համագործակցություն:

գ) դպրոցի գործունեության համապատասխանությունը առկա ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Դպրոցը Նորաշեն գյուղի միակ կրթական հաստատությունն է ,ունի երկհարկանի մեկ մասնաշենքից բաղկացած տիպային շենք՝ կառուցված 1978 թվականին:

Շենքի նախագծային հզորությունը նախատեսված է 192 աշակերտական տեղերի համար(սակայն գյուղի սակավաթիվ բնակչության թվաքանակով պայմանավորված դպրոց փաստացի հաճախող երեխաների թիվը 46 է), շենքի ընդհանուր մակերեսը 1484.67 ք.մ. է, նկուղային հարկի ընդհանուր մակերեսը 730 ք.մ. է և հանդիսանում է ոչ միայն դպրոցի,այլև գյուղի միակ ապաստարանը: Դպրոցին կից կանաչապատ հողատարածքի մակերեսը 11380 ք.մ. է, առկա է մարզահրապարակ ,կաթսայատուն,էլեկտրական ենթակայան: Դպրոցն ունի կենտրոնացված շուրջօրյա ջրամատակարարում,գազամատակարարում, էլեկտրամատակարարում, կոյուղացում, մշտական ինտերնետ կապ :

ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ <<Հայգյուղշին նախագիծ >> ՍՊԸ-ի կողմից 2004 թ.-ին կառուցվել է լոկալ կաթսայատուն 100 ԿՎտ

հզորությամբ (աշխատում է դիզելային վառելանյութով), որի շահագործումը պայմանավորված ֆինանսական մեծ ծախսատարությամբ հնարավորություն չի տվել դպրոցին իրականացնելու լոկալ ջեռուցում ՝ ֆինանսական միջոցների անբավարարության հետևանքով,ուստի դպրոցի ջեռուցումը մինչև օրս իրականացվում է գազի վառարանների միջոցով՝ ըստ դասարանների և առաջնային նշանակության տարածքների,որն անթույլատրելի է անվտանգության տեսանկյունից:

Դպրոցի մարզադահլիճը,սանհանգույցները,միջանցքները,լաբորատորիաները, արհեստանոցը,հանդերձարանները,գրադարանը և ընթերցասրահը, հանդիսությունների դահլիճը չեն ջեռուցվում:

Հաստատության տարածքը ցանկապատված է,հեռու է գտնվում ճանապարհային երթևեկելի գոտուց, արտակարգ իրավիճակների դեպքում հատուկ ծառայությունների ավտոմեքենաների համար ազատ են պահվում դպրոցամերձ ուղիները,տարհանման ուղիներն ազատ են ,առկա են դեպի դուրս բացվող 2 պահուստային ելքեր,դռները լայն են,առկա է աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլան ,տարհանման պլան-սխեմաները առկա են դպրոցի հարկերում,դասասենյակներում, սովորողները և աշխատակազմը տիրապետում են տարհանման պլանին և ուղիներին և արտակարգ իրավիճակներում իրենց գործառույթներին,դպրոցում իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ միջոցառումներ, ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է քաղաքացիական պաշտպանության պլանը, իրականացվում են վարժանքներ, դպրոցի տարածքը պահվում է մաքուր վիճակում, շենքում կառուցվածքային վտանգներ չկան, հակահրդեհային միջոցները պահվում են կանոնավոր վիճակում:Դպրոցի ներսում կառուցված նախակրթարանն ունի թեքահարթակ,սանհանգույցները հարմարեցված են ԿԱՊԿՈՒ երեխաների պահանջներին: Դպրոցում չի գործում օդափոխության համակարգեր,ներքին հեռախոսակապ,վթարային լուսավորության համակարգ,հրդեհաազդարարման ինքնաշխատ և ներքին հրդեհաշիջման համակարգ:Թեև դպրոցում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ միջանցքների և դասասենյակների մի մասի, ճաշարանի,սանհանգույցների ,դռների և պատուհանների մի մասը փոխարինվել են նորով,այնուամենայնիվ մի շարք ենթակառուցվածքների բացակայությունը պայմանավորված է նրանով,որ դպրոցը հիմնադրումից ի վեր ամբողջապես չի հիմնանորոգվել:

Դպրոցական շենքը և հարմարությունները (ենթակառուցվածքներ)

Ենթակառուցվածքներ	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը ք.մ.	Վիճակը
Նախակրթարանի դասասենյակ	1	56.73	նոր կառուցված
Նախակրթարանի խաղասենյակ	1	37.82	նոր կառուցված
Նախակրթարանի հանդերձարան	1	18.6	նոր կառուցված
Նախակրթարանի սանհանգույց	1	9.6	նոր կառուցված

Դասասենյակներ	10	39.2	չորսը՝ վերանորոգված, վեցը՝ բավարար
Համակարգչային դասասենյակ	1	25	բավարար
Լաբորատորիա	2	18	բավարար
Արհեստագործական սենյակ	1	39.2	բավարար
Հանդիսությունների դահլիճ	1	54	վերանորոգված
ՆԶՊ դասասենյակ	1	20	վերանորոգված
Զենքի պահեստ	1	4	լավ
Ճաշարան	1	92	նոր վերանորոգված
Սննդի պահեստ	1	6	նոր վերանորոգված
Սպորտ դահլիճ	1	184.8	բավարար
Սպորտ դահլիճի հանդերձարաններ	2	6	լավ
Աշխատասենյակներ	3	20	լավ
Առանձնացված սանհանգույցներ	3	5.2	լավ
Գրադարան	1	39.2	բավարար
Ընթերցասրահ	1	20	բավարար
Պահակակետ	1	12	բավարար
Ապաստարան	1	730	բավարար
Տեխնիկական նշանակության սենյակ	1	6	բավարար

Տարիներ շարունակ փոքրաթիվ համակազմ ունենալու հետևանքով, աշակերտների թվով ֆինանսավորման պարագայում, դպրոցում բացակայել են վարչական,մանկավարժական,ուսումնաօժանդակ և սպասարկող այնպիսի հաստիքներ,ինչպիսիք են եղել տնօրենի ուսումնական և մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալների,սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, լաբորանտի,հոգեբանի, տնտեսվարի հաստիքներ, և դրանց բացակայությունը իր բացասական հետևանքներն է ունեցել ինչպես դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության,այնպես էլ վարչատնտեսական և սպասարկող աշխատանքների արդյունավետության վրա:

Սակայն շատ կարևոր հանգամանք է , որ ներկայումս հանրակրթության ոլորտում իրականացվող վերափոխումների արդյունքում ՀՀ Կառավարության 2022 թ.-ի սեպտեմբերի 22-ի N1481-Ն որոշմամբ հաստատվեց <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը>> և դրա հիման վրա ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թ.-ի դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանի հավելվածով սահմանվեց <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները>>, որոնք հնարավորություն են տալու դպրոցին ,ըստ դասարանների թվաքանակի, ֆինանսավորում ստանալ պետական բյուջեից և ,հաշվի առնելով սակավաթիվ համակազմ ունեցող դպրոցի հնարավորությունները, սահմանված վարչատնտեսական,մանկավարժական, սպասարկման նախատեսված

հաստիքները, ինչպես նաև դպրոցի պահպանման՝գրասենյակային, տնտեսական ապրանքների և նյութերի,էներգետիկ և կոմունալ ,լաբորատոր ապրանքների և նյութերի ,հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների և այլ ծախսերը հնարավորություն կտան լուծելու ինչպես ուսումնադաստիարակչական,այնպես էլ ուսումնանյութական բազայի համալրման խնդիրները:

Դպրոցի ընդհանուր աշխատակազմը ՝ ըստ նոր հաստիքացուցակի, դրույքաչափերի և աշխատողների թվի

Պաշտոններ	Հաստիքային միավորը	Աշխատողների թիվը
Տնօրեն	1	թափուր
Տնօրենի տեղակալ	0.5	թափուր
Վարչատնտեսական մասի համակարգող	1	թափուր
Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող	0.5	թափուր
Գլխավոր հաշվապահ	0.5	1
Գնումների համակարգող	0.3	1
Ուսուցչի օգնական	0.5	1
Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող	0.5	թափուր
Գրադարանավար	0.5	1
Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ	0.5	1
Անձնակազմի կառավարման մասնագետ (գործավար)	0.5	1
Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ	0.5	1
Մասնագետ՝ ջեռուցման համակարգի սպասարկման	0.5	1
Պահակ	4	3 1 թափուր
Հավաքարար	1.75	2
Խոհարար	0.5	1
ՆԶՊ ուսուցիչ (զինղեկ),	0.5	1
քաղպաշտպանության շտաբի պետ	0.25	
Ուսուցիչներ	11	14
Նախակրթարանի	1	1

դաստիարակ		
Նախակրթարանի դաստիարակի օգնական	0.8	1

Ուսուցիչների որակական ցուցանիշները

Ցուցանիշ	Թվաքանակ	Նրանցից կանայք	Տոկոս
Բարձրագույն մանկավարժական որակավորմամբ ուսուցիչներ	14	11	100%
Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ	13	10	92,8%
Միջնակարգ մասնագիտական որակավորում ունեցող ուսուցիչներ	0	0	0%
Տարակարգ ունեցող ուսուցիչներ	0	0	0%
Գիտական կոչում ունեցող ուսուցիչներ	0	0	0%
Վերապատրաստում անցած ուսուցիչներ	12	12	85,7%
Հերթական ատեստավորված ուսուցիչներ	12	12	85,7%
Կամավոր ատեստավորված ուսուցիչներ	0	0	0%
Վերապատրաստող ուսուցիչներ	0	0	0%
ՏՀՏ կիրառող ուսուցիչներ	11	11	78.5%
Աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող ուսուցիչներ	11	11	78.5
Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանք հանձնարարող ուսուցիչներ	11	11	78.5%
Մինչև մեկ տարի ստաժ ունեցող ուսուցիչներ	1	0	7,1%
1-5 տարվա ստաժ ունեցող ուսուցիչներ	1	1	7,1%
5-10 տարվա ստաժ ունեցող	0	0	0%

ուսուցիչներ			
15 և ավելի տարվա ստաժ ունեցող ուսուցիչներ	12	10	85.7%
Ուսուցիչների միջին տարիքը	46	45	

Ընթացիկ և նախորդ ուստարիների դասարանների և սովորողների թիվը՝ ըստ կոմպլեկտավորված բազմահամակազմ դասարանների

2020-2021 ուստարի

Դասարաններ	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը			Որ դասարանիր հետ է երկկոմպլեկտ
		Ընդամենը	Տղա	Աղջիկ	
I	0.5	3	0	3	II
II	0.5	7	2	5	I
III	0.5	3	2	1	IV
IV	0.5	6	5	1	III
Ընդ. I-IV	2	19	9	10	
V	0.5	3	2	1	VI
VI	0.5	5	2	2	V
VII	0.5	6	5	1	VIII
VIII	0.5	4	0	4	VII
IX	1	5	2	3	
Ընդ.V-IX	3	23	12	11	
Ընդ. I-IX	5	42	21	21	

Նախակրթարան

Խմբերի թիվը	Սաների թիվը		
1	ընդամենը	տղա	աղջիկ
	7	5	2

2021-2022 ուստարի

Դասարաններ	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը			Որ դասարանիր հետ է երկկոմպլեկտ
		Ընդամենը	Տղա	Աղջիկ	
I	0.5	9	7	2	II
II	0.5	3	0	3	I
III	0.5	7	2	5	IV
IV	0.5	3	2	1	III
Ընդ. I-IV	2	22	11	11	
V	0.5	5	4	1	VI
VI	0.5	5	2	3	V
VII	0.5	5	3	2	VIII
VIII	0.5	5	4	1	VII
IX	1	4	0	4	
Ընդ.V-IX	3	24	13	11	
Ընդ. I-IX	5	46	24	22	

Նախակրթարան

Խմբերի թիվը	Սաների թիվը		
1	ընդամենը	տղա	աղջիկ
	4	2	2

2022-2023 ուստարի

Դասարաններ	Դասարանների թիվը	Աշակերտների թիվը			Որ դասարանիր հետ է երկկոմպլեկտ
		Ընդամենը	Տղա	Աղջիկ	
I	0.5	4	2	2	II
II	0.5	9	7	2	I
III	0.5	3	0	3	IV
IV	0.5	7	2	5	III
Ընդ. I-IV	2	23	11	12	
V	0.5	3	2	1	VI
VI	0.5	4	3	1	V

VII	0.5	3	2	1	VIII
VIII	0.5	4	2	2	VII
IX	1	6	5	1	
Ընդ.V-IX	3	20	14	6	
Ընդ. I-IX	5	43	25	18	

Նախակրթարան

Խմբերի թիվը	Սաների թիվը		
1	ընդամենը	տղա	աղջիկ
	3	2	1

2023-2024 ուստարի

Դասարաններ	Դասարաններ ի թիվը	Աշակերտների թիվը			Որ դասարանիր հետ է երկկոմպլեկտ
		Ընդամենը	Տղա	Աղջիկ	
I	0.5	1	1	0	III
II	1	4	2	2	
III	0.5	9	7	2	I
IV	1	3	0	3	
Ընդ. I-IV	3	17	10	7	
V	1	7	2	5	
VI	0.5	3	2	1	VIII
VII	1	5	4	1	
VIII	0.5	3	2	1	VI
IX	1	4	2	2	
Ընդ.V-IX	4	22	12	10	
Ընդ. I-IX	7	39	22	17	

Նախակրթարան

Խմբերի թիվը	Սաների թիվը		
1	ընդամենը	տղա	աղջիկ
	7	5	2

Ընթացիկ և նախորդ երկու ուստարիների ներքին արդյունավետության վերլուծություն

Ցուցանիշներ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխություններ (աճ կամ նվ.)
Սովորող/ուսուցիչ հարաբերակցությունը	3/1	3/1	3/1	կայուն
Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերակցությունը	7/3	7/3	7/3	կայուն
Դասարանների միջին խտությունը	5	4.6	4.6	նվազում
Մեկ սովորողի հաշվով դպրոցի տարեկան նախահաշիվը (տարեկան բյուջեի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	680.9	741,7	849	աճ
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	90.1	90.1	106.6	աճ
Ուսուցիչների միջին աշխատավարձը	90.3	90.3	110.2	աճ
Վարչական աշխատողների միջին աշխատավարձը	160.3	160.3	185.6	աճ

Ընթացիկ և նախորդ ուստարիների սովորողների թվաքանակի փոփոխությունների համեմատական վերլուծություն

Աշակերտների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի	Փոփոխություններ
I	3	9	4	1	նվազում
II	7	3	9	4	նվազում
III	3	7	3	9	աճ
IV	6	3	7	3	նվազում
V	3	5	3	7	աճ
VI	5	5	4	3	նվազում
VII	6	5	3	5	աճ
VIII	4	5	4	3	նվազում
IX	5	4	6	4	նվազում
Նախակրթարան	7	4	3	7	աճ

Ընդամենը	49	50	46	46	նվազում

Տվյալներ դպրոցի գրադարանի և դրա գործունեության մասին

Ցուցանիշներ	Տվյալներ
Գրադարանի տարածքը ք.մ.-ով	39.2
Ընթերցասրահի տարածքը ք.մ.-ով	20
Գրադարանում համակարգիչների թիվը	1
Գրադարանում ինտերնետին միացված համակարգիչների թիվը	1
Գրադարանում կան ընթերցասրահում նստատեղերի թիվը	15
Ֆոնդում առկա գրքերի թիվը առանց դասագրքերի	2827
Գեղարվեստական գրքերի թիվը	2478
Բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ	43
Ուսումնամեթոդական գրքեր	29
Ամսագրեր	320
Նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը	2021թ.
Գրադարանավարի կրթությունը	Բարձրագույն
Էլեկտրոնային ռեսուրսները	35
Գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրի առկայություն	չկա

Հաստատության խնդիրն է իր ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին համապատասխան ապահովել անվտանգ ուսումնական գործընթացի իրականացումը, սովորողների, աշխատակազմի անվտանգ և առողջ կենսագործունեություն, հետևաբար հաստատությունը պետք է գնահատի սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, անվտանգությանը սպառնացող առկա և հնարավոր վտանգները ,միաժամանակ քայլեր ձեռնարկի դրանք վերացնելու ուղղությամբ:

Դպրոցում պարբերաբար իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ միջոցառումներ,վարժանքներ, անձնակազմը և սովորողները տիրապետում են առկա անվտանգության միջոցների օգտագործման կանոններին:

Դպրոցը ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: Բոլոր հարկերում առկա են վերանորոգված սանհանգույցներ ,որոնք ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով,հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց:

Դպրոցում առկա է ճաշարան,որից <<Կայուն դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում>> օգտվում են նախակրթարանի սաները և տարրական դասարանների սովորողները,ճաշարանը և խոհանոցը համապատասխանում են սանիտարահիգիենիկ պայմաններին, փակցված են

առողջ սննդակարգի վերաբերյալ պաստառներ, ճաշարանը ապահովված է սառը և տաք հոսող ջրով:

Դպրոցում առկա չէ բուժկետ(թեև առկա են առաջին բժշկական օգնության համապատասխան պարագաներ),սովորողների և աշխատակիցների առաջին բուժօգնության տրամադրումը իրականացվում է համայնքի բուժկետում՝ համայնքը սպասարկող բուժքրոջ կողմից:

Առաջնային խնդիր է դպրոցում լուծել բուժկետի առկայության հարցը:

Անհրաժեշտ է արձանագրել,որ հաստատության շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման և ներառական հարմարեցումների:

Շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին,շենքը կայուն է այնպիսի վտանգների կամ դրանցից որևէ մեկի ազդեցության նկատմամբ,ինչպիսիք են ,օրինակ՝ սողանքները, հրդեհները, ցնցումները և այլն:

Դեռևս 2019 թվականի սեպտեմբերից <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից իրականացված <<Նախադպրոցական կրթության միկրոծրագրի>> դրամաշնորհի շրջանակներում հիմնվեց նախակրթարան դպրոցի առանձնացված հատվածում ՝ շուրջ 138.48ք.մ. տարածքում, ապահովվեց համապատասխան ենթակառուցվածքներով ,գույքով և սարքավորումներով,ուսումնամարզական պարագաներով,գեղարվեստական և ուսումնամեթոդական գրականությամբ, ուսուցանվող առարկայական ծրագրով և շաբաթական պարապմունքների ժամանակացույցով կազմակերպում է 5-6 տարեկան երեխաների կենսագործունեությունը:

Լինելով սակավաթիվ բնակչություն ունեցող բարձրլեռնային գյուղական բնակավայր՝ Նորաշեն գյուղում երբևէ չի գործել նախադպրոցական ուսումնական հաստատություն, որի հետևանքով նախադպրոցական տարիքի երեխաները չեն հաճախել մանկապարտեզ կամ նախակրթարան և նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի, զարգացման ու կրթության համար անհրաժեշտ միջավայրի բացակայությունը չի ապահովվել հատկապես ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացումը: Իրականացված ծրագրի արդյունքում ստեղծվել են բարենպաստ պայմաններ նախակրթարան հաճախող երեխաների ընդհանուր զարգացման, նախադպրոցական կրթությունից հանրակրթություն սահուն անցման համար,որը իր դրական ազդեցությունն է ունենում երեխաների նախապատրաստմանը տարրական դպրոցին ,և ,ըստ էության, նախակրթարանի գործունեությունը տարրական դպրոցում ուսումնական գործընթացի արդյունավետության հենասյունն է:

2. Իրավիճակի վերլուծությունը,ուժեղ և թույլ կողմերը

ա) Դպրոցի շենքային պայմանների վերլուծությունը և նպատակային գործածությունը

Ուժեղ կողմեր
1. Դպրոցի շենքը տիպային,երկհարկանի,երկաթ-բետոնե կոնստրուկցիաներով մեկ մասնաշենքից բաղկացած շինություն է,նախագծային հզորությունը նախատեսված է 192 աշակերտի համար, **2.** Զբաղեցնում է 1484.67 ք.մ. տարածք,որից շենքի 1-ին հարկը զբաղեցնում է 738.02ք.մ. տարածք,2-րդ հարկը՝ 746.61 ք.մ., **3**. ***1-ին հարկում տեղակայված են.*** - **չորս դասասենյակներ** (նախատեսված են տարրական դասարանների համար), - **տղաների և աղջիկների համար նախատեսված առանձնացված սանհանգույցներ** (վերանորոգված են և գտնվում են բարվոք վիճակում), - **ընդարձակ սպորտ դահլիճ**(իր երկու հանդերձարաններով՝ նախատեսված տղաների և աղջիկների համար) - **ճաշարան,խոհանոց,սննդի պահեստ**,որոնք հիմնովին վերանորոգվել են 2020 թվականին, ապահովված են համապատասխան ճաշարանային և խոհանոցային գույքով և ճաշարանի գործունեության պայմանները համապատասխանում են սանիտարահիգիենիկ նորմերին, ճաշարանի զբաղեցրած տարածքը՝ 92ք.մ.,որը միաժամանակ սնվելու հնարավորություն է տալիս շուրջ 45 սովորողի,ճաշարանում մշտապես առկա է սառը և տաք հոսող ջուր,առկա են սովորողների համար լվացարաններ,հիգիենայի պարագաներ,ձեռքերի էլեկտրական չորացնող սարքեր, - **առանձնացված նախակրթարան(138.48ք.մ.)**՝ իր խաղասենյակով,դասասենյակով, հանդերձարանով, սանհանգույցներով,միջանցքով ,ինչպես դպրոցի ներս,այնպես էլ դպրոցից դուրս առանձին մուտքերով և ելքերով,ունի թեքահարթակ,սանհանգույցները հարմարեցված են ԿԱՊԿՈՒ երեխաների համար,տեղադրված են բռնաձողեր,դռները լայն են՝ դուրս բացվող: Նախակրթարանը հիմնովին վերանորոգվել է 2019 թվականին ԿԾԿ ԾԻԳ պետական հիմնարկի կողմից տրամադրված դրամաշնորհային ծրագրի միջոցով,ամբողջապես համալրվել է համապատասխան գույքով,դիդակտիկ պարագաներով,սմարթ հեռուստացույցով,սպորտային և այլ խաղամիջոցներով, - **պահակակետ,** - **արհեստանոց:** **4.** ***2-րդ հարկում տեղակայված են.*** - **հինգ դասասենյակներ** (3-ը վերանորոգված), - **համակարգչային դասասենյակ**, - **ՆԶՊ դասասենյակ և զենքի պահեստ**, - **բնագիտական առարկաների լաբորատորիա**, - **հանդիսությունների դահլիճ** (վերանորոգված է), - **գրադարան և ընթերցասրահ**, - **ուսուցչանոց և տնօրենի աշխատասենյակ**, - **մեկ սանհանգույց:** **5**. Նկուղային հարկում առկա է ապաստարան 730 ք.մ. տարածքով, գտնվում է բարվոք վիճակում,ապահովված է լուսավորությամբ,համապատասխան գույքով,

6. Դպրոցի տարածքը կանաչապատ է,ցանկապատված,շրջապատված է դեկորատիվ և պտղատու ծառերով, առկա է մարզահրապարակ,ֆուտբոլի դաշտ,
7. Նոր կառուցված ,բայց չշահագործված կաթսայատուն,որը կարող է դպրոցը ամբողջապես ապահովել լոկալ ջեռուցմամբ,
8. Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով,մշտական գազամատակարարմամբ, էլեկտրամատակարարմամբ,ունի անհատական կոյուղացում,մշտական ինտերնետ կապ,
9. Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան:

Թույլ կողմեր

1. Թեև դպրոցի առանձին ենթակառուցվածքները վերանորոգված են ,սակայն դպրոցը մասնակի վերանորոգման կարիք ունի,մասնավորապես՝ ջերմակայունության ապահովման գլխավոր խնդիրներից մեկը հին պատուհանների և դպրոցի հետնամուտքի դռան փոխարինումն է: Քանի որ կաթսայատունը աշխատում է հեղուկ վառելանյութով և դպրոցը չունի համապատասխան ֆինանսական միջոցներ ,ջեռուցումն իրականացվում է անհատական գազի վառարանների միջոցով,հետևաբար դպրոցում լոկալ ջեռուցում չի իրականացվում ,անհրաժեշտ է կաթսայատան դիզելային վառարանները փոխարինել գազային երկու կաթսաներով,որոնց շուկայական արժեքը միջին հաշվարկներով կազմում է շուրջ 5 մլն ՀՀ դրամ:
Լոկալ ջեռուցման բացակայության հետևանքով ձմռան ամիսներին գլխավորապես չեն ջեռուցվում դպրոցի սպորտ դահլիճը ,հանդիսությունների դահլիճը,սանհանգույցները, գրադարանը և ընթերցասրահը, լաբորատորիան,միջանցքները:
Թեև տանիքը վերջին տարիների ընթացքում մասնակի վերանորոգվել է,սակայն կարիք կա ազբոշիֆերի փոխարինում թիթեղյա տանիքով:
2. Դպրոցում առկա չէ բուժկետ և առաջին բուժօգնության տրամադրման հնարավորությունները սահմանափակ են և դպրոցի սովորողների և անձնակազմի առաջին բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է համայնքի առաջնային օգնության բժշկական սպասարկման ամբուլատորիայի կողմից,համայնքի բուժքրոջ միջոցով:
3. Հրդեհաազդարարման ինքնաշխատ և ներքին հրդեհաշիջման համակարգի բացակայություն:
4. Վերանորոգման կարիք ունեն մարզադահլիճի հատակը,պատուհանների ու դռան փոխարինում նորով:
5. Առաջին հարկում գործող երկու սանհանգույցները ԿԱՊԿՈՒ երեխաների համար հարմարեցված չեն:
6. Երկրորդ հարկում ԿԱՊԿՈՒ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար համապատասխան հարմարեցումների բացակայություն:
7. Շենքի առաջնային մուտքի մոտ թեքահարթակի բացակայություն:
8. Դպրոցում չեն գործում օդափոխության համակարգեր,ներքին հեռախոսակապ,վթարային լուսավորության համակարգ:
9. Ապաստարանում օդափոխության,սանհանգույցի բացակայություն:

բ) Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Դպրոցական շենքի նպատակահարմար օգտագործման հետ է կապվում դասասենյակների և կաբինետների կահավորման հարցը,նյութատեխնիկական միջոցներից օգտվելու հնարավորությունը: Ուսումնադիտողական և տեխնիկական միջոցները, նյութատեխնիկական բազայի տարրերը օգտագործվում են մանկավարժական պրոցեսի կազմակերպման մեջ և հանդես են գալիս որպես այդ պրոցեսի նյութական հիմք:

Ժամանակակից պայմաններում առանց ուսուցման այդպիսի հիմքի չի կարելի պատկերացնել ուսուցման գիտական կազմակերպումը,այդ պատճառով՝ դպրոցի կառավարման խնդիրն է ոչ միայն ընդլայնել ուսումնանյութական,տեխնիկական միջոցների օգտագործումը մանկավարժական պրոցեսում,այլև բարձրացնել դրա արդյունավետության մակարդակը,հետևաբար անհրաժեշտ է ապահովել ուսուցման պրոցեսի այնպիսի կազմակերպումը,որը հիմնված է ուսուցման նյութատեխնիկական միջոցների լայն օգտագործման վրա:

Դպրոցի նյութատեխնիկական բազայի դերը կրթադաստիարակչական գործունեության արդյունավետության բարձրացման գործում ունի կարևոր նշանակություն,ուստի նրա ամրապնդումը ,պահպանումը և օգտագործումը կազմում է դպրոցի զարգացման կարևոր բաղադրամասը:

Ուժեղ կողմեր
-Վերջին տարիների ընթացքում <<Հայ-դպրոց >> բարեգործական հիմնադրամի աջակցությամբ բոլոր դասասենյակները ապահովվել են աշակերտական նոր սեղաններով և աթոռներով,գրատախտակներով,պահարաններով: <<Հայ-դպրոց >> բարեգործական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում նախատեսվում էր 2024 թվականի ընթացքում ամբողջապես նորացնել աշակերտական գույքը: -2023 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը նվիրաբերության կարգով դպրոցին հատկացրել է 18 աշակերտական սեղաններ, 36 աթոռներ,ուսուցչի սեղան և աթոռ,պահարան,գրատախտակ,որի արդյունքում ամբողջապես կոմպլեկտավորվել է մեկ վերանորոգված դասասենյակ: -Նախակրթարանի հիմնադրման արդյունքում ամբողջապես նախակրթարանը ապահովվել է համապատասխան գույքով,սարքավորումներով,ուսումնամարզական պարագաներով, գեղարվեստական և ուսումնամեթոդական գրականությամբ: -Դպրոցի գրադարանային ֆոնդում առկա գեղարվեստական գրականությունը,բառարանները, ատլասները,հանրագիտարանները, ամսագրերը, էլեկտրոնային ռեսուրսները,ինչպես նաև վերջին տարիների ընթացքում տարբեր բարերարների կողմից նվիրված ժամանակակից գրականության առկայությունը հնարավորություն է տալիս սովորողներին և աշխատակազմին օգտվելու գրադարանային ֆոնդից : -Վերջին տարիների ընթացքում,ինչպես դպրոցի միջոցներով,այնպես էլ նվիրատվության կարգով ձեռք են բերվել աշխարհագրական և պատմական քարտեզներ,ատլասներ, գլոբուսներ, այլ առարկաների ուսուցման համար նախատեսված դիդակտիկ ցուցադրական պաստառներ: -ՆԶՊ դասասենյակը կահավորված է համապատասխան դիդակտիկ նյութերով, զինապահեստում առկա են ինքնաձիգ և օդամղիչ հրացան և այլ սարքավորումներ: -Մարզադահլիճը 2022 թվականի ընթացքում դպրոցի միջոցների հաշվին համալրվել է շուրջ

400.000 ՀՀ դրամ արժողությամբ սպորտային գույքով,այդ թվում նաև՝ շախմատի դասերի անցկացման համար համապատասխան գույքով :
-2018-2020 թվականների ընթացքում դպրոցի միջոցների հաշվին ուսուցչանոցի համար ձեռք են բերվել սեղաններ,աթոռներ:
-2018 -2020 թվականների ընթացքում համակարգչային դասասենյակի համար ձեռք են բերվել 1 համակարգիչ ,1 դյուրակիր համակարգիչ, պրոյեկտոր:
-2020-2021 թվականների ընթացքում ՀՊԾ-ի աջակցությամբ դպրոցին նվիրաբերվել է ճաշարանային և խոհանոցային գույք՝ սառնարան,գազօջախ,չժանգոտվող մետաղյա դարակաշարեր,էլեկտրոնային կշեռք,էլեկտրական ջրատաքացուցիչ,լվացարաններ:

Թույլ կողմեր

-Համակարգչային դասասենյակում առկա է նոր սերնդի համակարգիչների պակաս և էլեկտրոնային գրատախտակի բացակայություն:
-Լաբորատոր գույքը ,նյութերը, սարքավորումները հնացած են և մեծամասամբ անհնարին են դարձնում դրանց օգտագործումը:
-Արհեստանոցում առկա մետաղամշակման,փայտամշակման,խառատային,ֆրեզերային հաստոցները գտնվում են ոչ աշխատանքային վիճակում և ծառայում են միայն որպես ցուցադրանմուշներ և տեխնոլոգիա առարկայի դասաժամերին դրանց օգտագործումը հնարավոր չէ:
-Դպրոցում առկա կարի մեքենաների անսարքությունը ևս անհնարին է դարձնում տեխնոլոգիա առարկայի դասաժամերին դրանց օգտագործումը

Անվանումը	Քանակը
դաշնամուր<<Կոմիտաս>>	1
սառնարան <<Պրիլավկա>>	1
սառնարան <<Աբշերոն>>	1
հաստոց ֆուգանող	1
էլ. Սրաքար	1
հաստոց խառատային	2
հաստոց ֆրեզերային	1
էլ. Պլիտա	1
Գրամեքենա	1
հաստոց շաղափող	1
ջրատաքացուցիչ ,,արիստոն,,	1
էլ չոացուցիչ ձեռքերի համար	3
էլ.գազօջախ	1
Հեռուստացույց	1
Տեսաձայնարկիչ	1
Բազմոց	2
գրասեղան 2 տումբով	4
պահարան գրքերի	3
նկար Անդրանիկ	1

Ամբիոն	1
հաստոց փայտամշակ.խառատ	1
ջրի բակ	2
սեղան ճաշարանի	10
աթոռ ճաշարանի	80
հացի պահարան	1
երկաթյա պահարան	1
գրաս.սեղան 2 տումբ	1
աշ.սեղան.նստարան	46
Գրապահարան	3
Գրատախտակ	4
ուսուցչի աթոռ փափուկ	10
Բազկաթոռ	1
շվեդական պատ	3
Տակդիր	1
գրասեղան 1 տումբ	4
ուսուցչի սեղան	15
Գրապահարան	15
կախիչ երկաթյա	5
կախիչ հայելիով	1
կախիչ հայելիով	2
աշ.սեղան-նստարան	10
երկաթյա պահարան	1
աթոռ կ/փափուկ	14
Գրադարակներ	15
Գրատախտակ	18
կարի մեքենա ոտքի	1
փայտամշ. Դազգահ	6
շախմատի սեղան նստ.	6
ուսուցչական աթոռներ	15
աշխատանքային սեղան	3
աշխ.սեղան ընդիմադիրով	1
Սառնարան	1
մետաղյա դարակաշար 1200*500	2
չժանգոտվող մետաղյա սեղան	1

տպիչ Canon 4410sin 1	1
համակարգիչ HP Compag8200	1
բազմաֆունկցիոնալ տպիչ HP	1
հոսանքի անխափան սն.սարք	1
Համակարգիչ	1
դյուրակիր համակարգիչ	1
պրոյեկտոր OPTOMA DS 318c	1
ջրատաքացուցիչ 80լ	1
վառարան համակցված	1
սառնարան 271լ ROZIS MIR	1

պլանշետ Irbis Tz897.8.0	1
նժույգ մարմնամարզ.	1
սեղան թենիս	2
Զուգափայտ	1
հեռուստացույց AOC-43-S-50-85/60\S	1
հեռուստացույցի տակդիր HDL-117B-1	1
փոշեկուլ GORENGIE-VC 1411,1400վտ	1
մանկական աթոռներ	34
Գրապահարան	2
հագուստի պահարան 4 դռնանի	7
մանկավարժի աթոռ	1
խաղալիքի պահարան	2
մանկավարժի սեղան	1
բազմոց մանկական	1
Գորգ	1
Գրատախտակ	1
սեղան մանկական	10
Պտտաձող	1
մարմնամարզական պատ	2
Ներքնակներ	2
սետկա բասկետբոլի	1
մատրաս մարմնամարզական	2
օղակ բասկետբոլի	2
Նռնակ	5
Այծ	1
մանկական սպորտ ժիլետ	8
Կոն	5
Զագար	10
Օղակ	2
<<ֆուտբոլ>>ուսումնամեթոդ.ձեռնարկ	5
ներքնակ մարմնամարզ.2*1*5սմ	2
օղակ ալյումինե 90 սմ տրամագծով	4
Ցատկապարան	5
մագլցման պարան	1
գուրզեր /բուլավար/	8
գնդակ բ/բոլի N 7	6
գնդակ վ/բոլի N 4	7
գնդակ ֆ/բոլի N 4	6
գնդակ ֆ/բոլի N 5	7
էստաֆետի փայտիկներ	6
Վայրկյանաչափ	2
Սուլիչ	2
փոքր գնդակներ 150 գրամ	6
շախմատ մագնիսով	6
սեղանի թենիսի գնդակ	30
սեղանի թենիսի ռակետ	4
վոլեյբոլի ցանց	1
բասկետբոլի ցանց	1

Բաղմինտոն	4
կցագունդ 1,5 կգ	2
կցագունդ 2 կգ	2
կցագունդ 3 կգ	2
կցագունդ 7,5 կգ	2
Էսպանդեր զսպանակով ձեռքի	5
Ուժաչափ	4
կցագունդ 5 կգ. զույգով 10 կգ	1
Հովհաննես Թումանյան Հեքիաթներ	1
Հովհաննես Թումանյան<<Գիքորը>>	1
Հ. Թումանյան<<Գնդլիկ բոքոնիկ>>	1
Հովհաննես Թումանյան<<Անբան Հուռին	1
Հ.Թումանյան<<Ոսկու կարասը>>	1
Հ. Թումանյան<<Կիկոսի մահը>>	1
Հ. Թումանյան<<Քաջ Նազարը>>	1
Հ.Թումանյան<<Բարեկենդանը	1
Թումանյան<<Տերն ու ծառան>>	1
<<Մկների ժողովը>>Աթաբեկ Խնկոյան>>	1
Աթաբեկ Խնկոյան առակներ	1
Մխիթար Գոշ,Վարդան Այգեկցի առակն.	1
Մանկ.բանաստ-ղծ.հանելուկ.տարվա եղ.	1
Ուսուցող. քարտեր գործողություններ	1
Ուսուցողական քարտեր թվեր	1
Ուսուցողական քարտեր ծաղիկներ	1
Ուսուցող.քարտեր բնության երևույթներ	1
Ուսուցող. քարտեր երկրաչ. Մարմիններ	1
Ուսուցողական քարտեր հագուստ	1
Ուսուցող. քարտեր փոխադրամիջոցներ	1
Ուսուցող. քարտեր վայրի կենդանիների	1
Ուս. Քարտ. սան հանգույց և հիգ. Պար.	1
Ուսուցող. քարտեր երաժշտ. Գործիքներ	1
Ուսուցող. քարտեր սովորիր հաշվել	1
Ուսուցող. քարտեր հայերենի տառերը	1
Պաստառ տառերի պատկերներով	1
Պաստառ թվերի պատկերներով	1
մանկական խոսող այբուբեն	1
Մանկ. խոսող պաստառ հաշվ. Միասին	1
հայերեն տառեր	1
Թվեր	1
Կառուցող. խաղ-ուսուցող. Փայտիկներ	2
Կառուցողական խաղ գորգ	1
Կառուց. խաղ երկրաչ.մարմին.տեսքով,	1
Կառուցող. խաղ փայտ.խորանարդիկներ	1
Կառուցողական խաղ գնացք	1

Կառուցողական խաղ ռուբիկ –կուբիկ	1
Կառուցողական խաղ լեգո մեծ	1
Կառուցողական խաղ լեգո փոքր	1
Կառուցողական խաղ բուրգ	2
Դիդակտիկ խաղ մասնագիտություններ	1
Դիդակտիկ խաղ կենդանիներ	1
Դիդակտիկ խաղ Հայաստանի քարտեզ	1
Դիդակտիկ խաղ ժամացույց	1
Սեղանի խաղ մրգեր և բանջարեղեն	1
Սեղանի խաղ դոմինո խաղալիքներ	1
Դիդ. խաղ բեռնատար գյուղ.գործիքներ	1
Դիդ. խաղ աշխատանքային գործիքներ	1
Դիդակտիկ խաղ բժշկական գործիքներ	1
Դիդակտիկ խաղ ավտոբուս	1
Խաղալիք ավտոմեքենա	1
Խաղալիք նավակ	1
Խաղալիք ավտոմեք. Հավաքածու	1
Տիկնիկ	1
Տիկնիկի սայլակ	1
Գնդակ	7
օղակ պլաստմասե	5
Ցատկապարան	5
Բոուլինգ	2
Բազմինտոն	1
Շախմատ	1
Շաշկի	1
Խաղ շառով	1
Խաղ գոլֆ	1
Բազկաթոռ	1
Բարձրախոս	2
սեղան ուսանողական	5
Գրատախտակ	2
ՆԶՊ-ի պաստառների կոմպլեկտ	1
Շախմատ	12
անգլ.լ. համակարգ.ծրագրի 1 փաթեթ	1
ռ.լ. համակարգ.ծրագրի 1 փաթեթ	1
խաղում ենք մաթ. համ.ծր. 1 փաթեթ	1
Հակագազ	30
շախմատի ցուց.տախտակ խաղաք-ով	1
շախմատի ժամացույց	2
շախմատի ուսուցչի ձեռնարկ	2
շախմատի ուսուցչի ձեռնարկ	1
օդամղիչ հրացան	1
գլոբուս փոքր	2
գլոբուս մեծ	2
կշեռք էլեկտրական	1

էլ,ջեռուցիչ 905 TB-6 1500W	1
էլ,ջեռուցիչ LUXELLX -2830	1
WI FI Ռոուտեր TP-LINK	1
համ. բարձրախոս Kinsoli AC 90-01	1
աուդիո նվագարկիչ-Sonashi SHS 21-02	1

գ) Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Որպես պետական հանրակրթական ուսումնական հաստատություն `դպրոցի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և պետական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Դպրոցի կանոնադրության համաձայն՝ դպրոցի կառավարման մարմիններն են.

1. **Հիմնադիրը,**
2. **ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը,**
3. **Տարածքային կառավարման մարմինը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը,**
4. **Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը (միացյալ խորհուրդ),**
5. **Գործադիր մարմինը (այսուհետ՝ դպրոցի կառավարման նոր համակարգին անցնելուց հետո տնօրենը և վարչատնտեսական մասին համակարգողը):**

Հիմնադիրն ունի դպրոցի գործունեության և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնականապես լուծելու իրավունք,բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Լիազորված մարմինը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, դպրոցի գործունեության վերահսկողությունը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

<<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքում 09.02.22 ՀՕ-35-Ն օրենքով և <<ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությունում 02.02.23 թ. N137-Ն որոշմամբ կատարված փոփոխություններով այլևս կառավարման նոր համակարգին անցած դպրոցների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնելու են տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը,որոնց գործունեությունը և լիազորությունները սահմանված են օրենսդրությամբ և հաստատության կանոնադրությամբ:

Ընդ որում՝ դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի համակարգումն ու մեթոդական ղեկավարումն իրականացնում է տնօրենը,իսկ վարչատնտեսական գործընթացի կառավարումն՝ վարչատնտեսական համակարգողը կամ լիազոր մարմնի պատվիրակած իրավաբանական անձը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվել են և գործում են խորհրդակցական մարմիններ՝

-Մանկավարժական խորհուրդ

-Ծնողական խորհուրդ

-Աշակերտական խորհուրդ

-Առարկայական մեթոդական միավորումներ

Դպրոցի խորհրդակցական մարմինները գործում են դպրոցի կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում:

Թեև դպրոցի կանոնադրությամբ կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական մարմիններ, բայց այդպիսիք՝ հոգաբարձուների կամ շրջանավարտների խորհուրդներ չեն գործում:

Անհրաժեշտ է նպաստել խորհրդի և խորհրդակցական մարմինների աշխատանքի ճիշտ կազմակերպմանը: Որպեսզի խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետությունը բարձրանա՝ պետք է նախապես ուսումնասիրել և գնահատել դրանցից յուրաքանչյուրի աշխատանքի արդյունավետությունը , ստեղծել փոխադարձ վստահության մթնոլորտ , նրանց մշտապես ծանոթացնել հանրակրթության բնագավառի օրենսդրությանը , օրենսդրական փոփոխություններին,համագործակցության մթնոլորտում կազմակերպել քննարկումներ,լսել նրանց դիտարկումները,դիրքորոշումները, առաջարկները և մասնակցային քննարկումների արդյունքում կայացնել համատեղ որոշումներ՝ ապահովելով հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը և մասնակցությունը կրթական և կառավարման գործընթացներում:

Հաստատության կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ

(Խորհրդի և տնօրենի համագործակցության վերլուծությունը)

Մինչև 2024 թվականի օգոստոսի 19-ը գործել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի թիվ 245-Ա որոշմամբ հաստատված Գեղարքունիքի մարզի Նորաշեն գյուղի հիմնական դպրոց և Չկալովկա գյուղի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ների միացյալ խորհուրդը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 19-ի թիվ 443-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների միասնական խորհուրդների կազմը ,որի համաձայն՝ Սևանի N 4 հիմնական դպրոցի ,Նորաշեն գյուղի հիմնական դպրոցի , Չկալովկա գյուղի միջնակարգ և Լճաշեն գյուղի միջնակարգ դպրոցների կոլեգիալ կառավարումն իրականացնելու համար ստեղծվել է միասնական խորհուրդ:

Դպրոցի խորհրդի փաստաթղթերի և նիստերի արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս,որ միացյալ խորհուրդը գործել է դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակներում: Հաստատված աշխատակարգի համաձայն՝ միացյալ խորհրդի նախագահը խորհրդի աշխատանքները կազմակերպել է սահմանված ժամկետներում: Դպրոցի պաշտոնական կայքում սահմանված ժամկետներում հրապարակվել են խորհրդի նիստերի արձանագրությունները:

Խորհրդի նիստերի օրակարգային քննարկման հարցերը վերաբերում են դպրոցի գործունեության գրեթե բոլոր ուղղություններին ՝ դպրոցի զարգացման ծրագրի ընթացիկ կատարմանը, ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացման վերահսկողությանը , ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությանը:

Քննարկել և հաստատել է դպրոցի ներքին կարգապահական կանոնները, դպրոցի կազմակերպական կառուցվածքը,ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը և դրանում կատարված փոփոխությունները: Քննարկվել է յուրաքանչյուր ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարման կիսամյակային և տարեկան արդյունքները,որոնք վերաբերվում են կրթության որակին և բովանդակությանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավմանը , սովորողների և աշխատողների առողջության պահպանմանը և անվտանգության ապահովմանը ,դպրոցի ներքին գնահատման տարեկան արդյունքներին, քննարկել և հավանության է արժանացրել ամենամյա ծախսերի նախահաշվի , հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակների, դպրոցի ֆինանսատնտեսական ՝ եռամսյակային,կիսամյակային,տարեկան հաշվետվությունները:

Խորհուրդ-տնօրեն արդյունավետ համագործակցության արդյունքում որոշումները կայացվեն կազմակերպված ակտիվ քննարկումների, կողմերի ներկայացված դիտարկումների և դիրքորոշումների շրջանակներում՝ ի շահ կրթական գործընթացի:

Տնօրինության կողմից կազմակերպված հանդիպումների ժամանակ միացյալ խորհրդի անդամները մշտապես իրազեկվել են ոչ միայն դպրոցի ամենօրյա գործունեությանը,այլև հանրակրթության բնագավառի օրենսդրական փոփոխություններին:

Շատ կարևոր է ,որ խորհրդի յուրաքանչյուր անդամ իր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվի էթիկական նորմերով , դրսևորի անաչառ և անկողմնակալ վերաբերմունք, որոշումներ ընդունելիս գործի ազնվորեն, ցուցաբերի քաղաքավարություն, ողջամտություն:

Խորհուրդ-տնօրեն արդյունավետ համագործակցության միջոցով պետք է նպաստել դպրոցի գործունեության հետագա բարելավմանը՝ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատմանը, հաստատության հաշվետվողականության մեխանիզմների բարելավմանը և գործունեության թափանցիկության ապահովմանը, հաստատության զարգացման ուղղությունների նախանշման և զարգացման ծրագրի կատարմանը աջակցելուն, զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը վերահսկելուն, ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը , ուսումնադաստիարակչական, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացմանը, ներքին և արտաքին գնահատման արդյունքները քննարկելու, առաջարկություններ ներկայացնելու դպրոցի գործունեության բնագավառին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան:

Դպրոցի մանկավարժական խորհրդի գործունեությունը

Ուսումնական հաստատության գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է մանկավարժական խորհրդի ակտիվ դերակատարմամբ: Մանկավարժական խորհրդի արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խորհուրդը մշտապես տնօրենի ղեկավարությամբ իր գործունեությունը կազմակերպել է դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների, հանրակրթության մասին օրենսդրության , նորմատիվ իրավական ակտերի, վերադաս մարմինների հանձնարարականների հիման վրա:

Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվել են բաց սկզբունքայնությամբ , սահմանված ժամկետներում,խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվել են աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ,ծնողներ, գումարվել են արտահերթ նիստեր: Նիստերը կայացել են իրավազորության հիմքով , որոշումներն ընդունվել են ձայների մեծամասնությամբ:

Մանկավարժական խորհրդի քննարկման հիմնական օրակարգային հարցերն են եղել դասարանների կազմավորման, հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման, նախադպրոցական, հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման խնդիրները, սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան ՝ սովորողների արտադասարանական և արտադպրոցական գործունեությունը կազմակերպելու ,առողջ ապրելակերպի հմտությունների ձևավորման և զարգացման, ուսումնական նախագծերի իրականացման, հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու դեպքում սովորողներին կրթական աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվող երկարօրյա ուսուցման կազմակերպման, սովորողների գնահատման չափանիշների ներդրման և կիրառման,սովորողների ՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման , ուսումնադաստիարակչական աշխատանքի կատարելագործման , մեթոդական միավորումների աշխատանքի

արդյունավետության բարձրացման, դասալսումների արդյունքների,գրավոր աշխատանքների արդյունքների, սովորողների առաջադիմության, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան և ներդպրոցական վերահսկողության պլանների , միջոցառումների , ուսումնական առարկների ծրագրերի, թեմատիկ պլանների,ուսումնական գործընթացի կատարման համար պահանջվող կարիքների, մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերաբերյալ և այլ հարցեր:

Դպրոցի տնօրենի կողմից մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր հաջորդ նիստում զեկուցվել է նախորդ նիստի որոշումների կատարման արդյունքների մասին:

Տեղեկություններ մանկավարժական խորհրդի կազմի մասին.

N	Անունը, ազգանունը	Ուսումնական հաստատությունը	Որակավորումը	Դասավանդած առարկան	Ստաժը
1.	Լեյլի Խաչատրյան	Երևանի Հյուսիսային համալսարան	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա	Մայրենի, երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա	23
2.	Աիդա Վարդանյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	Աշխարհագրության ուսուցիչ	Աշխարհագրության	2
3.	Էլինա Ալոյան	Երևանի Մ. Խորենացու համալսարան	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա	Ես և շրջակա աշխարհը, շախմատ, կերպարվեստ	34
4.	Արինա Միրաքյան	Գավառի պետական համալսարան	Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա	Մայրենի, երաժշտություն, կերպարվեստ, տեխնոլոգիա, մաթեմատիկա	28
5.	Գոռ Մանուկյան	Գավառի պետական համալսարան	Պատմության ուսուցիչ	Պատմություն, հասարակագիտություն	1
6.	Թեհմինե Հակոբյան	Գավառի պետական համալսարան	Բանասեր,հայոց լեզվի և գրականության ուսուցիչ	Հայոց լեզու և գրականություն, իմ հայրենիք	24
7.	Սիրարփի	Գավառի պետական	Բանասեր, հայոց	Հայոց լեզու և	15

	Սարիբեկյան	համալսարան	լեզվի և գրականության ուսուցիչ	գրականություն, ՀԵՊ,տեխնոլոգիա, երաժշտություն, կերպարվեստ	
8.	Արմինե Մկրտչյան	Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ	Էլեկտր. տեխ. ինժեներ	Մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա	27
9.	Նելլի Գալստյան	Երևանի Հյուսիսային համալսարան	Ռուսաց լեզվի և գրականության ուսուցիչ	Ռուսաց լեզու	30
10	Կարինե Խառատյան	Երևանի Վ. Բրյուսովի անվ. ռուսաց և օտար լեզ.պետ.մանկավարժ. ինստիտուտ	Գերմաներեն և անգլերեն լեզվի ուսուցիչ	Գերմաներեն	22
11	Ավետիք Մալխասյան	Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտ	Ֆիզկուլտուրայի և սպորտի մանկավարժ բակալավր	ֆիզկուլտուրա	27
12	Գայանե Ավագյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	Կենսաբանության և քիմիայի ուսուցիչ	Քիմիա, կենսաբանություն, բնագիտություն, բնություն	22
13	Հասմիկ Ավետիսյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	Մաթեմատիկայի ուսուցիչ	Մաթեմատիկա, հանրահաշիվ, երկրաչափություն	15
14	Գրիշա Շահբազյան	Ֆիզիկական կուլտուրայի Հայկական պետական ինստիտուտ	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	ՆԶՊ	20
15	Մարիամ Գասպարյան	Գավառի պետական համալսարան	Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակ	Դաստիարակ	4
16	Անի Սմբատյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	Հատուկ մանկավարժ, լոգոպեդ	Դաստիարակի օգնական	0

17	Մարի Միրաքյան	Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան	Հատուկ հոգեբանություն	Ուսուցչի օգնական	3

Դպրոցի ծնողական խորհրդի գործունեությունը

Կրթական գործընթացի կարևոր գործոններից մեկը՝ ծնողական խորհրդի ակտիվ դերակատարությունն է,երբ ծնողները և դպրոցը աշխատում են համագործակցելով երեխայի կարիքին համապատասխան, նամանավանդ ներառական կրթության համակարգում, արդյունքում շահում է երեխան. այդ նախադրյալներն են նպաստում ուսման գործընթացի և այդ համագործակցության արդյունքում շահում են ոչ միայն երեխան ու ծնողը,այլ նաև դպրոցը:

Երբ ծնողի ներգրավվածությունը երեխայի կրթության կազմակերպման գործընթացում հասնում է նվազագույն մակարդակի, ընտանիքը դուրս է մղվում երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից,իսկ ծնողական խորհուրդը այն օղակն է,որը պետք է ակտիվորոն կազմակերպի և ամրապնդի **ուսուցիչ-ծնող-դպրոց** համագործակցությունը:

Ծնողական խորհրդի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծնողական խորհուրդը ձևավորվել է դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում և իր աշխատանքները կազմակերպել է օրենսդրության շրջանակներում: Ծնողական խորհրդի նախագահը՝որպես մանկավարժական խորհրդի անդամ, մասնակցել է այնպիսի հարցերի քննարկմանը, ինչպիսիք են սովորողների ուսումնառության որակի և առաջադիմության, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների, սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպման, սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, սոցիալապես անապահով երեխաներին օժանդակություն ցույց տալու հարցերի քննարկմանը և որոշումների կայացմանը:

Դպրոցի ծնողական խորհուրդը բաղկացած է 9 անդամներից (դասարանական ծնողական խորհուրդների նախագահներից),որոնցից 5-ն ունեն բարձրագույն, 4-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն,իսկ կառավարման խորհրդում ծնողական խորհրդի ներկայացուցիչները ակտիվորեն ներկայացնում են սովորողների և ծնողների,համայնքի կարիքներն ու շահերը:

Տնօրենության և ծնողական խորհրդի կողմից մշտապես հրավիրվել են համադպրոցական ծնողական ժողովներ,որոնց ընթացքում քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին:

Դեռևս 2005 թվականի մայիսից կրթական բարեփոխումներին օժանդակելու, դպրոցում առկա խնդիրների լուծման ուղիներ գտնելու, ծնող-դպրոց համագործակցության ապահովման, դպրոցի նյութատեխնիկական բազայի ամրապնդման և զարգացման, կրթական,սոցիալական,մշակութային և մանկապատանեկան հանրօգուտ ծրագրերի իրականացման նպատակով, օրենսդրությամբ սահմանված կարգով , ծնողական խորհուրդը, համագործակցելով <<Դպրոցական Ծնողխորհուրդների Անդամների Ազգային Ասոցիացիա>> կրթական ոլորտի զարգացմանն աջակցող հասարակական կազմակերպության հետ,ստեղծել է <<Նորաշենի Դպրոցական Ծնողխորհուրդ>> կրթական համակարգի զարգացման աջակցության հասարակական կազմակերպությունը,որի կանոնադրությունըհիմնադիրների ժողովի որոշմամբ հաստատվել է 2005 թվականի մայիսի 20-ին,գրանցվել է Պետռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2005 թվականի հունիսի 10-ին (գրանցման համարը՝ 211.171.03373, իրավաբանական անձի տեսակը՝ ոչ առևտրային, գործունեության ժամկետը՝ անժամկետ):

2005-2007 թվականների ընթացքում ծնողական խորհրդի ակտիվ դերակատարության արդյունքում <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության դպրոցի տնօրինության և դպրոցական ծնողխորհրդի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի արդյունքում իրականացվել են մի շարք ծրագրեր՝ վերանորոգվել է դպրոցի ճաշարանը, մարզադահլիճը, համակարգչային լսարանը,սանհանգույցները,ձեռք են բերվել համակարգիչներ և այլ համակարգչային տեխնիկա: Անվճար հիմունքներով, դպրոցի աշխատակազմի և սովորողների, համայնքի բնակիչների համար , ստեղծված համակարգչային ուսումնական կենտրոնի միջոցով իրականացվել են դասընթացներ,որի արդյունքում դպրոցում ստեղծվել են նպաստավոր պայմաններ ՏՀՏ-ների կիրառման համար,վերանորոգված ճաշարանում այդ տարիների ընթացքում , դարձյալ համագործակցելով <<Հայկական Կարիտաս>> բարեսիրական հասարակական կազմակերպության հետ, դպրոցի տարրական դասարանների սովորողներին բարեգործական հիմունքներով տրամադրվել է փաթեթավորված սնունդ:

Ցանկալի ենք համարում, հնարավորության դեպքում, օրենսդրության սահմաններում գործարկել վերոհիշյալ <<Նորաշենի Դպրոցական Ծնողխորհուրդ>> հասարակական կազմակերպության գործունեությունը,որը կարող է իր նպաստը բերել դպրոցի նպատակների իրականացմանը:



ՆՈՐԱՇԵՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ
ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Օժանդակել կրթական բարեփոխումներին՝ նպատակ ունենալով ապահովել խոր հանրակրթական գիտելիքներ ունեցող, ժամանակակից մարտահրավերների հաղթահարման ունակ հայրենասեր քաղաքացիների պատրաստմանն ուղղված կրթական համակարգ: Բացահայտել դպրոցում առկա խնդիրները, որոնել դրանց լուծման ուղիները:

ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Աջակցել կրթական համակարգին, կրթական բարեփոխումներին, ծնող-դպրոց համագործակցության ամրապնդմանը և դպրոցական համայնքի զարգացմանը:
- Ապահովել ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական և բարոյական օգնության տրամադրում:
- Նպաստել դպրոցի նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը և զարգացմանը՝ հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները:
- Զարգացնել համագործակցությունը ծնող-դպրոց փոխհարաբերություններում՝ ի նպաստ համայնքային զարգացման, կրթական, առողջապահական, սոցիալական, մշակութային և մանկապատանեկան հանրօգուտ ծրագրերի իրականացմանը:
- Համագործակցությունը Մերտ կապ ստեղծել ՀՀ տարածքում գործող այլ հասարակական կազմակերպությունների հետ՝ ի նպաստ կազմակերպության գործունեության նպատակների իրականացման:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Համագործակցելով հասարակական կազմակերպությունների հետ, ծնողական խորհուրդը՝

ա) վերանորոգել է դպրոցի ճաշարանը, ներդնելով աշխատուժ և շինարարական նյութեր,

բ) ընթացիկ վերանորոգման աշխատանքներ է իրականացրել դպրոցի մարզադահլիճը բարվոք տեսքի բերելու ուղղությամբ,

գ) վերակառուցել և կահավորել է դպրոցի համակարգչային լսարանը:

Անհրաժեշտ ենք համարում դպրոց-ծնող համագործակցությամբ խրախուսել կայուն, շարունակական և արդյունավետ գործունեություն դպրոցական համայնքի բոլոր անդամների միջև: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է ստեղծել՝

- գործուն և ակտիվ խմբեր,որոնք ուղղված կլինեն գործողությունների պլանավորմանը, կազմակերպմանը, իրագործմանն ու գործընկերային հարաբերությունների գնահատմանը,

- մշակել քաղաքականություն և ռազմավարություն,որտեղ ամրագրված կլինեն արդյունավետ համագործակցության սկզբունքներն ու փորձը,

- օգնության տրամադրման հնարավորություն համացանցի միջոցով, որը թույլ կտա կիսվել խնդիրներով, մտահաղացումներով,

- գրանցած հաջողությունների, արդյունքների հաշվետվության ներկայացման հստակ մեխանիզմներ,

- տեղեկատվական նյութերի տրամադրման հարթակներ՝դպրոցում իրականացվող ծրագրերին օժանդակելու նպատակով,

- դպրոցի զարգացման պլանի իրականացման համար համագործակցային գործողություններ:

Դպրոցի աշակերտական խորհրդի գործունեությունը

Դպրոցի սովորողների բարձրագույն մարմնի՝ ընդհանուր ժողովի և սովորողների ինքնավարության գործադիր մարմնի ՝ աշակերտական խորհրդի գործունեության արձանագրությունները ,ինչպես նաև դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունները ցույց են տալիս,որ վերոնշյալ մարմինները ,գործելով աշակերտական խորհրդի կանոնադրությանը համապատասխան ,իրենց ներկայացրած առաջարկություններով ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները:

Տնօրինությունը ընդառաջել է սովորողների նախաձեռնություններին, օժանդակել դրանց իրագործմանը, իրենց վերաբերող հարցերում մասնակցել են քննարկումների ,ուսումնառության ներքին կարգապահական կանոնների մշակմանը ,կազմակերպել են միջոցառումներ, աջակցել են խնդիրներ ունեցող սովորողներին:

Աշակերտական խորհուրդը իր գործունեությունը կառուցում է սովորողների, ծնողների,մանկավարժների և տնօրենության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում:

Աշակերտական խորհրդի գործունեությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ անհրաժեշտ է ստեղծել աշակերտական մասնագիտացված հանձնախմբեր,որոնց կազմում աշակերտական խորհրդի առաջարկությամբ կարող են ընդգրկվել նաև ծնողներ, ուսուցիչներ,համապատասխան մասնագետներ և այդ հանձնախմբերը կզբաղվեն ուսումնադաստիարակչական, մշակութային, սոցիալական, առողջապահական, մարզական,տեղեկատվական, իրավական և այլ հարցերով:

Աշակերտական խորհրդի և նրա կողմից ձևավորված մասնագիտացված հանձնախմբերը կաջակցեն դպրոցի խորհրդի, մանկավարժական և ծնողական խորհուրդների և տնօրինության կողմից սովորողներին անմիջականորեն վերաբերվող աշխատանքների կատարմանը, կմասնակցեն համայնքին օժանդակող ծրագրերի իրականացմանը, դպրոցի սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը, կմասնակցեն միջոցառումների կազմակերպմանը, ծնողազուրկ և օգնության կարիք ունեցող երեխաներին օգնություն ցուցաբերելու աշխատանքներին, կպաշտպանեն երեխաների իրավունքները դպրոցում, աշխատանքներ կտանեն սովորողների հաճախումների, կարգապահության, նրանց առաջընթացի բարելավման ուղղությամբ:

Առարկայական մեթոդական միավորումների գործունեությունը

Դպրոցում ստեղծված և գործող մեթոդական միավորումները աշխատանքները կազմակերպում են դպրոցի կանոնադրությամբ սահմանված իրավասությունների և պատասխանատվության շրջանակներում:

Մանկավարժական համակազմի և առարկայական մասնագետների առկայության առանձնահատկություններով պայմանավորված դպրոցում ձևավորվել են թվով երեք մեթոդական միավորումներ.

1. **Տարրական կրթության մեթոդական միավորում** (որը համակարգում է նաև նախակրթարանի ուսումնադաստիարակչական և մեթոդական աշխատանքները)

2. **Հումանիտար առարկաների մեթոդական միավորում**

3. **Բնագիտամաթեմատիկական առարկաների մեթոդական միավորում**

Մեթոդական միավորումների հիմնական խնդիրներն են ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումը և նրա արդյունավետության բարձրացումը՝ ուսուցիչների աշխատանքի գիտական կազմակերպման և ստեղծագործական նախաձեռնության հիման վրա. այդ խնդիրների լուծման համար յուրաքանչյուր առարկայական մեթոդական միավորում կազմում է իր պլանը,որտեղ նախատեսվում են կոնկրետ ձեռնարկումներ՝ ուսուցիչների մանկավարժական աշխատանքի բաշխման և իրականացման, ուսուցման պրոցեսի պլանավորման, առաջավոր մեթոդների օգտագործման, դասերին կատարած փոխայցելությունների վերլուծման, դրական փորձի կիրառման,ուսուցիչների ինքնակրթությանը օժանդակելու , գիտամանկավարժական նոր ինֆորմացիային ծանոթանալու,տվյալ առարկայի ուսման արդյունքների ուսումնասիրման, գնահատման մեթոդաբանության, հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի,ուսումնական պլանների,նոր դասագրքերի, ձեռնարկների,մեթոդական ձեռնարկների,կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման և այլ հարցեր:

Առանձնահատուկ է տարրական կրթության մեթոդական միավորման աշխատանքների բնույթը: Առանձնահատկությունն այն է,որ այդ միավորման աշխատանքներում մեծ տեղ են գրավում սովորողների վարքի ձևավորման, նրանց աշխատասիրության դաստիարակման, դասերից հետո էքսկուրսիաներ, զրույցներ, խաղեր, սպորտային մրցույթներ և հանրօգուտ աշխատանք կազմակերպելու , ծնողների շրջանում մանկավարժական գիտելիքներ տարածելու, նրանց հետ համագործակցված աշխատելու, դասարանում համերաշխ կոլեկտիվ ստեղծելու, սովորողներին արտադասարանական աշխատանքների տարբեր ձևերի մեջ ընգրկելու, նրանց ծանրաբեռնվածությունը կարգավորելու հարցերը:

Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման առաջնահերթությունները պահանջում են մեթոդական միավորումների աշխատանքներում նոր մոտեցումներ՝

- Հանրակրթության նոր չափորոշչով,առարկայական չափորոշիչներով և ծրագրերով սովորողների համար սահմանված վերջնարդյունքներին համապատասխան գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների ու արժեքների ձևավորման համար ՝ համապատասխան դասավանդման արդյունավետ մեթոդների,ձևերի ու եղանակների ներդրում ,

- Ուսուցիչների կողմից մշակված առարկայական և միջառարկայական ուսումնական նախագծերի նպատակային թեմաների ընտրություն և հավանության արժանացում,

- Սովորողների գնահատման չափանիշների ներդրման և ապահովման աշխատանքների իրականացում(հայտորոշիչ,ձևավորող,ամփոփիչ գնահատում),

- Հանրակրթության նոր չափորոշչի ներդրմանը վերաբերող դասալսումների քննարկում,

- Դասերի պլանավորում,մշակում և վերլուծություն,

- Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում և կիրառում պրակտիկ աշխատանքում,

- Ուսուցիչների մասնագիտական կարիքներին համապատասխան ինքնակրթության աշխատանքների կազմակերպում:

դ) Դպրոցի համագործակցության վերլուծությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ, դպրոցը՝ որպես համայնքային կրթամշակութային կենտրոն զարգացնելու հեռանկարները

Դպրոցում արդյունավետ կրթություն իրականացնելու համար մեծ նշանակություն ունի համագործակցությունը համայնքի ,կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:

Իրականում ժամանակակից կրթական մոտեցումները խրախուսում են շահառու տարբեր խմբերի հետ հաղորդակցության ու համագործակցության զանազան ձևերի զարգացումը,որը կնպաստի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար այնպիսի միջավայրի ստեղծմանը,որը էականորեն հնարավորություն կստեղծի աշակերտների տարբեր կարողունակությունների զարգացման, սոցիալական փորձի ձեռքբերման և դպրոցի կրթության խնդիրներով շահագրգիռ տարբեր խմբերի հետ համագործակցության մշակույթ ձևավորելուն: Եվ պետք է հաշվի առնել այս կարևորությունները և խրախուսել համագործակցությունը համայնքի ,կրթության կառավարման մարմինների , շահառու կազմակերպությունների և անհատների հետ:

Մանկավարժական աշխատողները սերտորեն համագործակցելով շահագրգիռ կողմերի հետ դպրոցում և դպրոցից դուրս կտարածեն մասնագիտական բարեվարքության և ժողովրդավարական արժեհամակարգի գաղափարները, համագործակցությունը կնպաստի անհատականացված և մոտիվացնող ուսումնական միջավայրի ստեղծմանը :

Դպրոցի զարգացման կարևոր երաշխիք է արդյունավետ համագործակցությունը համայնքի հետ, որը կնպաստի և՛ դպրոցական, և՛ համայնքային կյանքի ակտիվացմանը և միաժամանակ թափանցիկ հարաբերությունները, դպրոցի հաշվետվողականությունը համայնքի առաջ

կբարձրացնի դպրոցի վարկանիշը և քանի որ բնակավայրում դպրոցը միակն է, և այլ ուսումնական կամ մշակութային հաստատություններ չեն գործում, մեծ հեռանկարներ կան դպրոցը որպես համայնքային կենտրոն զարգացնելու:

Դպրոցում կազմակերպվող գրեթե բոլոր միջոցառումներին,լինելով փոքր համայնք,համայնքի ներկայացուցիչները, ակտիվ երիտասարդությունը մշտապես մասնակցում են: Իրենց հերթին դպրոցի աշխատակազմը և սովորողները մասնակցում են համայնքում իրականացվող միջոցառումներին,որոնք մեծամասամբ ուսումնադաստիարակչական բնույթ են կրում (ծառատունկ,մշակութային,մարզական,ազգային տոներ և հիշատակի օրեր,շաբաթօրյակներ և այլն):

Համայնքի հետ համագործակցության թույլ կողմերից մեկն էլ այն է,որ այդ համագործակցությունը որոշակի է,չծրագրավորված և նպատակային կերպով չի նպաստում աշակերտների կարողունակությունների զարգացմանը ,ուստի համայնքում անհրաժեշտ է դպրոցի դերակատարության բարձրացման աշխատանքներ կազմակերպել ,որում էական նշանակություն ունի տեղական ինքնակառավարման մարմնի հետ նպատակային համագործակցությունը:

Կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ երբեմն հարաբերությունները կրում են ժամանակվոր բնույթ ,որի պատճառով այդ համագործակցությունը չի նպաստում կրթության որակի ,աշխատակազմի և սովորողների մոտիվացիային:

Համագործակցության թույլ կողմերից է նաև այն,որ սովորողները և մանկավարժները հետաքրքրություն չեն ցուցաբերում շահառու կազմակերպությունների կողմից կազմակերպվող տարբեր հանդիպումներին,քննարկումներին, սեմինար-միջոցառումներին:

Նման համագործակցության համար արժեքային հիմք է հանդիսանում այնպիսի պայմանների ստեղծումը, որը կնպաստի աշխատանքի ճիշտ կազմակերպմանը,ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավմանը,ուսումնանյութական բազայի համալրմանը և այլ աշխատանքներին համայնքի,շահագրգիռ կողմերի մասնակցությանը, համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածությանը,նրանց զարգացմանը,անձնային աճին, ուսումնական մոտիվացիայի ձևավորմանը, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը, սոցիալական հարաբերությունների ձեռքբերմանը,բազմաբնույթ միջոցառումներին մասնակցությանը,այցելություններին մշակութային, առողջարանային, ուսումնական,գիտական,արտադրական և տնտեսվարող կազմակերպություններ, հանդիպումներին մտավորականների,իշխանության , օրինապահ մարմինների հետ, զինվորականության ներկայացուցիչների հետ:

Դպրոցն իր կանոնադրական գործառույթների իրականացման և զարգացման նպատակներով համագործակցում է ԿԳՄՍ-ի, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի,ՏՄԱԿ-ի, ԿՏԱԿ-ի,ԿԶՆԱԿ-ի,ՀՄԿ-ի, ՀՊԾ-ի,ՆԳՆ-ի Սևանի բաժնի, ԱԻ ծառայության,համայնքապետարանի, Սևանի ԲԿ-ի, ուսումնական հաստատությունների (հիմնական և միջնակարգ դպրոցներ,քոլեջներ, Գավառի պետական համալսարան),Սևանի մշակույթի պալատի,<<Հայ -

դպրոց>> հիմնադրամի, <<Այբ>> կրթական հիմնադրամի,իսկ աբոնեմենտային ծրագրի շրջանակներում տարբեր մշակութային կազմակերպությունների հետ:

Անհրաժեշտ է ոչ միայն ակտիվացնել համագործակցությունը նշված կազմակերպությունների հետ,այլ համագործակցության մեջ մտնել նոր գործընկերների հետ :Դպրոցը արդյունավետ համագործակցում է մի շարք դպրոցների հետ :

Հատկապես արդյունավետ է համագործակցությունը միասնական խորհրդի կառավարման ներքո գործող դպրոցների միջև, այդ համագործակցությունը շոշափում է տնօրենների, տնօրենների տեղակալների ,մեթոդական միավորումների ,զինղեկների ,կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալների համագործակցությունը և փորձի փոխանակումը նպաստում է նրանց կարողությունների զարգացմանը :Անհրաժեշտ է նաև այդ համագործակցության մեջ ներգրավել աշակերտական և ծնողական խորհուրդներին:

Այսպիսով՝ դպրոցի հետագա զարգացման,ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության նպատակով կարևորելու և ակտիվացնելու ենք հետագա համագործակցությունը դպրոցի հետ համայնքի,կրթության կառավարման մարմինների, շահագրգիռ բոլոր կողմերի հետ,բարձրացնելու ենք դպրոցի գործունեության վերաբերյալ իրազեկվածության աստիճանը,բարձրացնելու ենք դպրոցի նկատմամբ վստահությունը,հանրային ընկալման աստիճանն ու հեղինակությունը:

Ի վերջո բոլոր կողմերի հետ շահավետ համագործակցությունը կնպաստի ուսման որակի և արդյունավետության բարձրացման համար նպաստավոր խթան կհանդիսանա:

Կրթական գործընթացին շահագրգիռ բոլոր կողմերին ներգրավելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքների հիմնական ուղղություններն են լինելու ճանաչողական,տեղեկատվական – վերլուծական,ժամանցային,բարեգործական,հաշվետվողականության ուղղությունները:

Համայնքի հետ ակտիվ համագործակցության արդյունքում դպրոցը պետք է դարձնել համայնքի (գյուղի) կրթամշակութային կենտրոնը:Առայժմ համայնքի հետ համագործակցությունը սահմանափակ է , սակայն դպրոցի զարգացման նպատակները պահանջում են համայնքի հետ համագործակցության բազմազանություն,որը կարող է նպաստել համայնքային կրթամշակութային կյանքի աշխուժացմանը՝ միևնույն ժամանակ դպրոցը վերածելով նրա սոցիալ-մշակութային կենտրոնի: Իհարկե, դպրոցում կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումները շոշափում են և՛ դպրոցի,և՛ համայնքի շահերը:Սովորողների կողմից իրականացվող նախագծային աշխատանքները ,հանրօգուտ աշխատանքները պետք է ուղղորդել համայնքային խնդիրների ուսումնասիրությունների,հետազոտությունների իրականացմանը,որոնք պետք է վերաբերեն համայնքի կրթական,առողջապահական, բնապահպանական,տնտեսական հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը,որը նոր շունչ կհաղորդի դպրոց-համայնք համագործակցությանը, դրական և պատասխանատու փոխադարձ վերաբերմունք կձևավորի դպրոցի և համայնքի միջև, կբարձրացնի դպրոցի կողմից

համայնքի նկատմամբ հաշվետվողականությունը,ինչպես նաև համայնքի բնակչության կողմից դպրոցի նկատմամբ վստահությունը:

Այսպիսով՝ պետք է նոր շունչ հաղորդել համայնքի հետ համագործակցությանը իրականացնել համայնքի մշակութային-սոցիալական և մտավոր ներուժի գնահատում, կազմակերպել համապատասխան միջոցառումներ դրանց զարգացման համար և օգտագործել դրանք զարգացման ծրագրի նպատակներին հասնելու համար՝ պահպանելով ժողովրդավարության, արդարության և բազմազանության արժեքները:

Դպրոցի զարգացման նպատակներից է բխում ծնողական համայնքի հետ ակտիվ համագործակցությունը և դպրոց-ծնող փոխշահավետ հարաբերությունները և ծնողների մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացին դպրոցի գործունեության բարելավման կարևոր գործոն է, կարևոր է նրանց կապը դպրոցի հետ մասնակցությունը ծնողական ժողովներին և միջոցառումներին ,իրազեկված լինելու դպրոցում իրականացվող գործընթացներին: Ծնողական համայնքի առավել բարձր մակարդակի մասնակցության համար պետք է մեծ նշանակություն տալ դպրոցի կողմից որոշումների կայացման գործում ծնողների ակտիվ ներգրավվածությանը:Այդ իմաստով մեծապես ծնողներին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ ,ներգրավել նրանց խնդիրների լուծման գործում ,արդյունավետ հարաբերություններ ստեղծել սովորողների ընտանիքների հետ:

Փորձը ցույց է տալիս, որ հատկապես տարրական դասարանների սովորողների ծնողները համեմատաբար ավելի շատ են շահագրգռված դպրոցի հետ համագործակցությամբ ,մշտապես մասնակցում են ծնողական ժողովներին ,երեխաների հանդեպ ավելի ուշադիր են ,հետևում են սովորողների կանոնավոր հաճախումներին ,տնային հանձնարարությունների կատարման վերահսկմանը,ներգրավված են երեխաների արտադպրոցական ու արտադասարանական աշխատանքներում և պատասխանատու վերաբերմունք ունեն դպրոցի նկատմամբ,ինչը չի կարելի ասել ավելի բարձր դասարանների սովորողների ծնողների մասին ,որոնք ավելի պասիվ են դպրոցի հետ համագործակցությանը,որն էլ հանգեցնում է աշակերտների ուսումնառության որակական արդյունքներին՝ դառնալով երբեմն ցածր առաջադիմության պատճառ և այս խնդիրը պետք է լուծել նպատակաուղղված ,ծրագրված գործողություններով ծնողների հետ իրականացնելով մանկավարժական և հոգեբանական մշտական և շարունակական աշխատանք:Այդ նպատակով ծնողական և աշակերտական խորհուրդների հետ կազմակերպել հանդիպումներ, համագործակցել ծնողների հետ ՝ ուսումնական գործընթացի դժվարությունները բացահայտելու ,սովորողների ձեռքբերումները արձանագրելու նպատակով :

Ծնողական համայնքի հետ թույլ համագործակցությունը պայմանավորված է կարիքների ոչ լիարժեք բացահայտմամբ ու բավարարմամբ, և նրանց ամբողջական ներուժը չի օգտագործվում և պասիվ ծնողների հետ չի իրականացվում համապատսխան աշխատանք,որը կնպաստի երկխոսության ու փոխհամագործակցության:

Դպրոցի զարգացման համար կարևոր նշանակություն ունի նրա արդյունավետ կառավարումը և այդ իմաստով կարևոր է մշտական և զարգացող համագործակցություն կրթության

կառավարման մարմինների հետ թափանցիկ,հաշվետու փոխհամագործակցության պայմաններում: Դպրոցը արդյունավետ է համագործակցում լիազորված պետական մարմնի՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հետ ,իրականացնում ինչպես նրա,այնպես էլ նրա միջնորդությամբ ԿԳՄՍ նախարարության հանձնարարականները ու հրահանգները, կարևորվում է պետական աջակցության դերը դպրոցի նկատմամբ և հետևաբար պետք է գործել թափանցիկ :

Կոլեգիալ կառավարման մարմնի՝ միասնական խորհրդի հետ համագործակցությունը շոշափում է դպրոցի ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական գործընթացը, որոշումները կայացվում են փոխգործակցության արդյունքում ,կազմակերպվում են քննարկումներ և որոշումները կայացվում են ի շահ դպրոցի և կրթության:

Սակայն դպրոցի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է , որ խորհրդի անդամները շարունակաբար զարգացնեն իրենց գիտելիքները հանրակրթության բնագավառի օրենսդրության վերաբերյալ ,որի համար պետք է կազմակերպել սեմինարներ, քննարկումներ՝ծանոթացնելու նրանց հանրակրթության ոլորտի օրենսդրական փոփոխություններին ,որը հնարավորություն կստեղծի խորհրդի անդամների առավել արդյունավետ ձևով մասնակցելու դպրոցի կառավարմանը և մասնակից դառնալու ներդպրոցական կյանքին:

Ե) Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները

Դպրոցի մանկավարժական համակազմը բաղկացած է թվով 17 մանկավարժական աշխատողներից ,որոնք բոլորն էլ ունեն բարձրագույն կրթություն ,ըստ մասնագիտության, դասավանդում են՝

-հայոց լեզվի և գրականության – 2

-պատմության,հասարակագիտության- 1

-աշխարհագրության- 1

-դասվարներ- 3

-գերմաներեն լեզվի- 1

-մաթեմատիկայի- 1

-ֆիզիկայի և ինֆորմատիկայի- 1

-ֆիզկուլտուրայի- 1

-քիմիայի և կենսաբանության- 1

-ռուսաց լեզվի- 1

-ՆԶՊ ուսուցիչ- 1

Նախակրթարանում աշխատող դաստիարակը և օգնականը,ուսուցչի օգնականը, գրադարանավարը ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն:

Մանկավարժական բոլոր աշխատողները համապատասխանում են հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների նկարագրով սահմանված որակավորման նվազագույն պահանջներին և իրենց աշխատանքային գործառույթներն իրականացնում են պաշտոնների նկարագրով սահմանված գործառույթներին համապատասխան:

Աշխատանքային գործունեության ընթացքում դասավանդող ուսուցիչները, դաստիարակները,ուսուցչի օգնականը,գրադարանավարը մասնակցել են մի շարք վերապատրաստումների՝ առարկայական,ներառական կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների, դասավանդման մեթոդների կատարելագործման և նորարարությունների կիրառման , ձեռնարկատիրական կրթության իրականացման, նախագծային աշխատանքների իրականացման, գնահատման նոր մեթոդաբանության,նախաատեստացիոն վերապատրաստումների ,հանրակրթության պետական նոր չափորոշչի և առարկայական չափորոշիչների ներդրման,դասալսումների << Թիչ>> (Teach) ներդպրոցական վերահսկողության գործիքի կիրառման և այլ թեմաներով:

Դպրոցի մեթոդական միավորումներում ,մանկավարժական խորհրդում հաճախակի քննարկվել են առարկաների չափորոշչային և ծրագրային պահանջները կատարելու համար ուսուցիչների՝ առարկան դասավանդելու համար պահանջվող գիտելիքների շարունակական զարգացման , ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան դասի պլանավորման (որոնք կնպաստեն սովորողների արդյունավետ ուսումնառությանն ու զարգացմանը), ուսումնական մեթոդների և ռազմավարությունների՝ ներառարկայական, միջառարկայական և առօրյա կյանքի հետ կապերի ապահովման,տարբեր հարթակներում կրթական ռեսուրսներից տեղեկացվածության ,ՏՀՏ գործիքների տեղեկացվածության և կիրառության ,դրանց դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին հարմարեցման,սովորողների մոտ մտածողության, աշխատանքային, հաղորդակցության,համագործակցության,մեդիագրագիտության հմտությունների զարգացման , սովորողների կարիքների բացահայտման ,գնահատման սկզբունքներին և մեթոդաբանության պահանջներին համապատասխան ուսումնառության գնահատման,ուսումնական գործընթացում ներառականության ապահովման կարողությունների,ուսուցիչների կողմից իրենց աշխատանքն ու մասնագիտական գործունեությունը կազմակերպելու համար հանրակրթության ոլորտի օրենսդրության իմացության հարցեր:

ՈՒսումնասիրությունները ցույց են տալիս ,որ ուսուցիչները ,համաձայն դասաբաշխման, իրականացնում են իրենց դասավանդած առարկայի թեմատիկ պլանավորումը,տեղյակ են թեմատիկ պլանի և դասի պլանավորման սկզբունքներին ,երբեմն օգտվում են պատրաստի պլաններից՝դրանք համապատասխանեցնելով առարկայի ժամաքանակին: Դասերի պլաններում ձևակերպում են դասապլանի բաղադրիչները,նպատակը ,խնդիրները,

վերջնարդյունքները,կարողանում են փոխկապակցել դասապլանի բաղադրիչները ,սակայն դեռևս թույլ են դասապլաններում և դասավանդման գործընթացում միջառարկայական կապերի կիրառումը ,երբեմն հաշվի չեն առնվում տարբերակված ուսուցման սկզբունքները:

Ուսուցիչները մեծամասամբ տեղյակ են ինտերակտիվ մեթոդներին և ռազմավարություններին, սակայն ոչ բոլորն են կարողանում հարմարեցնել ինտերակտիվ մեթոդները և ռազմավարությունները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին և ապահովել միջառարկայական և առօրյա կյանքի հետ կապերը: Չեն հարմարեցնում ինտերակտիվ մեթոդները ֆիզիկական միջավայրին : Ոչ բոլոր ուսուցիչներն են օգտվում լաբորատորիաներում, գրադարանում և առցանց կրթական հարթակներում առկա կրթական ռեսուրսներից,չեն ստեղծում նոր ուսումնական ռեսուրսներ,թեև տեղյակ են ,թե ինչ ռեսուրսներ են առկա, որոշ մասը հարմարեցնում են նշված ռեսուրսները դասավանդման նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին ,մեծամասամբ կիրառում են ՏՀՏ միջոցները,սակայն չեն ապահովում սովորողների ուսումնառության համար բազմազան մեթոդներ,ինչպես նյութի մատուցման,այնպես էլ գիտելիքների ստուգման և աշակերտների ներգրավման նպատակներով:

ՏՀՏ և լաբորատոր ռեսուրսների ոչ բավարար կիրառման պատճառներից մեկն էլ,ըստ էության, կայանում է նրանում,որ դպրոցում առկա չեն ժամանակակից ՏՀՏ միջոցներ (նոր սերնդի համակարգիչներ, ինտերակտիվ գրատախտակներ և այլն) և ժամանակակից առարկայական լաբորատորիաներ:

Միավորային և ձևավորող գնահատման միջոցով իրականացնում են սովորողների առաջադիմության մշտադիտարկում , կարողանում են բացահայտել սովորողների առաջադիմությանը խոչընդոտող գործոնները և տրամադրում են համապատասխան աջակցություն,կատարելագործում են իրենց առարկայական, համագործակցում են ծնողների հետ սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակության խնդիրների լուծման համար, համագործակցում են միմյանց հետ փորձի փոխանակման համար:

-Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովելու նպատակով իրականացվելիք միջոցառումները.

Այսօր,ավելի քան երբևէ, ուսուցչից պահանջվում են բարձր գիտելիքների և կարողությունների առկայություն,մեծ ջանքեր և ճկունություն: Ուսուցիչը պետք է ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսուցիչների մեթոդական պատրաստվածության աստիճանի, մասնագիտական և դասավանդման որակների մասին իրատեսական տեղեկատվություն ստանալը մեծ նշանակություն ունի և կարևոր ցուցանիշ է,ինչպես ուսուցման գործընթացի

արդյունավետության գնահատման և բարձրացման համար,այնպես էլ ուսուցիչների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման համար:

Ուսուցիչների և մյուս մանկավարժական աշխատողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների շարունակական զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական որակների կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ, վարպետաց դասեր, փորձի փոխանակման ծրագրեր,դեպքերի քննարկումներ, անձնային աճի դասընթացներ,երբ ուսուցչի հմտությունները շարունակաբար զարգանում են,նա վստահության է ձեռք բերում բոլոր երեխաների,այդ թվում՝ կրթական դժվարություններ ունեցող երեխաների ուսուցումն արդյունավետ կազմակերպելու գործընթացում:

Պետք է խթանել ուսուցիչների ինքնազարգացումը՝ աշխատանքային գրաֆիկում նախատեսելով ժամանակ, որն ուսուցիչը կօգտագործի մասնագիտական կարողությունների զարգացման համար:

Ուսուցիչն արդյունավետ ուսումնական գործընթաց իրականացնելու համար նախապես պետք է պլանավորի իր աշխատանքը,օրվա թեմային համապատասխան մշակի դասի պլան, անհատական մոտեցում ապահովելու համար կազմի լրացուցիչ աշխատանքային նյութեր, լրացնի անհրաժեշտ փաստաթղթեր, նրա աշխատանքային ժամանակը հաճախ չի բավականացնում այս ամենն իրականացնելու համար և երբեմն կրում է մեխանիկական բնույթ: Համընդհանուր ներառական կրթության շրջանակներում ներդրված ուսուցչի օգնականի հաստիքը պետք է արդյունավետորեն ծառայեցնել ՝ օգնելու ուսուցչին սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորման և իրականացման գործընթացներում, դասը կազմակերպել՝ հաշվի առնելով սովորողների բազմազան կարիքները և ցուցաբերել անհատական մոտեցում դասավանդման ամբողջ ընթացքում:

Ուսուցիչների և մանկավարժական մյուս աշխատողների մանկավարժական և մեթոդամասնագիտական զարգացման ուղղությունները արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար պետք է ճիշտ գնահատել նրանց մասնագիտական կարիքները և կարիքների գնահատման արդյունքում ստացված վերլուծություններից հետո ուղղորդել այդ գործընթացը,կարևոր է այդ գործընթացը համաձայնեցնել նրանց հետ,որովհետև կարիքների գնահատումն ուղղված է նրանց մասնագիտական զարգացումն ապահովելուն,իսկ հաջողությունը պայմանավորված է նրանց շահագրգռվածությամբ:

Մասնագիտական կարիքների գնահատումն պետք է իրականացվի հետևյալ ոլորտներում՝

1.Գիտելիքների ոլորտ՝

- դասավանդվող առարկայի տեսության իմացություն,

- սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների իմացություն,

- օրենդրական փաստաթղթերի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի իմացություն,

- դասավանդման մեթոդաբանության,նորարարական մեթոդների,ռազմավարությունների իմացություն:

2.Կարողությունների ոլորտ՝

- ուսումնադաստիարակչական գործընթացը պլանավորելու կարողություն,

- իր մասնագիտական գործունեությունը պլանավորելու, նախագծելու և մեթոդական ծրագրերի մշակելու կարողություն,

- ուսումնադաստիարակչական գործընթացը հայտորոշելու ,դիտարկելու, սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն,

- դասարանում դրական բարոյահոգեբանական մթնոլորտ ձևավորելու և սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու կարողություն,

- մանկավարժական խնդիրները և կոնֆլիկտները ճկուն լուծելու կարողություն,

- սովորողների կառուցողական և ստեղծագործական մտածողության զարգացմանը նպաստող ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդները կիրառելու կարողություն,

- սովորողների ուսուցման նկատմամբ մոտիվացիայի բարձրացման կարողություն,

- սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեությունը խթանելու և զարգացնելու կարողություն,

- ստեղծագործական-հետազոտական գործունեություն իրականացնելու կարողություն,

- համակարգչային հմտությունների առկայություն, և ուսուցման գործընթացում ՏՀՏ միջոցների ակտիվ կիրառում ,

- ինքնակրթության և կատարելագործման պլանավորում և իրագործում,

- սեփական գործունեությունը,ինչպես նաև՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունքները վերլուծելու, գնահատելու և շտկելու կարողություն,

3.Անձնային որակների ոլորտ՝

- հաղորդակցվելու և համագործակցելու հմտությունները՝ սովորողների, գործընկերների և ծնողների հետ,

- օպտիմալ հուզականությունը, դրական դիրքորոշումը սովորողների և իր աշխատանքի նկատմամբ:

Կրթական բարեփոխումներն միտված են բարելավելու և առավել արգասավոր դարձնելու ուսումնադաստիարակչական գործընթացը, մոտիվացնելու մանկավարժների աշխատանքը,որի

լավագույն լուծումներից են պետության ֆինանսական քաղաքականությունը հանրակրթության բնագավառում:

Այդ առումով կարևոր նշանակություն ունեն. <<Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման >> կարգը, <<Ուսուցիչների կամավոր ատեստավորման ,կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցիչների դրույքաչափի և դրան հատկացվող հավելավճարի տրամադրման >>, <<ԲՏՃՄ ոլորտի դասավանդող ուսուցիչների համար վարձատրության և լրավճարի չափ սահմանելու և տրամադրելու>>, <<Գյուղական բնակավայրերում մինչև 100 սովորող ունեցող ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների լրավճարի սահմանում>>, <<Հանրակրթության մատչելիությունն ապահովելու նպատակով մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման>>կարգերը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022 թվականի N79-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման >>կարգը , բազմահամակազմ (երկկոմպլեկտ) դասարաններում դասավանդման համար սահմանում է ուսուցչի լրացուցիչ վարձատրություն՝ դրույքաչափի 50 %-ի չափով,ինչպես նաև դասղեկության ,մեթոդական միավորի ղեկավարի, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հետ կապված աշխատանքների, բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատությունների համար տրվող լրավճարները:

զ) Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաները և նորարարությունները

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումն նոր պահանջներ է դնում կրթության համակարգի առջև: Տեխնոլոգիական արագ առաջընթացը պահանջում են հմտությունների և գիտելիքների շարունակական նորացում : Կարևոր է,որՏՀՏ-ների զարգացումն հանգեցնում է նաև կրթական գործընթացի նկատմամբ մոտեցումների և ընկալումների փոփոխության՝ ապահովելով կրթության որակի բարելավում և մատչելիության բարձրացում,ուսումնական գործընթացում փոխվում է շեշտադրումը՝ ուսուցչակենտրոնից դեպի աշակերտակենտրոն և դասավանդումից դեպի ինքնուրույն ճանաչողական գործունեություն: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման նպատակն է բարձրացնել սովորողների առաջադիմությունն ու կատարելագործել դասավանդման որակը՝ նպաստելով դասապրոցեսի ժամանակային և տարածքային սահմանափակումների վերացմանը:

Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման բնագավառներն են՝

- դպրոցավարություն (վարչատնտեսական,էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության,հաշվապահական հաշվառման ու ֆինանսական գործունեության ,գրադարանային աշխատանքների կազմակերպման, սովորողների առաջադիմության,ուսման որակի, բացակայությունների հաշվառման,ուսուցիչների հերթական պարտադիր և կամավոր ատեստավորման գործընթացների կազմակերպման, հաստիքացուցակի և տարիֆիկացիայի ձևավորման, աշխատողների ընդունման և ազատման, սովորողների ընդունման,ազատման ,տեղափոխման,դասագրքերի պլանավորման,հայտերի ձևավորման,ստացման,բաշխման,սոցանապահով ընտանիքների երեխաներին դասագրքերի գումարների զեղչման և այլ գործառույթների իրականացում),

- ուսումնական գործընթացի կազմակերպում և կառավարում,

- ուսուցիչների ,վարչական և մանկավարժական աշխատողների վերապատրաստում,

- ծնողների,տարբեր կազմակերպությունների և դպրոցների հետ համագործակցություն:

Դպրոցը կիրառում է կրթական մի շարք կայքերի և հարթակների նորարարությունները,որոնք ուսումնաօժանդակ գործիքներ են, ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացման , մասնագիտական գիտելիքների ու հմտությունների զարգացման առումով և բարձրացնում են սովորողների հետաքրքրությունները ,առաջադիմությունը, նպաստում են,որպեսզի սովորողները ակտիվորեն ընգրկվեն ուսումնական գործընթացում :

Միևնույն ժամանակ ՏՀՏ-ների միջոցով դպրոցում իրականացվող կառավարման, վարչատնտեսական, ուսումնադաստիարակչական գործընթացները վերահսկելի են դառնում ինչպես վերադաս մարմինների,այնպես էլ դպրոցի հարցերով շահագրգիռ մարմինների՝ համայնքի,ծնողների և այլոց կողմից:

Կրթական գործընթացում առավել մեծ նշանակություն ունի ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և ինտերակտիվ դասավանդման մեթոդների, ինտեգրված դասերի,նախագծային հետազոտական, լաբորատոր և գործնական,խմբային և համագործակցային աշխատանքների իրականացումը, նամանավանդ դրանց իրականացումը ՏՀՏ-ների կիրառմամբ:

Դպրոցում ՏՀՏ-ները և կիրառվող նորարարությունները ներդնելու հիմնական քայլերը՝

1. Ինչ կարող է տալ ՏՀՏ-ների և նորարար տեխնոլոգիաների ներդրումը դպրոցում,

2. Գնահատել,թե դպրոցում ՏՀՏ-ների և նորարար տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ինչպես կփոխվի ուսումնական գործընթացի ,ուսուցիչների մասնագիտական զարգացման, դպրոցավարության արդյունավետությունը,

3. Տեխնիկական համալրում . համակարգչային սարքավորումների, համապատասխան ուսումնական ծրագրերի ձեռքբերում,համացանցային կապով ապահովելու հնարավորությունների ստեղծում,

4. Աշխատակազմին,ուսուցիչներին և սովորողներին համապատասխան համակարգչային գիտելիքների ուսուցում,

5. Դպրոցում ՏՀՏ-ների և նորարար մանկավարժական տեխնոլոգիաների ներդրման և կիրառման ծրագրի մշակում, գործողությունների պլանավորում և իրականացում,

6. Հետադարձ կապի միջոցով ՏՀՏ-ների և նորարար տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ստացված ձեռքբերումների վերլուծություն, անհրաժեշտության դեպքում ընտրված ռազմավարության վերանայում և հաջորդ գործողությունների պլանավորում:

Հանրակրթության հիմնական նպատակներից է սովորողների ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման , ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով **թվային և մեդիա կարողունակության ձևավորումը,** այն նպատակով,որ սովորողները տիրապետեն մեդիա գրագիտության կանոններին ու հմտություններին, պատկերացնեն մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կողմնորոշվեն տեղեկատվության հոսքերում,կարողանան քննադատորեն վերլուծել տեղեկույթը, գնահատեն մեդիայի ազդեցությունը իրենց և ուրիշների արժեքային պատկերացումների, դիրորոշումների և գործողությունների վրա ,գիտակցեն թվային մեդիայի օգտագործման ռիսկերը, կարողանան գնահատել և վերափոխել իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, ապատասխանատվության, էթիկայի տեսանկյունից:

Պետք է սովորողների մոտ ձևավորել այնպիսի կարողություններ,որոնք հնարավորություն կտան նրանց .

-հասկանալ մեդիա և տեղեկատվական աղբյուրների դերն ու գործառույթները,

-հասկանալ այն պայմանները,որոնց ներքո կարող են իրագործվել այդ գործառույթները,

-ճանաչել և ձևակերպել տեղեկատվական կարիքը,

-գտնել և մուտք գործել համապատասխան տեղեկատվական աղբյուրներ,

-քննադատորեն մոտենալ տեղեկատվությանը,այն տրամադրող աղբյուրներին, ապահովությանը,վստահելիությանը,

-արագ գտնել և կիրառել ստացված տեղեկատվությունը,

-ճիշտ աշխատել ստացված տեղեկատվության հետ,

-պատասխանատու և էթիկապես ճիշտ փոխանցել տեղեկատվությունը լսարանին կամ հասարակությանը,

-ի վիճակի լինել օգտագործել ՏՀՏ հմտություններ տեղեկատվության մշակման համար և օգտագործողին մատչելի կերպով ներկայացնել մշակված տեղեկատվությունը,

-համագործակցել ԶԼՄ-ների և այլ մեդիա աղբյուրների հետ ինքնարտահայտվելու,ազատ արտահայտվելու, ժողովրդավարական սկզբունքներով:

Ի վերջո ՏՀՏ-ների և մանկավարժական նորարար տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը կնպաստի դպրոցում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը ու կառավարմանը, աշխատակազմի մասնագիտական զարգացմանը,կնպաստի դպրոցի կառավարման բարելավմանը, կստեղծվի ուսումնառության համար նպաստավոր միջավայր:

Է) Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Կրթության որակը ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքն է,հետևաբար ներառում է սովորողներին,ուսումնական միջավայրը, կրթության բովանդակությունը,որակյալ ուսուցչական կազմը,արդյունավետ ղեկավարվող ուսումնական գործընթացը, արժանահավատ ու արդար գնահատման համակարգը,ուսուցման վերջնարդյուքները,որոնք ներառում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհայացքը, կրթության վերջնարդյունքներին վերաբերող ցուցանիշները և չափանիշները բնորոշվում են առաջին հերթին սովորողների առաջադիմությամբ,ինչն էլ արտահայտվում է նրանց ընթացիկ և ամփոփիչ գնահատականներով:Այդ ցուցանիշները և չափանիշները ներառում են նաև սովորողների բացակայությունները,դասարանից դասարան փոխադրվելը , նույն դասարանում մնալը,դպրոցից դուրս գալը,օլիմպիադաներին և մրցույթներին մասնակցությունը, նախնական, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելը և այլն:Կրթության որակի վրա անմիջապես ազդող մյուս հանգամանքներից է ուսուցիչների մասնագիտական որակավորումը, ուսուցման մեթոդներին և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը,ինչպես նաև սահմանափակ ֆինանսական և նյութական ռեսուրսների առկայության պայմաններում ուսումնական միջավայրի հարմարեցումը: Դպրոցում կրթական ծրագրերի կատարումը պլանավորվել և իրականացվել է հանրակրթության բնագավառի օրենսդրության ,սահմանված կարգերի , հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների և ծրագրերի,ուսումնական պլանների, ուսուցման գործընթացի միջոցով բազմաբնույթ մեթոդների և տեխնոլոգիաների միջոցով ուսուցիչները և մանկավարժական աշխատողները ապահովել են հանրակրթության առարկայական չափորոշիչներով ամրագրված պահանջների յուրացումը սովորողների կողմից:

Դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը ,արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքները նպաստել են սովորողների գիտելիքների յուրացմանը, արժեքային համակարգի ձևավորանը, պաշտպանվել են յուրաքանչյուր սովորողի իրավունքներն ու ազատությունները,հաշվի են առնվել յուրաքանչյուր սովորողի հոգեբանական առանձնահատկությունները և անհատական կարողությունները: Իրականացված

ուսումնադաստիարակչական միջոցառումները միտված են եղել սովորողների կրթական, ֆիզիկական,հոգևոր,սոցիալական զարգացմանը:

Իրականցված ծրագրերը վերաբերում են վնասակար սովորույթների կանխարգելման, մարմնական վնասներ հասցնելու դեպքերի կանխման կամ բացահայտման,բռնության , ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման,կանխարգելման ուղղություններին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս ,որ սովորողների մասնակցությունը մարզային, հանրապետական մրցույթներին բավականաչափ փոքր է:

Ներկայացնենք ուսումնական տարիների համեմատության մեջ սովորողների կրթության որակի առաջադիմության ցուցանիշների փոփոխության դինամիկան.

2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատվածներ
1	I	3	3				
2	II	7		3	1	3	
3	III	3		2	1		
4	IV	6		1	2	3	
5	V	5		1		4	
6	VI	5			3	2	
7	VII	6				6	
8	VIII	4			1	3	
9	IX	5		1	2	2	
Ընդամենը		44	3	8	10	23	
Որակական տոկոսային ցուցանիշները				19.5%	24.3%	52.2%	
Որակը՝ 43.9 % Առաջադիմությունը՝100%							

2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի շարժը և առաջադիմությունը

Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատականներ
1	I	3	3				
2	II	7		3	1	3	
3	III	3		2	1		
4	IV	6		2		4	
5	V	5		1		4	
6	VI	5		1	2	2	
7	VII	6			3	3	
8	VIII	4			4		
9	IX	5		1	3	1	
Ընդամենը		44	3	10	14	17	
Որակական տոկոսային ցուցանիշները				24.3%	34.1%	41.4%	
Որակը՝ 59 % Առաջադիմությունը՝100%							

Վերլուծությունը ցույց է տալիս,որ ընդհանուր դպրոցում 2020-2021 ուստարվա ավարտին գրանցվել է.
Որակի 15.1 % աճ:

Գերազանցիկների քանակը աճել է 4.8 %-ով:

Հարվածայինների քանակը աճել է 9.8 %-ով:

Միջակների քանակը նվազել է 10.8 %-ով:

2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատականներ
1	I	9	9				
2	II	3			2	1	
3	III	7		2	2	3	
4	IV	3		1	2		

5	V	5				5	
6	VI	3			1	2	
7	VII	5			1	4	
8	VIII	5				5	
9	IX	4				4	
Ընդամենը		44	9	3	8	24	
Որակական տոկոսային ցուցանիշները				8.5%	22.8%	68.5%	
Որակը՝ 31.4% Առաջադիմությունը՝100%							

2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատականներ
1	I	9	9				
2	II	3			2	1	
3	III	7		3	1	3	
4	IV	3		2	1		
5	V	5			1	4	
6	VI	3			1	2	
7	VII	5			1	4	
8	VIII	5				5	
9	IX	4			2	2	
Ընդամենը		44	9	5	9	21	
Որակական տոկոսային ցուցանիշները				14.2%	25.7%	60%	
Որակը՝ 40% Առաջադիմությունը՝100%							

Վերլուծությունը ցույց է տալիս,որ ընդհանուր դպրոցում 2021-2022 ուստարվա ավարտին գրանցվել է.

Որակի 8.6 % աճ:

Գերազանցիկների քանակը աճել է 5.7 %-ով:

Հարվածայինների քանակը աճել է 2.9 %-ով:

Միջակների քանակը նվազել է 8.5 %-ով:

2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատականներ
1	I	4	4				
2	II	9		4	4	1	
3	III	3		1	2		
4	IV	7		2	2	3	
5	V	3			3		
6	VI	4			1	3	
7	VII	3				3	
8	VIII	4			1	3	
9	IX	6				6	
Ընդամենը		43	4	7	13	19	
Որակական տոկոսային ցուցանիշները				17.9%	33.3%	48.7%	
Որակը՝ 51.3% Առաջադիմությունը՝100%							

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատականներ
1	I	4	4				
2	II	9		5	4		
3	III	3		1	2		
4	IV	7		4	3		
5	V	3		2	1		

6	VI	4			1	3	
7	VII	3			1	2	
8	VIII	4			2	2	
9	IX	6			2	4	
Ընդամենը		43		12	16	11	
Որակական տոկոսային ցուցանիշները				30.7%	53.3%	28.2%	

Որակը՝ 72%
Առաջադիմությունը՝100%

Վերլուծությունը ցույց է տալիս,որ ընդհանուր դպրոցում 2022-2023 ուստարվա ավարտին գրանցվել է.

Որակի 20.7 % աճ:

Գերազանցիկների քանակը աճել է 12.8 %-ով:

Հարվածայինների քանակը աճել է 20 %-ով:

Միջակների քանակը նվազել է 20.5 %-ով:

2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատվածներ
1	I	1	1				
2	II	4	Բնութագրման միջոցով				
3	III	9		4	4	1	
4	IV	3		1	2		
5	V	7		2	3	2	
6	VI	3			3		
7	VII	5			1	4	
8	VIII	3			1	2	
9	IX	5			3	2	
Ընդամենը		40	1	7	17	11	
Որակական տոկոսային ցուցանիշները				20.9%	48.5%	31.4%	

Որակը՝ 68.5%
Առաջադիմությունը՝100%

2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի շարժը և առաջադիմությունը							
Հ/Հ	Դասարանը	Աշակերտների թիվը	Չեն գնահատվել	Գերազանցիկներ	Հարվածայիններ	Միջակներ	Անբավարար գնահատականներ
1	I	1	1				
2	II	4					
3	III	9		4	4	1	
4	IV	3		1	2		
5	V	7		2	3	2	
6	VI	3			3		
7	VII	5			3	2	
8	VIII	3			1	2	
9	IX	4			3	1	
Ընդամենը		39		7	19	8	
Որակական տոկոսային ցուցանիշները				20.5%	55.8 %	23.5%	

Որակը՝ 76.4%
Առաջադիմությունը՝100%

Վերլուծությունը ցույց է տալիս,որ ընդհանուր դպրոցում 2023-2024 ուստարվա ավարտին գրանցվել է.

Որակի 7.9 % աճ:

Գերազանցիկների քանակը պահպանվել է:

Հարվածայինների քանակը աճել է 7.3 %-ով:

Միջակների քանակը նվազել է 7.9 %-ով:

Վերջին չորս ուսումնական տարիների սովորողների առաջադիմության և գիտելիքների գնահատման որակի վերլուծությունների արդյունքում ստացված ցուցանիշները ցույց են տալիս,որ առաջադիմությունը աճել է 2-րդ կիսամյակի և տարեկանի արդյունքում:

Անցած տարիների փորձը ցույց է տալիս ,որ ուսուցիչների զգալի մասի համար առարկայի չափորոշիչը չի դարձել հիմնական աշխատանքային գործիք, ուսումնական պրոցեսը կազմակերպելիս ուսուցիչները հիմնականում առաջնորդվել են դասագրքով: Դասը պլանավորելիս ,դասավանդման այս կամ այն մեթոդն ընտրելիս, սովորողների ձևավորող և միավորային գնահատումն իրականացնելիս չեն առաջնորդվել չափորոշչային պահանջներով, ինչը ,բնականաբար, բացասաբար է անդրադարձել կրթության որակի բարելավման և առաջընթացի համար:

Այսօր Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական բարեփոխումների տրամաբանությունը,հանրակրթության նոր չափորոշչի ներդրումը,առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի, դասագրքերի մուտքը հանրակրթական դպրոց պահանջում են բարձրացնելու ուսուցիչների մասնագիտական զարգացման մակարդակը, խոսքը վերաբերվում է ուսուցման ընթացքում չափորոշիչների , ծրագրերի, ուղեցույցների արդյունավետ, ստեղծագործաբար օգտագործման հմտություններին, ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմանը և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Չափորոշիչների վրա հիմնված կրթությունը պահանջում է ուսուցիչների կողմից չափորոշիչների կատարյալ իմացություն, դրանց ճիշտ կիրառում . միայն այս պարագայում է հնարավոր ապահովելու կրթության բարձր որակ:

Չափորոշիչն այն աշխատանքային գործիքն է,որն օգնում է իրականացնել նպատակային ուսումնառություն, նպաստում է առարկայական ծրագրերի արդյունավետ ներդրմանն ու ուսուցման գործընթացը սովորողների ընդունակություններին ու կարիքներին համապատասխանեցմանը: Պարտադիր պայման է դասի պլանավորման հիմնական ուղենիշը համարել Չափորոշիչը և դասի կառուցվածքում կարևորել չափորոշչային պահանջների կատարումը: Չափորոշչի հիման վրա պլանավորված դասը ավելի լայն հնարավորություններ է ստեղծում ուսուցումը ճիշտ և արդյունավետ կազմակերպելու համար:Առաջնորդվելով միայն դասագրքով,անտեսելով օրվա դասի ու Չափորոշչի միջև եղած կապերը՝ չենք կարող կրթության որակի բարելավման ուղղությամբ որևէ դրական քայլ արձանագրել :

Գիտենք,որ Հանրակրթության Պետական Չափորոշչի առանցքային նշանակություն ունենալը պայմանավորված է նաև նրանով,որ դրան համապատասխան են մշակվում և իրականացվում պետական հանրակրթական ծրագրերը,ուստի վճռորոշ նշանակություն է ստանում այն հարցը,թե ինչ կերպ է ուսուցիչը դրանք կիրարկում չափորոշչահեն կրթություն իրականացնելու համար,ուստի կրթական հարցերին վերաբերող նորմատիվային փաստաթղթերն ընդհանրապես, չափորոշիչն ու առարկայական ծրագրերը մասնավորապես, իրենց պարտադիր տեղը պետք է ունենան ուսուցիչների թղթապանակներում:

Թեմատիկ (օրվա) պլանները մշակելիս հարկ է ուշադրության կենտրոնում պահել չափորոշչային այն պահանջները,որոնք նպաստում են աշակերտին ներկայացվող որակական ընդհանրական պահանջների կատարմանը:

Այսօր ուսուցիչն ազատ է ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության հարցում,սակայն պատասխանատու է ձևավորելու և զարգացնելու սովորողների այն կարողունակությունները , որոնք ամրագրված են չափորոշչում :

Հարկ է,որ ուսուցիչը կարողանա կոնկրետ դասի համար մշակել չափորոշչային պահանջներին համապատասխան քայլեր ու գործողություններ,ձևակերպի դասի կոնկրետ,հասանելի, չափելի և իրատեսական նպատակներ,որոնք իրենց թելերով կտանեն դեպի չափորոշչային հեռահար նպատակի իրականացում :

ը) Բազմակարծիք ,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Դպրոցի խորհրդի ,մանկավարժական,ծնողական,աշակերտական խորհուրդների,ներքին գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս,որ արդյունավետ են հարաբերությունները աշխատակազմի,սովորողների,ծնողների,կառավարման խորհրդի , համայնքի հետ հարաբերություններում:Ստեղծված միջավայրը թույլ է տալիս կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին՝ իրազեկվածության,ազատ կամարտահայտության, բազմակարծության և փոխադարձ վստահության պայմաններում ուսումնառության, աշխատանքի,համագործակցության կազմակերպումը:

Ստեղծված են հավասար պայմաններ բոլոր սովորողների համար՝ անկախ նրանց կրթական կարիքներից և հնարավորություններից , և դպրոցը ապահովում է նրանց հավասար մասնակցությունը ուսումնական գործընթացին:

Ապահովված է ակադեմիական ազատությունը,մանկավարժական և աշակերտական ինքնավարությունը, ուսուցիչների և աշակերտների համար հասանելի են հաստատությունում առկա անհրաժեշտ նյութատեխնիկական, ժամանակային և մարդկային ռեսուրսները: Ներդպրոցական վերահսկողության միջոցով ուսումնառության և ուսուցման գործընթացում բացահայտվում և կարգավորվում են ծագող խնդիրները:

Դպրոցում ստեղծված է փոխադարձ վստահության միջավայր կառավարման և խորհրդակցական մարմինների,մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների համար:Որոշումները կայացվում են ակտիվ համագործակցության պայմաններում, կողմերի մասնակցությամբ,լսելի են նրանց դիրքորոշումները և որոշումները կայացվում են քննարկումների արդյունքում:

Կառավարման գործընթացներում կողմերին հատկացվում է ժամանակ անհրաժեշտ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու համար: Ուսուցիչների և այլ

մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականացվել է արդարացի և բարեխիղճ եղանակով և գործում է նրանց զարգացման և աջակցության համակարգ,թափուր տեղերի համալրումն իրականացվել է այդ գործընթացների թափանցիկության ու արդարության ապահովմամբ՝ սահմանված ընթացակարգերի համաձայն:

Ուսումնական պլանը կազմվել է խորհրդակցական մարմինների ակտիվ մասնակցությամբ, դասաբաշխումներն իրականացվել են թափանցիկ,արդարացի եղանակով՝ կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով:

Տնօրինության կողմից,մանկավարժական խորհրդի և մեթոդական միավորումների նիստերում խրախուսվել են մանկավարժների ձեռնարկումները,մանկավարժները ստացել են անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական աջակցություն:

Սովորողների կրթության որակի և առաջադիմության խրախուսման համար արդյունավետ համագործակցություն է ստեղծվել ծնողների և համայնքի հետ : Ծնողները մշտական կապի մեջ են գտնվում դպրոցի հետ,տեղեկացվում են ուսումնական և կառավարման գործընթացներից,ներկայացնում են իրենց դիտարկումները և առաջարկները: Խորհրդում և խորհրդակցական մարմիններում ծանոթացվում և քննարկվում են հանրակրթության ոլորտին առնչվող օրենսդրական ակտերը :

Դպրոցը հաշվի է առնում համայնքի կարիքներն ու ներուժը, իրականացվում է համայնքային կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն ,այդ ուղղություններով ընտրվում են նախագծային թեմատիկ աշխատանքներ: Իրենց հերթին սովորողները ՝ աշակերտական ինքնավարությանը համապատասխան կազմակերպում են միջոցառումներ, իրենց վերաբերող հարցերի քննարկման ժամանակ մասնակցում որոշումների ընդունմանը:

Դպրոցի ծնողական խորհուրդը ևս իր հերթին արդյունավետ համագործակցում է տնօրինության,մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ:

Հաստատության խորհրդի անդամները,աշխատակազմը և մանկավարժական աշխատողները, սովորողները և ծնողները դրսևորում են պատշաճ վարքագիծ: Մանկավարժները հարգում են սովորողների անհատականությունը, գիտակցում են իրենց սոցիալական դերը, ցուցաբերում են քաղաքավարություն, սովորողների հետ հարաբերությունները կառուցում են փոխադարձ հարգանքի վրա,անաչառ են սովորողներին գնահատելիս:

Մանկավարժներին միավորում է փոխադարձ վստահությունը,համերաշխությունը,միմյանց աջակցելու պատրաստակամությունը: Մանկավարժները հարգալից են և փոխըմբռնումով են մոտենում սովորողների ծնողներին:

Դպրոցում իրականացվում են սովորողների ֆիզիկական,հոգևոր,սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական միջոցառումներ՝ ալկոհելի, ծխախոտի, թմրամիջոցների օգտագործման դեպքերը կանխարգելելու, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման և դրանց բացահայտման աշխատանքներ:

Ստեղծված են հանրային քննարկման մեխանիզմներ՝սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման առումով,քննարկումներն իրականացվում են մանկավարժական ,ծնողական,աշակերտական խորհուրդներում, համայնքի վարչական ղեկավարության հետ:

Ծնողական ժողովներում իրականացվում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, երեխաների նկատմամբ շահագործման դեպքերի, բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման,երեխայի զարգացման համար անվտանգ ներառական միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ:

Դպրոցում ստեղծվել են ուսումնամեթոդական նյութեր, կազմակերպվել են միջոցառումներ, բռնության,շահագործման,ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման հնարավոր դեպքերը կանխարգելելու համար: Այդ աշխատանքները պլանավորվել են դպրոցի զարգացման ծրագրով, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով,դասղեկական աշխատանքների պլաններով և վերլուծվել են յուրաքանչյուր ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների արդյունքների քննարկման ժամանակ:

Ներառական կրթության զարգացումը ամրագրված է դպրոցի զարգացման ծրագրում,պլանավորված են ներառական կրթության ապահովման միջոցառումներ, ուսուցիչների վերապատրաստումներ,իրականացվում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված ծրագրեր: Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և առանձնահատուկ կարիքներից:

Այսպիսով,որպեսզի հնարավոր լինի յուրաքանչյուր սովորողի համար հավասարապես ապահովել որակյալ կրթության,ապա նրա կրթության կազմակերպման առանցքը պետք է կազմի ներառական կրթական միջավայրը,իսկ ներառական կրթական միջավայր ձևավորելու համար պետք է գործեն հետևյալ սկզբունքները՝

-յուրաքանչյուր երեխայի համար ուսումնական հաստատությունը պետք է լինի հասանելի և մատչելի,

-յուրաքանչյուր աշակերտի համար պետք է ապահովեն ուսուցման և ուսումնառության գործընթացին մասնակցելու հավասար հնարավորություն և մատչելիություն,

-ուսուցման և ուսումնառության գործընթացը պետք է բնորոշվի կրթական ծառայությունների մատուցման այնպիսի մոտեցմամբ,որը կառուցվում է աշակերտի ուժեղ կողմերի վրա և արձագանքում նրա կարիքներին,

-դպրոցի ներառական կրթական միջավայրը պետք է խթանի ծնողների ներգրավվածությունը իրենց երեխաների կրթության կազմակերպման գործընթացում,

-աշակերտի ուսուցման և ուսումնառության գործընթացը պետք է բնորոշվի դպրոց-ընտանիք-ծառայություն շղթայի միջոցով ձևավորված փոխադարձ համագործակցությամբ՝ միտված երեխայի որակյալ կրթության գործընթացի շարունակական ապահովմանը:

թ) Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ցանկացած կազմակերպությունում մարդիկ հանդիսանում են ամենակարևոր ռեսուրսը: Դպրոցի պարագայում առավել ևս կարևորվում է ուսուցիչների,մանկավարժների, վարչատնտեսական աշխատողների արժևորումը,մոտիվացումը,խրախուսումը,քանի որ նրանք են ապահովում աշխատանքի անընդհատությունը, շարունակականությունը, ապահովում են գիտելիք, հմտություն և ներդնում ջանքեր,որոնք հաջողության հասնելու կարևոր բաղադրիչներն են . անգամ տեխնոլոգիաների գերիշխանության այս ժամանակաշրջանում աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է մարդկանց աշխատանքի որակով ու նվիրումով: Նրանց հարաբերությունները պետք է կառուցել փոխադարձ վստահության և հարգանքի վրա. դա զարգացման հզոր միջոց է,որն օգնում է մարդկանց բարելավել իրենց հմտությունները և ունենալ աշխատանքային առաջընթաց:

Անհրաժեշտ է բացահայտել աշխատակազմի կարիքները,հմտությունները,օգնել նրանց, նպատակներ սահմանել և որոշել առաջընթացի մեթոդները,խրախուսել գործի նվիրումը և անհատական զարգացումը, սատարել,այլ ոչ թե քննադատել ձգտումները, գնահատել արդյունքները և խրախուսել աշխատողի անընդհատ զարգանալու մասնագիտական կարողությունները:

Դպրոցի գործունեության հաջող կառավարումը պայմանավորված է նաև աշխատակազմի արժևորման, խրախուսման ռազմավարություններով,որտեղ նրանք իրենց զգում են ակտիվ գործընկերներ՝ աշխատանքային օրակարգը ձևավորելիս,ինչպես նաև փոփոխություններ իրականացնելիս պատրաստ են միմյանց օժանդակելու:

Աշխատակազմի ինքնակրթության և մասնագիտական զարգացման հնարավորությունների ստեղծումը պետք է լինի ծրագրավորված ,մասնակցային և շարունակական գործընթաց,որի նպատակը պետք է լինի օժանդակել աշխատակազմի մասնագիտական աճին և դպրոցի փոփոխվող պահանջների կարիքներին: Այն վերաբերում է՝

-անհատի աշխատանքային բավարարվածության բարելավմանը և դպրոցի արդյունավետության ապահովմանը,

-կադրերի առաջխաղացման օժանդակությանը՝ հնարավորություն տալով աշխատանքային առաջխաղացման ձգտողներին զարգացնելու իրենց գիտելիքներն ու հմտությունները:

Աշխատակազմի արժևորման և խրախուսման ռազմավարությունը կարող է՝

-աշխատակազմի համար ստեղծել բաց, խորհրդակցային երկխոսության մթնոլորտ,

-ապահովել վերանայման և գնահատման շարունակական գործընթացը,որը կհեշտացնի փոփոխությունների կառավարումը,

-ապահովել առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,

-համակազմը դարձնել փոփոխություններն արձագանքող,

-խրախուսել և օժանդակել առաջխաղացման և դպրոցի զարգացման ծրագրին:

Դպրոցի կրթական միջավայրի հնարավորությունները (առկա մեթոդամանկավարժական,մասնագիտական,գեղարվեստական և հանրամատչելի գրականության,էլեկտրոնային ռեսուրսների և համացանցի առկայությունը) ,ինչպես նաև դպրոցի ֆինանսական միջոցների նպատակային հատկացումը աշխատակազմի մասնագիտական, մեթոդամանկավարժական վերապատրաստման համար որոշակի պայմաններ է ստեղծում կատարելագործելու մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, աշխատակազմը լիովին օգտվում է օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքներից ,լիազորություններից և խրախուսման ձևերից:

Աշխատակազմի արժևորման և խրախուսման վառ ապացույց է այն, որ տնօրինությունը՝ լիազորված պետական մարմնի հավանությամբ,աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար դպրոցի աշխատակազմին վերջին տարիների ընթացքում բազմիցս խրախուսել է դպրոցի տնտեսված ֆոնդի միջոցների հաշվին՝ իրենց պաշտոնային կամ մանկավարժական դրույքաչափի 30 %-ի չափով,ինչի արդյունքում աշխատակազմը էլ ավելի բարեխղճորեն և պատասխանատվությամբ է մոտենում իր աշխատանքին:

ժ) Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը , ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝դրանց արդյունավետության,ցուցանիշների,շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Դպրոցի ֆինանսավորումը՝ ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ նախադպրոցական, տարրական,հիմնական կրթական մակարդակների՝ իրականացվել է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին,ինչպես նաև պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորում է այնպիսի ծրագրերի իրականացումը,ինչպիսիք են <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրով նախադպրոցական և տարրական դասարանների երեխաների սննդի ապահովման,երթևեկող մանկավարժներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցում տրամադրելու, ԲՏՀՄ ոլորտի առարկաների ուսուցիչներին,ինչպես նաև որպես մինչև 100 սովորող ունեցող գյուղական բնակավայր՝ ուսուցիչներին հավելավճարներ տրամադրելու ֆինանսական նպատակային աջակցության ծրագրերի ֆինանսավորումը, ինչը

մեծագույն խթան է հանդիսանալու գյուղական փոքր համակազմ ունեցող դպրոցի շարունակական զարգացումն ապահովելու համար և հիմքեր է ստեղծելու անձնակազմի շահադրդման և աշխատանքի արդյունավետության համար:

2019 թվական

Հանրակրթական ուսուցման ծրագրով եկամուտների նախահաշվի ընդհանուր գումարը կազմել է 29663,9 հազ.դրամ ներառյալ՝ 3767,9 հազ,դրամ տարեսկզբի դրամական միջոցների մնացորդը:

Իրականացված ծախսեր ըստ նախահաշվի հոդվածների հետևյալները են.

Ընթացիկ ծախս	Հոդված	Նախահաշիվ	Փաստացի	Շեղում
Աշխատավարձ	4111	22450,0	22449,3	-0,7
Էներգետիկ ծառայություն-ներ /էլ.էներգիա,գազ/	4212	1000,0	678,1	-321,9
Կոմունալ ծառայություններ	4213	90,0	46,0	-44,0
Կապի ծառայություններ	4214	60,0	42,2	-17,8
Ներքին գործուղումներ	4221	60,0	_	60,0
ՀԾ ծախսեր	4233	100,0	95,0	-5,0
Տեղեկատվական ծառայություններ	4234	130,0	92,7	-37,3
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	4252	100,0	100,0	0
Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	200,0	200,0	0
Կենցաղային և հանրային	4267	300,0	288,0	-12,0

սննդի նյութեր				
Մասնագիտական ծառայություններ	4241	75,0	43,0	-32,0
Պարտադիր վճարներ	4823	43,0	35,7	-7,3
Այլ ծախսեր	4861	4075,9	_	-4075,9
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	950,0	909,9	-40,1
Հատուկ նպատակային նյութեր	4269	30,0	30,0	0
Ընդամենը		**29663,9**	**25100.0**	**-4653,9**

Փաստացի եկամուտները ֆինանսավորվել են՝ այն հավասար է նախահաշվով նախատեսված եկամուտներին: 2019թ փաստացի եկամուտների ու ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս,որ դպրոցը տարեկան գործունեության արդյունքում ունեցել է տնտեսում 4653,9 հազ դրամ :

Ուսումնական և աշխատակազմի մասնագիտական զարգացման նպատակներով կատարված ծախսերը կազմում են տարեկան նախահաշվի 2.64 %-ը:

2020 թվական

Հանրակրթական ուսուցման ծրագրով եկամուտների նախահաշվի ընդհանուր գումարը կազմել է 30933,9 հազ.դրամ ներառյալ 4653,9 հազ,դրամ տարեսկզբի դրամական միջոցների մնացորդը:

Իրականացված ծախսերը հետևյալն են ըստ ճշտված նախահաշվի հոդվածների՝

Ընթացիկ ծախսեր	Հոդված	Նախահաշիվ	Փաստացի	Շեղում
Աշխատավարձ	4111	25631,2	23695,6	-1935,6
Էներգետիկ ծառայություններ	4212	1100,0	633,7	-466,3
Կոմունալ ծառայություններ	4213	75,0	39,9	-35,1

Կապի ծառայություններ Ներքին գործողումններ	4214 4221	60,0 60,0	60,0 _	0 -60,0
Տրանսպորտային այլ ծախսեր	4229	147,6	47,2	-100,4
Աշխատակազմի մասնագ-իտական զարգացման ծառայություններ	4233	100,0	95,0	-5,0
Տեղեկատվական ծառայություններ	4234	60,0	21,9	-38,1
Մասնագիտական ծառայություններ	4241	75,0	62,6	-12,4
Մեքենաների և սարքա-վորումների ընթացիկ նորոգում	4252	100,0	100,0	0
Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	200,0	200,0	0
Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266	30,0	30,0	0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	500,0	500,0	0
Պարտադիր վճարներ	4823	68,0	61,4	-6,6
Այլ ծախսերը	4861	2727,1	_	-2727,1
Ընդամենը		**30933,9**	**25547,4**	**-5386,5**

2020թ փաստացի եկամուտների և ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս,որ դպրոցը տարեկան գործունեության արդյունքում ունեցել է տնտեսում 5589,7 հազ դրամ, քանի որ փաստացի եկամուտը (203,3 հազ դրամի չափով) նախահաշիվից ավել է ֆինանսավորվել /տրանսպորտային ծախսերի փոխհատուցում / և կազմել է՝31137,2 հազ դրամ :

Ուսումնական և աշխատակազմի մասնագիտական զարգացման նպատակներով կատարված ծախսերը կազմում են տարեկան նախահաշվի 3.1%-ը և նախորդ տարվա համեմատությամբ աճել են 0.46 %-ով:

2021 թվական

Հանրակրթական ուսուցման ծրագրով եկամուտների նախահաշվի ընդհանուր գումարը կազմել է 34047,2 հազ.դրամ ներառյալ 5589,7 հազ,դրամ տարեսկզբի դրամական միջոցների մնացորդը:

Իրականացված ծախսեր ըստ նախահաշվի հոդվածների հետևյալները են.

Ընթացիկ ծախս	Հոդվածներ	Նախահաշիվ	Փաստացի	Շեղում
Աշխատավարձ	4111	26913,8	26028,1	-885,7
Էներգետիկ ծառայություններ	4212	1100,0	687,2	-412,8
Կոմունալ ծառայութ. Կապ	4213 4214	75,0 60,0	42,6 60,0	-32,4 0
Ներքին գործուղումներ	4221	60,0	_	-60,0
Այլ տրանսպորտային ծախսեր	4229	763,9	737,5	-26,4
Համակարգչային ծառայություններ	4232	100,0	95,0	-5,0
ՀԾ սպասարկման ծախս	4233	72,0	72,0	0
Տեղեկատվական ծառայություններ	4234	60,0	33,9	-26,1
Մասնագիտական ծառայություններ	4241	75,0	62,64	-12,4
Մեքենաների և սարքավո-րումների ընթացիկ նորոգում	4252	100,0	100,0	0
Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	200,0	200,0	0
Կենցաղային և հանրային Սննդի նյութեր	4267	470,0	300,0	-170,0
Հատուկ նպատակային նյութեր	4269	300,0	_	-300,0
Պարտադիր վճարներ	4823	81,3	59,9	-21,4

Այլ ծախսեր	4861	3616,2	_	3616,2
Ընդամենը		**34047,2**	**28478,94**	**-5568,3**

2021թ փաստացի եկամուտների և ծախսերի ուսումնասիրությունը ցույց է տալիս,որ փաստացի եկամուտները նախահաշվով նախատեսվածից պակաս է ֆինանսավորվել՝ 26,3 հազ դրամով /դրամաշնորհ ՀՀ պետական բյուջեից/, արդյունքում առ 01.01.2022թ դրությամբ հաշվարկային հաշվի մնացորդը կազմել է 5541,9 հազ.դրամ :

Ուսումնական և աշխատակազմի մասնագիտական զարգացման նպատակներով կատարված ծախսերը կազմում են տարեկան նախահաշվի 4.6%-ը և նախորդ տարվա համեմատությամբ աճել են 1.5 %-ով:

2022 թվական

Հանրակրթական ուսուցման ծրագրով եկամուտների նախահաշվի ընդհանուր գումարը կազմել է 34122,2 հազ.դրամ :Փաստացի կատարված ծախսերը 30053 հազ.դրամ,տարեվերջի մնացորդը՝ 4069.2 հազ.դրամ:

Իրականացված ծախսեր ըստ նախահաշվի հոդվածների հետևյալներն են.

Ընթացիկ ծախս	Հոդվածներ	Նախահաշիվ	Փաստացի	Մնացորդ
Աշխատավարձ	4111	27757	26670.2	1086.8
Էլեկտրաէներգիա	4212	350	185	165
Գազի ծախս	4212	750	568.3	181.7
Ջրամատակարարման ծախս	4213	58	23.6	34.4
Աղբահանություն	4213	12	12	0

Դեռատիզացիայի ծախս	4213	25	25	0
Կապ	4214	60	60	0
Ներքին գործուղումներ	4221	60	0	60
Երթևեկության ծախս	4229	506.4	482	24.4
Համակարգչային ծառայություններ	4232	100	95	5
Աշխատակազմի մասնագիտական զարգացում	4233	168	168	0
Տեղեկատվական ծառայություններ	4234	60	40.3	19.7
Մասնագիտական ծառայություններ	4241	140	118.2	21.8
Գազի տեխ սպասարկում	4241	25	32.6	2.4
Հրդեհային անվտանգության ծառայության ծախսեր	4241	40	30	10
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	250	0	250
Մեքենաների և սարքավո-րումների ընթացիկ նորոգում	4252	100	100	0
Գրասենյակային նյութեր	4261	200	200	0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	774.1	773.9	0.2
Հատուկ նպատակային նյութեր	4269	500	450	50
-Պարտադիր վճարներ -Աղբահանություն -Սոց.անապահով աշ. դասագրքերի գումար -Էլեկտրոնային	4823	80	0 1.8 11.1	61.1

ստորագրության ակտիվացում			6 6	
Այլ ծախսեր	4861	2096.7	0	2096.7
Ընդամենը		34122.2	30053	4069.2

Ուսումնական և աշխատակազմի մասնագիտական զարգացման նպատակներով կատարված ծախսերը կազմում են տարեկան նախահաշվի 17.8%-ը և նախորդ տարվա համեմատությամբ աճել են 13.2 %-ով:

2023 թվական

Հանրակրթական ուսուցման ծրագրով եկամուտների նախահաշվի ընդհանուր գումարը կազմել է 39074,1 հազ.դրամ :Փաստացի կատարված ծախսերը **34659.5** հազ.դրամ,տարեվերջի մնացորդը՝**4414.6** հազ.դրամ:

Իրականացված ծախսեր ըստ նախահաշվի հոդվածների հետևյալները են.

Ընթացիկ ծախս	Հոդվածներ	Նախահաշիվ	Փաստացի	Մնացորդ
Աշխատավարձ	4111	35187	31608	3579
Էլեկտրաէներգիա	4212	300	194.5	105.5
Գազի ծախս	4212	700	569.8	103.2
Ջրամատակարարման ծախս	4213	43	33.7	9.3
Աղբահանություն	4213	22	18	4
Դեռատիզացիայի ծախս	4213	25	25	0
Կապ	4214	65	60	5
Ներքին գործուղումներ	4221	45	14	31

Երթևեկության ծախս	4229	602	601.2	0.8
Համակարգչային ծառայություններ	4232	117	95	22
Տեղեկատվական ծառայություններ	4234	50	20.4	29.6
Մասնագիտական ծառայություններ	4241	260	206.9	53.1
Կրակմարիչների ձեռքբերում, լիցքավորում	4241	75	0	75
Գազի տեխ սպասարկում	4241	35	32.6	2.4
Հրդեհային անվտանգության ծառայության ծախսեր	4241	40	30	10
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	430	191.7	238.3
Մեքենաների և սարքավո-րումների ընթացիկ նորոգում	4252	75	75	0
Գրասենյակային նյութեր	4261	150	150	0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	798.1	689.5	108.6
-Պարտադիր վճարներ -Սոց.անապահով աշ. դասագրքերի գումար -Էլեկտրոնային ստորագրության ակտիվացում	4823	55	11.2 6	37.8
Ընդամենը		39074.1	34659.5	4414.6

Ուսումնական և աշխատակազմի մասնագիտական զարգացման նպատակներով կատարված ծախսերը կազմում են տարեկան նախահաշվի 3.76 %-ը և նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 14.09 %-ով:

Ընդհանուր նախահաշիվների նկատմամբ գերածախսեր թույլ չեն տրվել, առկա են նախահաշիվ հոդվածների գծով տնտեսումներ ,որի պատճառով տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում դպրոցը ունեցել է տնտեսումներ:

Հիմնական ծախսերը բաժին են ընկնում աշխատավարձի ,ջեռուցման և էլ էներգիայի հոդվածներին:

Շարունակական ընթացիկ ծախսեր են կատարվել նաև շենքի նորոգման և պահպանման, ենթակառուցվածքների բարելավման, մեքենասարքավորումների նորոգման և պահպանման , հրդեհային անվտանգության և մյուս համակարգերի տեխնիկական սպասարկման նպատակներով:

ՈՒսումնական հաստատությունների ֆինանսավորումը և հաստիքների ձևավորումը ՝ նոր փոփոխությունների համաձայն, 2023 թվականի սեպտեմբերի 1-ից կարգավորվում են <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ին N1481-Ն, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի <<Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը,դրանց նկարագիրը սահմանելու մասին>> N216-Ն որոշումներով և ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին>> N79-Ն հրամանով:

Դպրոցի ֆինանսավորման նոր հնարավորությունները թույլ կտան լուծել այնպիսի խնդիրներ,ինչպիսիք էին ղեկավարման և մանկավարժական մի շարք հաստիքների համալրումը (տնօրենի տեղակալ,տնօրենի մասնագիտացված աջակցությունների գծով տեղակալ,լաբորանտ,դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, հոգեբան, անձնակազմի կառավարման մասնագետ և այլն) . տարիներ շարունակ դրանց բացակայությունը բացասաբար է անդրադարձել աշխատանքի կազմակերպման և արդյունավետության տեսանկյունից,դպրոցը նոր հնարավորություններ է ստանում ֆիզիկական միջավայրի բարելավման, ԿԱՊԿՈՒ ,այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու,

ուսումնանյութական բազայի՝ մասնավորապես լաբորատոր ապրանքներ և նյութեր ապահովելու համար :

Կարևոր է նաև այն հանգամանքը,որ կառավարման նոր համակարգին անցնելու պարագայում ներդրվել է վարչատնտեսական մասի համակարգողի հաստիքը,որի գործունեության պարագայում դպրոցի տնօրինության հիմնական գործունեությունը և աշխատանքային գործառույթները կկենտրոնացվեն ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ,ներդպրոցական վերահսկողության , սովորողների կրթության որակի և առաջադիմության ուղղությունների վրա:

ի) Դպրոցի հիմնախնդիրները

Դպրոցի գործունեության,շենքային պայմանների,նյութատեխնիկական բազայի,կրթական միջավայրի,կառավարման և խորհրդակցական մարմինների, շահագրգիռ կողմերի, աշակերտական ու մանկավարժական համակազմերի ,սովորողների կրթության որակի և առաջադիմության վերաբերյալ վերը նշված վերլուծությունների արդյունքում կարելի է սահմանել դպրոցում առկա այն գլխավոր հիմնախնդիրները ,որոնց լուծումով են պայմանավորված աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը,սովորողների կրթությունը և կրթության որակի բարելավումը:

Ըստ այդմ՝ առանձնացնում ենք հետևյալ հիմնախնդիրները.

ա) Դպրոցի շենքային պայմանների բարելավում՝ հարմարեցված ներառական, անվտանգ միջավայրի ստեղծում,

բ) Կաթսայատան վերագործարկում՝ լոկալ ջեռուցման ապահովում,

գ) Դպրոցի նյութատեխնիկական բազայի արդիականացում,

դ) Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների կատարելագործում,

ե) Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովում:

3.Դպրոցի զարգացման նպատակներն ու խնդիրները

Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար վերլուծությունների հիման վրա սահմանվում են նպատակներ և համապատասխանաբար յուրաքանչյուր նպատակի համար խնդիրներ: Հետևաբար յուրաքանչյուր ոլորտի համար սահմանված նպատակը և դրանցից բխող խնդիրները ուղղված են վերլուծությունների արդյունքում վերհանված հիմնախնդիրների լուծմանը ,քանի որ նպատակը այն ցանկալի արդյունքն է,որին պետք է հասնենք հիմնախնդրի որոշակի լուծման արդյունքում և ձևակերպված խնդիրների լուծումը պետք է հանգեցնի դրական արդյունքների ձեռքբերմանը,որոնցից շահելու են կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողները,մանկավարժները,ծնողները,համայնքը:

Նպատակները և խնդիրները միտված են կոնկրետ արդյունքի,արտահայտված են քանակական և որակական ցուցանիշներով,դպրոցի առանձնահատկություններին և պայմաններին համապատասխան հնարավոր է հասնել դրանց լուծմանը,սահմանվել են որոշակի ժամանակաշրջանի ՝ 2024-2029 թվականների համար:

Դպրոցի ծրագրավորված զարգացումը հաստատության գործունեության տարեկան աշխատանքային ծրագրի մշակման հիմքն է, և դպրոցի տարեկան աշխատանքային ծրագրային դրույթները կառուցվելու են զարգացման ծրագրի հիման վրա և տարբեր իրավիճակներով պայմանավորված ՝պարբերաբար պետք է վերանայվի և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, հիմնավորված փոփոխություններով հավանության արժանանա կառավարման խորհրդի կողմից:

ա) Սահմանված նպատակները և խնդիրները, խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան գործողությունները , ակնկալվող արդյունքները, պատասխանատուները , իրականացման ժամկետները,գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը և դրանց կանխման հնարավոր գործողությունները

1

Ոլորտը՝ Ուսումնական ֆիզիկական միջավայրը

Նպատակը՝ Ուսումնական ֆիզիկական միջավայրի բարելավում

Խնդիրները՝ Հաստատության շահագործման խնդիրներ ունեցող ենթակառուցվածքների համապատասխանեցում նորմերով սահմանված չափանիշներին և անվտանգության նորմատիվներին, ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան ներառական ուսումնական միջավայրի ստեղծում, ուսումնանյութական բազայի համապատասխանեցում ժամանակակից կրթության պահանջներին, սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերի ապահովում:

Նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները և ակնկալվող արդյունքները	Պատասխանատուներ ժամկետներ միջոցներ

1	2
1.Դպրոցի շենքի ընթացիկ մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում. - հին պատուհանների և ետնամուտքի դռան փոխարինում նորով , կաթսայատան վերագործարկում՝ նավթային կաթսաները գազային կաթսաներով փոխարինում,որոնք կբացառեն ջերմության կորուստը, կնպաստեն էներգախնայողությանը և կապահովեն համապատասխան ջերմային ռեժիմ, - թվով 5 դասասենյակների,համակարգչային դասասենյակի, մարզադահլիճի հատակի վերանորոգում, - ապաստարանի պայմանների բարելավում: Հանդիսանալով դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ և միաժամանակ տնօրենի պարտականությունները կատարող ,դիմել եմ լիազոր մարմին և արդեն ընթացքի մեջ է գտնվում կաթսայատան վերագործարկման և նավթային կաթսաները գազային կաթսաներով փոխարինելու աշխատանքները,իրականացվում են նախագծահաշվարկային փաստաթղթերի կազմումը,ինչպես նաև դպրոցի տնտեսված միջոցների հաշվին հարց է բարձրացվել լիազոր մարմնին միջնորդելու ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, այդ միջոցները նպատակային ծառայեցնելու պատուհանների և դռների փոխարինմանը շուրջ 4 մլն ՀՀ դրամի շրջանակներում: Դպրոցի էներգետիկ ծախսերը նվազեցնելու ,ջեռուցման այլընտրանքային եղանակներ գտնելու նպատակով համագործակցել եմ ՀՊԾ կազմակերպության հետ,որի աջակցությամբ դպրոցի տարածքում արդեն հիմնվել է վերգետնյա 20 Կվտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան,որի արդյունքում էականորեն կկրճատվի դպրոցի էներգետիկ ծախսերը,ինչպես նաև արտադրված էլեկտրաէներգիան կօգտագործվի նաև դպրոցը ջեռուցելու նպատակներով,ինչպես նաև նախատեսվում է կայանին հարող տարածքում ՀՊԾ-ի աջակցությամբ հիմնել ինտենսիվ այգի և ստացված արդյունքները ծառայեցնել դպրոցում իրականացվող կայուն դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում լրացուցիչ սննդացանկի ապահովմանը : **2.Ֆիզիկական միջավայրի համապատասխանեցում՝խելամիտ հարմարեցումների միջոցով.** - խելամիտ հարմարեցումներ ապահովելու համար,նպատակային ֆինանսավորում ստանալու համար դիմել մարզպետի աշխատակազմ՝որոշելու ծախսերի նպատակահարմարությունը, իսկ հարմարեցումները իրականացնել՝ հաստատության տարածքներին, ցուցանակներին,նշաններին,սանհանգույցներին,դասասենյակներին, աշխատասենյակերին և այլ տարածքներին ներկայացվող ցուցանիշներին և չափանիշներին համապատասխան: **3.Աշխատանքի և ուսումնառության համար անվտանգ պայմանների ստեղծում.** -աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու համակարգի կատարելագործում	Տնօրեն , վարչատնտեսական համակարգող 2024-2029 թթ. Պետական բյուջե, դպրոցի բյուջե, բարերարների կամ հովանավորների ներգրավում *Ըստ առարկաների լաբորատոր նյութածախսի* տարեկան գումարը կկազմի 42830 ՀՀ դրամ, որի ֆինանսավորման չափը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022 թ. N79-Ն հրամանի հավելվածով: Վերանորոգման աշխատանքների, ՏՀՏ սարքավորումների , հակահրդեհային անվտանգության լրակազմի համար անհրաժեշտ ֆինանսական

-հակահրդեհային անվտանգության ապահովման համար ազդարարման ինքնաշխատ համակարգի ապահովում, -սովորողների և անձնակազմի համար աղետներին դիմակայելու թեմաներով ուսումնական պարապմունքների և վարժանքների իրականացում, -արտակարգ իրավիճակների փրկարար ծառայության հետ համագործակցելով իրականացնել քաղպաշտպանության պլանով սահմանված ժամանակացույցին համապատասխան ուսումնական վարժանքներ: **4.Առողջության պահպանման միջոցառումներ.** - ապահովել սանիտարահիգիենիկ համապատասխան պայմաններ առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմերին համապատասխան, - ապահովել հաստատության աղտաբանական և ախտաբանական համապատասխան միջոցառումների ժամանակին իրականացումը, - սովորողների և աշխատակազմի առողջության պահպանման համար առանձնացնել բուժկետի տարածք և առաջին բժշկական օգնություն տրամադրելու նպատակով բուժկետն ապահովել համապատասխան բուժօգնության միջոցներով և դեղորայքով,որոնց ներկայացվող պահանջները սահմանված են առողջապահության նախարարության կողմից հաստատված նորմերով , - իրականացնել աշխատանքներ `բացահայտելու և կանխարգելելու հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու, շահագործման դեպքերը, - օրենսդրությամբ սահմանված կարգով , սահմանված ժամանակացույցին համապատասխան ապահովել անձնակազմի և սովորողների նախնական և պարբերական կանխարգելիչ բժշկական ստուգումները , - <<Առողջ ապրելակերպ>> պարտադիր խմբակի,ֆիզկուլտուրայի , Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն առարկաների, դասղեկական դասաժամերին իրականացված միջոցառումների միջոցով դպրոցում հետևողականորեն ամրապնդել առողջ ապրելակերպի պահպանմանը: **5.Նյութատեխնիկական բազայի համալրում** - համակարգչային դասասենյակը համալրել համակարգչային նոր տեխնիկայով, էլեկտրոնային գրատախտակով, - լաբորատորիայի գույքը,ապրանքները և նյութերը համապատասխանեցնել բնագիտական յուրաքանչյուր առարկայի ուսումնական պահանջներին՝ հիմք ընդունելով լաբորատոր ապրանքների և նյութերի համար նախատեսված նյութածախսի ֆինանսավորմանը համապատասխան, - գեղարվեստական,հանրամատչելի գրականության, ուսումնամեթոդական,ըստ առարկաների համապատասխան ուսումնական պարագաների ապահովում: Դիմել եմ անհատ բարերարի,ում հետ համագործակցության	միջոցները որոշվելու են նախագծահաշվարկայի ն փաստաթղթերի, դրանց տեխնիկական բնութագրերին համապատասխան գնահարցումների արդյունքներով: Ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը,որը հաշվարկվում է երեք տարվա կտրվածքով 3 մլն 300 հազ. ՀՀ դրամ՝ սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 07.12.2022 թ. N79-Ն հրամանի հավելվածով:

արդյունքում դպրոցին նվիրաբերվել է նոր սերնդի մեկ համակարգիչ և միջոցառումների իրականացման համար երաժշտական նվագարկիչ: Եվս մեկ համակարգիչ և ինտերակտիվ գրատախտակ ձեռք բերելու համար իրականացվել է գնանշման մրցույթ և լիազոր մարմնի թույլտվությամբ առաջիկայում կկազմակերպվի դրանց ձեռքբերումը: Դիմել եմ <<Հայ դպրոց>> հիմնադրամին,որի հետ համագործակցության արդյունքում նվիրաբերության կարգով դպրոցը ստացավ 1.686.800 ՀՀ դրամ արժողությամբ 25 աշակերտական սեղաններ և 50 աթոռներ,ուսուցչական 10 սեղաններ և աթոռներ,10 գրատախտակներ,10 կախիչներ,ինչի արդյունքում ամբողջապես նորացավ դպրոցական գույքը : ԿԳՄՍ նախարարության կողմից դպրոցին,որպես սպորտային գույք, հատկացվել են երկու հեծանիվներ,որոնց նպատակային օգտագործումը կնպաստի սովորողների առողջ ապրելակերպի զարգացմանը և կխթանի սպորտի նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը: **Ակնկալվող արդյունքները՝** Ֆիզիկական հարմարեցված և բարենպաստ ուսումնական միջավայրի ստեղծում, շենքի ջերմային պայմանների ապահովում, անվտանգ և առողջ միջավայրի ստեղծում,առողջ ապրելակերպի ձևավորում, ուսումնառության որակի բարձրացում:	Դպրոցի խնայողությունների հաշվին արդեն համակարգչային դասասենյակը համալրվել է մեկ համակարգչով և էլեկտրոնային գրատախտակով և պրոյեկտորով՝ շուրջ 1 մլն 80 հազար ՀՀ դրամ արժողությամբ:

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը

- Դասարանների թվի նվազումը, գյուղից ընտանիքների հնարավոր արտահոսքի հետևանքով դասարանների թվաքանակի նվազումը կարող է հանգեցնել դպրոցի ֆինանսավորման կրճատման,
- Հովանավորների կամ բարերարների բացակայություն,
- Արտակարգ իրավիճակներ
- Շահառու կողմերի միջև անարդյունավետ համագործակցություն,համայնքի,ծնողների հետ թույլ համագործակցություն,
- Իրական կարիքներով պայմանավորված խնդիրների լուծմանը անտարբեր վերաբերմունք շահագրգիռ կողմերից,
- Դրամաշնորհային ծրագրերի նկատմամբ անհետևողական վերաբերմունք ,
- Ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ պլանավորում և ծախսում:

Ռիսկերի կանխմանն ուղղված գործողություններ

-Ցուցաբերել հետևողականություն, դպրոցի վերանորոգման, ուսումնանյութական բազայի համալրման խնդիրները բարձրացնել մարզպետի աշխատակազմում,

-Բարերարների և հովանավորների ներգրավման համար ապահովել դպրոցի գործունեության թափանցիկությունը, աշխատանքներ տանել համայնքի ղեկավարության,դպրոցի հարցերով շահագրգիռ հասարակական և բարեգործական կազմակերպությունների հետ,

-Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակային կառավարում ,

-Արդյունավետ համագործակցություն դպրոցի կառավարման մարմինների հետ, դպրոցի

խնդիրների և կարիքների վերաբերյալ ժամանակին և ճշգրիտ տեղեկատվության տրամադրում, -Ակտիվ փոխհարաբերություններ հաստատել միջազգային կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների,տարբեր շահագրգիռ կազմակերպությունների, համայնքի հետ, -Դպրոցում ձևավորել համագործակցային հարաբերություններ,մշակել համագործակցային ծրագրեր,որոնց իրագործմանը մասնակից դարձնել ծնողներին, մանկավարժներին և սովորողներին այն հաշվով,որ նրանք ևս շահագրգիռ և հետամուտ լինեն իրենց մասնակցությամբ դպրոցական խնդիրների լուծմանը,զգան իրենց մասնակցության կարևորությունը իրականացվող նպատակային աշխատանքներում:

2

Ոլորտը՝ Անձնակազմ(վարչական և մանկավարժական համակազմ)

Նպատակը՝ Դպրոցի կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացում

Խնդիրները՝Վարչական և մանկավարժական անձնակազմի մասնագիտական հմտությունների և կարողությունների կատարելագործում, աշխատակազմի արժևորում և խրախուսում

Նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները և ակնկալվող արդյունքները	**Պատասխանատուներ ժամկետներ միջոցներ**
1	2
1.Տնօրենի,վարչատնտեսական մասի համակարգողի,տնօրենի տեղակալի, կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողի մասնագիտական կարողությունների և հմտությունների շարունակական բարելավում. - նորմատիվ իրավական ակտերի իմացություն, - դպրոցի կառավարման և ղեկավարման հմտությունների և ունակությունների կատարելագործում, - համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններ, - դպրոցի զարգացման և աշխատանքների պլանավորման հմտությունների զարգացում, - ներդպրոցական վերահսկողության կարողությունների զարգացում, - ռեսուրսների և ժամանակի կառավարման հմտությունների կատարելագործում,	Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Տնօրենի տեղակալ Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող 2024-2029թթ.

-աշխատակազմի մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում, - նորարարությունների ներդնում և տեղայնացնում, - բարեվարքության և ժողովրդավարական արժեքների պահպանում, - աշխատանքի կազմակերպում մասնագիտական բարեվարքության կանոններին համապատասխան, - առողջ բարոյահոգեբանական,փոխադարձ հարգանքի մթնոլորտի ստեղծում և աջակցություն գործընկերներին, մանկավարժական աշխատողներին,սովորողներին և նրանց ծնողներին, - ըստ իրավիճակի կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու կարողություններ, - ժողովրդավարության և արդարության արժևորում, - դասավանդման աշխատանքների կատարման ռեժիմի համակարգում,դասացուցակի կազմմանը ներկայացվող պահանջներին համապատասխան, - աշխատողների աշխատաժամանակի և աշխատանքային ծանրաբեռնվածության կանոնակարգում:	
2.Ուսուցիչների և մանկավարժական աշխատողների դերի բարձրացում, մասնագիտական կարողությունների և հմտությունների կատարելագործում, ինքնակրթության հնարավորությունների ստեղծում,արժևորում և խրախուսում. - սահմանված ընթացակարգերով համալրել մանկավարժական թափուր աշխատատեղերը՝ ապահովելով կադրերի ընտրության և նշանակման թափանցիկ,արդարացի եղանակները, - ապահովել մանկավարժական աշխատողների օրենսդրությամբ սահմանված իրավունքների իրացումը,լիազորությունների և պարտականությունների իրականացումը, - ապահովել դպրոցում մանկավարժական ինքնավարությունը, ակադեմիական ազատությունը,խրախուսել՝ աշխատանքի արդյունավետության ,նրանց մասնագիտական զարգացման, բարեվարքության, տարակարգ ստանալու, կամավոր ատեստավորման, առկա և հեռավար դասընթացներին , վերապատրաստումներին և այլ ծրագրերին մասնակցության համար, - մշտապես գնահատել ուսուցիչների և մանկավարժական աշխատողների աշխատանքի արդյունավետությունը և տրամադրել ընթացիկ խորհրդատվություն և աջակցություն, - նրանց համար կազմակերպել ՏՀՏ կարողությունների զարգացման և կիրառման դասընթացներ, - ներդպրոցական վերահսկողության ,ուսուցչի աշխատանքի անհատական վերահսկողության, դիտարկման և գնահատման միջոցով բացահայտել ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքները և ըստ այդմ որոշել ուսուցչի մասնագիտական զարգացման կարիքներին համապատասխան վերապատրաստումների ուղղություններն ու բովանդակությունը,	Տնօրեն Տնօրենի տեղակալ Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող 2024-2029 թթ. Մշտապես իրականացվող և վերահսկվող գործընթաց

- վերապատրաաստումների ժամանակ ձեռք բերած փորձի փոխանակման հնարավորությունների ստեղծում: ---------- **3.Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ միասնական խորհրդի կոլեգիալ կառավարման ներքո գտնվող չորս դպրոցների կառավարման ,ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման,փորձի փոխանակման և զարգացման նպատակով, համագործակցելով դպրոցների հետ , ստեղծել հասարակական հիմունքներով գործող .** **1)** Չորս դպրոցների տնօրենների խորհուրդ , **2)** Չորս դպրոցների տնօրենների տեղակալների խորհուրդ **3)** Չորս դպրոցների համապատասխան առարկայական մեթոդական միավորումների նախագահների խորհուրդ: **Ակնկալվող արդյունքները՝** Աշխատանքի արդյունավետության բարձրացում, կրթության որակի և առաջադիմության բարելավում, աշխատակազմի արժևորում, խրախուսում, ինքնակրթության միջավայրի ձևավորում, բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում, հալածանքի,օտարման և բռնության կանխարգելում:	---------- Տնօրեններ Տնօրենների տեղակալներ Մեթոդմիավորումների նախագահներ

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը

- Աշխատանքի նկատմամբ պասիվություն, մոտիվացիայի ցածր մակարդակ,
- Փորձի փոխանակման համար համագործակցության բացակայություն,
- Ֆորս-մաժորային իրավիճակներ,
- Մանկավարժների գործունեության նկատմամբ ներդպրոցական վերահսկողություն իրականացնող մարմինների անհետևողական վերաբերմունք,
- Մանկավարժների մասնագիտական կարիքների ոչ օբյեկտիվ գնահատում,
- Մեթոդամանկավարժական,խորհրդատվական թույլ աջակցություն,
- Դպրոցի զարգացման,նորամուծությունների հանդեպ,աշխատանքի նկատմամբ շահադրդում չունեցող ,փորձի փոխանակման,ինքնակրթության զարգացման,դասավանդման նոր տեխնոլոգիաների ու մեթոդների ,մասնագիտական աճի և զարգացման նկատմամբ անտարբերություն ,
- Աշխատակազմի խրախուսման ,արժևորման,շահադրդման անարդյունավետ գործիքակազմի կիրառում,
-Բարոյահոգեբանական առողջ միջավայրի բացակայություն:

Ռիսկերի կանխմանն ուղղված գործողություններ

- Կարողանալ աշխատակազմին շահադրդել,խրախուսել, հիմնավորել սպասվելիք աշխատանքի դրական արդյունքները,
- Հիմնավորել,որ յուրաքանչյուրի աշխատանքի արդյունավետությամբ և փորձի փոխանակմամբ և այլ դպրոցի հետ համագործակցությամբ է պայմանավորված դպրոցի աշխատանքի արդյունավետությունը, ուսումնառության առաջադիմությունը և կրթության որակի բարձրացումը,
- Պասիվ մանկավարժներին շահադրդելու համար ստեղծել պայմաններ հաջողված մանկավարժների օրինակով,

- Դպրոցում ամրապնդել մանկավարժական աշխատողների և կառավարման ու խորհրդակցական մարմինների համագործակցությունը, - Խրախուսել մանկավարժների ինքնակրթությամբ զբաղվելուն,նախաձեռնությունների հանդեպ ստեղծել նպաստավոր միջավայր,աջակցել նրանց տարբեր նախագծերին և միջոցառումներին մասնակցությունը, կրթական նորարարություններին հաղորդակցվելուն, - Պայմաններ ստեղծել մանկավարժների, խորհրդակցական և դպրոցի կառավարման մարմինների ակտիվ աշխատանքի և համագործակցության համար, - Իրականացնել համապատասխան կանխարգելիչ բնույթ կրող աշխատանքներ՝ բացառելու պարտականությունների կատարման նկատմամբ աշխատակիցների բացթողումները, - Աշխատակազմին մշտապես իրազեկել հանրակրթության ոլորտի օրենսդրական փոփոխություններին,մանկավարժական գիտության և դասավանդման մեթոդիկայի նոր ռազմավարություններին՝ ի ցույց դնելով կարողունակահեն կրթության դերը ուսման որակի բարելավման գործում:

3

Ոլորտը՝ Կառավարման և խորհրդակցական մարմիններ, դպրոց-համայնք համագործակցություն

Նպատակները՝ Հասարակություն-դպրոց կապի ամրապնդում, աշխատանքի արդյունավետության բարձրացում

Խնդիրները՝Խորհրդի և խորհրդակցական մարմինների, տեղական ինքնակառավարման և կրթության կառավարման մարմինների հետ համագործակցության ընդլայնում, հասարակություն-դպրոց կապի խորացում

Նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները և ակնկալվող արդյունքները	**Պատասխանատուներ ժամկետներ միջոցներ**
1	2
1.Կառավարման խորհրդի -տնօրինության -վարչատնտեսական համակարգող կողմերի համագործակցված աշխատանքի կազմակերպում. - հանրակրթության մասին օրենսդրության,դպրոցի կանոնադրության,պաշտոնեական գործառույթների և պարտականությունների ,բարեվարքության վարքականոնների, թափանցիկության,փոխադարձ վստահության և աջակցության	Տնօրեն Վարչատնտեսական համակարգող Տնօրենի տեղակալ ՄՄ նախագահներ ԾԽ նախագահ

շրջանակներում, ի շահ դպրոցի, և սովորողների կրթության ապահովել հաստատության կոլեգիալ և գործադիր կառավարումը , - խորհրդի անդամներին մշտապես իրազեկել դպրոցում տեղի ունեցող գործընթացների մասին, - դպրոցի զարգացման ծրագրի կատարմանը ընթացիկ աջակցության ցուցաբերում և վերահսկողություն զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացմանը, քննարկել զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալ եզրակացություն,քննարկել ուսումնադաստիարակչական գործունեության ,այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները, - օրենսդրությամբ չարգելված արտաբյուջետային հնարավոր միջոցների ներգրավում, - հաշվետվողականության մեխանիզմների բարելավում և գործունեության թափանցիկության ապահովում, - ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատում, - քննարկել ներքին և արտաքին գնահատման արդյունքները, հաստատել դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները, - դպրոցի գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան լիազորված մարմին ներկայացնել նպատակային առաջարկություններ, ---------- **2.Մանկավարժական խորհրդի աշխատանքների արդյունավետ կազմակերպում.** - ապահովել մանկավարժական խորհրդի բնականոն աշխատանքը (անհրաժեշտության դեպքում մանկխորհրդի աշխատանքներին մասնակից դարձնել ծնողներին և սովորողներին), - մանկավարժական խորհրդում մշտապես ներկայացնել և քննարկել դպրոցի զարգացման ծրագրով սահմանված և պլանավորված աշխատանքների ընթացքը և արդյունքները, - քննարկել կրթական ծրագրերի իրականացման ընթացքը և արդյունքները,սովորողների առաջադիմության և կրթության որակի , արտադասարանական աշխատանքների, գնահատման մեխանիզմների,նախագծային աշխատանքների ընթացքի և արդյունքների, երկարօրյա ուսուցման կազմակերպման, հանրակրթության պետական նոր չափորոշչի շարունակական ներդրման ընթացքի և արդյունքների,առարկայական չափորոշիչների կիրառման և ապահովման հարցերը, ուսուցիչների և մանկավարժական աշխատողների աշխատանքների արդյունավետությունը,	

- մանկավարժական խորհրդի օրակարգում մշտապես վերահսկողության տակ պահել մանկավարժական խորհրդի որոշումների կատարման ընթացքը և արդյունքները, - եռամակարդակ քննարկումներով ապահովել ֆիզիկական միջավայրի կամ խելամիտ հարմարեցումների կարիքները: ---------- **3.Մեթոդական միավորումների աշխատանքների արդյունավետ կազմակերպում.** -իրականացնել հսկողություն առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների համակարգման նկատմամբ, նոր չափորոշչով ուսուցում իրականացվող դասարանների ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կազմակերպվող երկարօրյա պարապմունքների գործունեության ապահովման նկատմամբ, - նպաստել սկսնակ ուսուցիչների մասնագիտական աջակցության կազմակերպմանը, - ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, - աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը. - ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին, - քննարկել մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդական միավորման կազմում ըդգրկված ուսումնական առարկաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ձեռնարկները, նոր փորձարկվով դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալ երաշխավորություններ, - նպաստել ուսուցիչների (դասվարների,նախակրթարանի դաստիարակի,դաստիարակի օգնականի) մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը, աջակցել նրանց ատեստավորմանը նախապատրաստվելիս, - կազմակերպել մասնագիտական և մեթոդամանկավարժական խորհրդակցություններ , ընթերցումներ,սեմինարներ, խորհրդատվություններ, կազմակերպել առարկայական օլիմպիադաներ, մրցույթներ և այլ միջոցառումներ, - կատարել ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկությունների ներկայացում տնօրենին, - ուսումնական պլանի դպրոցական անհատական/ընտրովի/բաղադրիչ ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում մանկավարժական խորհրդի քննարկմանը, - նիստերը գումարել սահմանված կարգով և ժամկետներում , անհրաժեշտության դեպքում հրավիրել արտահերթ նիստեր:	

4.Ծնողական խորհրդի աշխատանքների արդյունավետ կազմակերպում. - ծնողական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացում, - ծնողական խորհուրդ-տնօրինություն-խորհուրդ-մանկավարժական խորհուրդ- աշակերտական խորհուրդ համագործակցության ապահովում, - ծնողական խորհրդի ներգրավում դպրոցի կառավարման, ուսումնական գործընթացի իրականացման,ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին տրամադրվող աջակցության, արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ուսուցիչների խրախուսման գործընթացներին, - որպես մանկավարժական խորհրդի անդամ ապահովել ծնողական խորհրդի նախագահի մասնակցությունը մանկավարժական խորհրդի նիստերին, - համադպրոցական ծնողական ժողովները և ծնողական խորհրդի նիստերը կազմակերպել սահմանված ժամկետներում՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի, անհրաժեշտության դեպքում հրավիրել արտահերթ ժողովներ և նիստեր, - ամրապնդել դպրոցի և ծնողների միջև կապերը,ծնողներին ապահովել տեղեկատվությամբ, նրանց ծանոթացնել իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը:	
5.Աշակերտական խորհրդի գործունեության արդյունավետ կազմակերպում. - դպրոցի կանոնադրությանը և աշակերտական խորհրդի կանոնադրությանը համապատասխան ձևավորել աշակերտական խորհուրդ,որը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան գործունեությամբ, կառուցված փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտում կիրականացնի իր գործառույթները, - աշակերտական խորհրդի գործունեության ուղղությունները և ներկայացրած առաջարկությունները պետք է արտացոլեն սովորողների կարքիները և շահերը, - դպրոցի տնօրինությունը, խորհուրդը և խորհրդակցական մարմինները պետք է օժանդակեն սովորողների նախաձեռնություններին, - տնօրինության և մանկավարժական խորհրդի կողմից սովորողներին վերաբերող խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ ապահովել սովորողների ներկայացուցչի մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին,	

6.Դպրոց-համայնք-կրթության կառավարման մարմիններ համագործակցության զարգացում. - ապահովել դպրոց-համայնք սերտ համագործակցությունը՝ դպրոցի մասնակցությունը համայնքի աշխատանքներին, - բարձրացնել սովորողների տեղեկացվածության աստիճանը համայնքային խնդիրների մասինէ ապահովելով դպրոցի մասնակցությունը համայնքում իրականացվելիք հանրօգուտ աշխատանքներին, - համայնքի բնակիչներին հրավիրել դպրոցում իրականացվող մշակութային, մարզական միջոցառումներին, - նախագծային աշխատանքների թեմաներ ընտրելիս առաջնահերթություն տալ համայնքային հիմնախնդիրներին (որպես օրինակ 2023-2024 ուստարվա 7-րդ դասարանում իրականացված ուսումնական կարևոր նախագիծ էր <<Աղբավայրի վնասակար հետևանքները համայնքի բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար>> ,իրականացված նախագծի արդյունքում համայնքի այդ լուրջ հիմնախնդիրը սովորողների միջոցով բարձրացվեց տեղական ինքնակառավարման մարմնի ուշադրությանը և սովորողները հիմնախնդրի լուծման իրենց առաջարկություններով հանդես եկան): - ներգրավել համայնքի բնակչության մասնակցությունը ինչպես դպրոցի ,այնպես էլ համայնքի հիմնախնդիրների լուծմանն և աջակցմանը, - ակտիվ համագործակցային հարաբերություններ ստեղծել ՏԻՄ-ի , լիազորված պետական մարմնի՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, ԿԳՄՍ նախարարության, ԿԶՆԱԿ-ի,ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի ,ՀՄԿ-ի, իրավապահ և փրկարար ծառայությունների , ուսումնական հաստատությունների, մշակութային և հասարակական կազմակերպությունների հետ, - ակտիվ համագործակցություն ապահովելու համար լինել հրապարակային և թափանցիկ, դպրոցի գործունեությունը ներկայացնել նաև առցանց հարթակներում: ---------- **Ակնկալվող արդյունքները՝** Դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացում, ուսումնադաստիարակչական աշխատանքների ,սովորողների կրթության որակի և առաջադիմության բարելավում,առարկաների դասավանդման որակի բարձրացման համար ուսուցման նոր եղանակների ,մեթոդների ներդնում,դպրոց-ծնող-համայնք-ՏԻՄ-շահագրգիռ բոլոր կողմերի համագործակցության ապահովում և ակտիվ մասնակցության դպրոցական կյանքին, դպրոցի վարկանիշի բարձրացում, աջակցություն դպրոցին:	

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը

- Համագործակցության և կողմերի միջև մոտիվացիայի ցածր մակարդակ,
- Ֆորս-մաժորային իրավիճակներ,
- Համայնքի,ՏԻՄ-ի,կառավարման խորհրդի հետ փոխադարձ համագործակցության, նախաձեռնությունների բացակայություն,փոխադարձ անտարբեր մոտեցում,
- Դպրոցի հետ համագործակցության անտարբեր վերաբերմունք ծնողական համայնքի կողմից,
- Լիազոր մարմինների հետ համագործակցության պակաս ,ժամանակին արձագանքման բացակայություն,
- Դպրոցի կառավարման մարմինների հետ համագործակցությունը կազմակերպելու համար անգործություն, պասիվություն,
- Դպրոցի կողմից անտարբեր վերաբերմունք ընտանիքների սոցիալական խնդիրներին,որոնցով պայմանավորված է նաև սովորողների առաջադիմությունը,
- Դպրոցի կողմից անտարբեր վերաբերմունք և մասնակցության բացակայություն համայնքային այնպիսի ծրագրերին,որոնք ունեն կրթամշակութային ուղղվածություն,
- Բազմակարծության ,հավասարության, մասնակցային սկզբունքների ապահովման և օժանդակման համար նպաստավոր պայմանների ստեղծման համար անարդյունավետ գործիքակազմի կիրառում:

Ռիսկերի կանխմանն ուղղված գործողություններ

- Կարողանալ կողմերին շահադրդել,խրախուսել, հիմնավորել սպասվելիք արդյունքները,
- Յուրաքանչյուր կողմին պարզաբանել ,որ իր մասնակցությունը և համագործակցությունը ծառայելու է՝ ի շահ դպրոցի և համայնքի,
- Խորացնել համայնքի ,ՏԻՄ-ի հետ համագործակցությունը մարզական,մշակութային , կրթական ,համայնքային խնդիրներին վերաբերող բնապահպանական ուսումնական նախագծերի իրականացման միջոցով ,
- Մանկավարժներին և սովորողներին ակտիվորեն ներգրավել համայնքի սոցիալ-մշակութային կյանքին, համայնքի և ՏԻՄ-ի ներկայացուցիչներին իրազեկել դպրոցում տեղի ունեցող գործընթացներին,խրախուսել նրանց ակտիվ մասնակցության կարևորությանը,
- Ներդնել դպրոց-ծնող համագործակցության արդյունավետ գործիքակազմ,
- Իրազեկել ծնողներին դպրոցում իրականացվող կառավարման, ուսումնադաստիարակչական գործընթացների վերաբերյալ ,տրամադրել համապատասխան տեղեկատվություն(այդ թվում նաև էլեկտրոնային հարթակներով),շահադրդել համագործակցության `ապահովելով ծնողների համար կրթական գործընթացին մասնակցության հավասար պայմաններ,
- Ապահովել արդյունավետ համագործակցություն կառավարման մարմինների հետ՝ կազմակերպելով կառավարման մարմինների ներկայացուցիչների այցեր, իրականացնել քննարկումներ,
- Կառավարման մարմինների հետ համագործակցությանը մասնակից դարձնել մանկավարժական ,ծնողական խորհուրդներին ,աշակերտական համակազմին,
- Շահագրգիռ բոլոր կողմերի հետ համագործակցությունն ուղղել ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանը,մանկավարժական համակազմի մասնագիտական զարգացմանը, դպրոցի կառավարման արդյունավետության բարձրացմանը,արտադասարանական ու արտադպրոցական աշխատանքների աշխուժացմանը:

Ոլորտը՝ Աշակերտական համակազմ

Նպատակը՝ Կարողունակ քաղաքացու ձևավորում

Խնդիրները՝Սովորողների ուսման որակի և առաջադիմության բարձրացում, արժեհամակարգի ձևավորում, սովորողների ներառում,մասնագիտական կողմնորոշում

Նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները և ակնկալվող արդյունքները	Պատասխանատուներ ժամկետներ միջոցներ
1	2
1.Աշակերտների կրթական կարիքների բացահայտում - բացահայտել յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական կարիքները, - կիրառել ուսուցման անհատական և տարբերակված մոտեցում, - ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ցածր առաջադիմության պատճառների բացահայտում,կրթական աջակցության ծառայությունների պլանի մշակում, հանդիպումների կազմակերպում նրանց ուսուցիչների և ծնողների հետ, - ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար երկարօրյա ուսուցման միջոցով առաջադիմության բարելավում, - մեթոդմիավորումների, մանկխորհուրդի նիստերում քննարկել ցածր առաջադիմություն ունեցող սովորողների ուսումնառության ընթացքի , երկարօրյա ուսուցման ,նրանց հետ տարվող աշխատանքների կազմակերպման հարցերը, գնահատել կատարված աշխատանքների արդյունքները, - ապահովել սովորողների մոտ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ձևավորումը և զարգացումը, - դասավանդման որակի ապահովման համար առարկայական ուսումնասիրությունների միջոցով դասավանդման որակի շարունակական մշտադիտարկում, գնահատում, - դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում ԿԱՊԿՈՒ սովորողներին, - ԿԱՊԿՈՒ սովորողի ուսումնառությունը կազմակերպել յուրաքանչյուրի համար մշակված ԱՈՒՊ-ի միջոցով ՝ վերահսկելով այդ գործընթացը, որակի ապահովման համար համագործակցել ՏՄԱԿ-ի հետ, - ստեղծել հավասար պայմաններ բոլոր երեխաների համար անկախ նրանց կարիքներից,կարողություններից և սոցիալական անապահովության աստիճանից, - ապահովել սովորողների հավասար մասնակցությունը ուսումնական գործընթացին, արտադասարանական միջոցառումներին,արտադասարանական խմբակներին,	Տնօրինություն Մանկավարժներ Ծնողներ 2024-2029թթ. Մշտապես իրականացվող և վերահսկվող շարունակական գործընթաց

աշակերտական խորհրդում. - ապահովել սեռերի հավասարության գործակիցը՝ ներգրավելով նաև ազգային փոքրամասնությունների երեխաներին, - սովորողների կրթական կարիքների բավարարմանն ուղղված աշխատանքների որակի մշտադիտարկում, - նպատակային ուսումնասիրությունների միջոցով դիտարկել սովորողների գիտելիքները,հմտությունները,դիրքորոշումները, ուսումնական գործընթացին նրանց մասնակցությունը, արժեքային մոտեցումները, - վերահսկել սովորողների վարքը, - կանոնակարգել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, - համակարգել և վերահսկել ուսումնական խմբակների , մասնագիտական կողմնորոշման ակումբի աշխատանքները, - ապահովել սովորողների համար դպրոցի հնարավորությունների սահմաններում կրթական ռեսուրսների հասանելիությունը, - ապահովել առարկայական օլիմպիադաներին,մշակութային և մարզական միջոցառումներին սովորողների ակտիվ մասնակցությունը, - աջակցել սովորողներին մասնագիտական կողմնորոշման ընտրության հարցում, - նպաստել սովորողների գեղագիտական, էկոլոգիական, հայրենասիրական,քաղաքացիական դաստիարակությանը, - ուսումնական գործընթացում զարգացնել սովորողների քննադատական մտածողությունը, մեդիա գրագիտությունը, կարողությունների զարգացմանը,ՏՀՏ կիրառման ոլորտում , - հայտնաբերել կրթությունից դուրս մնացած երեխաներին և ապահովել նրանց ներգրավումը ուսուցման գործընթացին, - սովորողների համար կազմակերպել ճանաչողական այցեր մշակութային օջախներ, - սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի հմտություններ:	
2.Բուլինգի դրսևորումների բացահայտում և կանխում. -իրականացնել սովորողների նկատմամբ բռնության,ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման,դրանց մասին զեկուցման ,կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ, -իրականացնել մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ, -աշխատանքներ կազմակերպել ծնողների հետ ընտանիքներում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխաների զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման խնդիրների վերաբերյալ ծնողներին իրազեկելու միջոցառումների	Տնօրեն Տնօրենի տեղակալ Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Դասղեկներ Ուսուցիչներ Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Հոգեբան

իրականացում, **-<<Բուլինգը ,դրա դրսևորումները և կանխումը դպրոցում>>** թեմայով քննարկումներ իրականացնել սովորողների,մանկավարժների, ծնողների հետ, ինչը հնարավորություն կտա ճանաչել <<բուլինգ>> երևույթն ու դրա կանխարգելման համար թե՛ մանկավարժների,թե՛ ծնողների ,թե՛ սովորողների դերը: -Իրականացնել <<բուլինգ>> թեմայով ինտերակտիվ ներկայացումներ, որոնք առավել հասանելի և ինտերակտիվ եղանակով սովորողների մոտ կձևավորեն պատկերացումներ բուլինգի, դրա բացասական հետևանքների ու ազդեցության և հաղթահարման խնդիրների շուրջ, -ուժեղացնել մանկավարժների կարողությունները բուլինգին արձագանքման հարցերի շուրջ և երեխաներին ավելի տեղեկացված և պաշտպանված դարձնել նմանատիպ իրավիճակներում հայտնվելուց և նպաստել առանց բռնության միջավայր կերտելուն:	2024-2029թթ. Մշտապես իրականացվող և վերահսկվող շարունակական գործընթաց
---	---
3.Սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ իրականացվող աշխատանքներ Անձի մասնագիտական ուղղվածության ու կարողությունների բացահայտման աշխատանքները պետք է սկսել նախադպրոցական տարիքից՝ կողմնորոշման սուբյեկտ դիտարկելով ոչ թե միայն խորհրդատու մասնագետին,այլ ներառելով բոլոր ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող անձանց՝ առարկայական ուսուցիչներ,դասղեկներ,կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, հոգեբան, ծնողներ,գործատուներ: Կարևոր է սովորողների նախասիրությունների և անձնային որակների բացահայտումն ու զարգացումը և նախընտրած մասնագիտության համադրումը աշխատաշուկայի ներկա և նախատեսվող պահանջարկի հետ: Դպրոցում մասնագիտական կողմնորոշումը պետք է լինի ուսուցման ու դաստիարակության գործընթացների անբաժան մաս,որոշակի առումով նաև մանկավարժական գործընթացի օրգանական և բնականոն շարունակությունը, հանրակրթության տրամաբանական ավարտը: Մասնագիտության ընտրության հարցում խորհրդատվությունը նպատակ ունի ապագա մասնագիտության համար առավել անհրաժեշտ առարկաների ավելի խորը ուսումնասիրությանը, նաև նախադրյալներ ստեղծելու աշխատանքային միջավայրին, մասնագիտության արդյունավետ հարմարմանը,այլ նաև ապագայի նկատմամբ տեսանկյունից վստահության ձևավորմանը: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքները դպրոցում պետք է իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթացում, նաև արտադասարանական պարտադիր աշխատանքների ժամանակ: Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների հիմնական	Տնօրեն Կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Դասատիարակաչական աշխատանքների կազմակերպիչ Դասղեկներ Հոգեբան 2024-2029թթ. Մշտապես իրականացվող և վերահսկվող շարունակական գործընթաց

նպատակը սովորողների կողմից մասնագիտության գիտակցված ընտրությանը նպաստելն է,ինչը հնարավոր է ձեռք բերել հետևյալ խնդիրների լուծման արդյունքում՝ -տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն սովորողի նախասիրություններին, հակումներին,անձնային որակներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, -ձևավորել աշխատանքի և հասարակական հարբերությունների նկատմամբ համարժեք վերաբերմունք, -նպաստել կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության միջոցով ինքնազբաղվածության ապհովմանն ուղղված գիտելիքների,կարողությունների և հմտությունների ձևավորմանը, -հոգեբանամանկավարժական դիագնոստիկ մեթոդներով բացահայտել սովորողների անհատական հոգեբանական առանձնահատկությունները՝ իմացական գործընթացների առանձին հատկանիշները, բնավորությունը, խառնվածքը, ընդունաությունները, նախասիրությունները, հակումները, հետաքրքրուությունները,պահանջմունքները,դրդապատճառները, -կազմակերպել և անցկացնել խմբային դասընթացներ՝ ուղղված կարիերայի պլանավորման հմտությունների զարգացմանը, -խոցելի սոցիալական խմբերի սովորողների հետ անցկացնել անհատական աշխատանք՝ ուղղված աշխատաշուկա մուտք գործելու խոչընդոտների բացահայտմանն ու դրանց հաղթահարմանը, -ձևավորել համագործակցության ճկուն համակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների,ինչպես նաև գործատուների,սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների, շահագրգիրռ այլ կառույցների միջև: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներում կարևոր նախապայման է անձի դիագնոստիկան,ստացված տվյալների վերլուծությունը,ինչի հիման վրա պետք է կազմվի սովորողի հետ աշխատանքի անհատական ծրագիրը: Նպատակահարմար է մասնագիտական կողմնորոշման աշխատանքի անհատական և խմբային ձևերի կիրառումը՝ տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ: Անհատական խորհրդատվության դեպքում կարելի է կիրառել դիտման,թեստավորման,անկախ բնութագրերի վերլուծության, հարցազրույցի կամ զրույցի մեթոդները: Անկախ բնութագրերի վերլուծության ժամանակ մանկավարժը սովորողի մասին իր ամփոփիչ նկարագիրը կազմելու համար պետք է կարծիքների հավաքի դասավանդողներից, ընկերներից,նաև ծնողներից ՝ նրան դիտելով շրջապատող միջավայրում: Թեստավորումը ենթադրում է անձի կողմից մասնագիտության նախնական ընտրության և անձնային որակների չմիջնորդավորված բացահայտում: Խորհրդատվական և տեղեկատվական զրույցը պետք է ունենա թեմատիկ ուղղվածություն և կարող է անցկացվել տնօրենի,	

մանկավարժների,սովորողների,ինչպես նաև ծնողների հետ: Զրույցի թեմաները մասնագիտություններն են,դրանց առանձնահատկությունները,մասնագիտական հմտությունների և կարողությունների ձեռքբերման յուրահատկությունները, պայմանները: Սովորողներին մասնագիտական կողմնորոշման ծառայությունների արդյունքը պետք է լինի՝ -սովորողին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովումը և ուղղորդումը, -սովորողի կողմից նախընտրած մասնագիտության հիմնավորումը, -աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորումը, -սովորողի ինքնորոշումը, -կարիերայի պլանավորման և ձեռնարկատիրական գործունեության մասին առաջնային իմացությունը: Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների արդյունքը կդառնա գնահատելի,եթե առկա կլինեն հետևյալ հարցերի պատասխանները՝ -ընտրե՞լ է սովորողը մասնագիտություն, -ի՞նչն է ազդել ընտրության վրա, -նա ունի՞ համապատասխան տեղեկություն իր նախընտրած մասնագիտության մասին, -համապատասխանո՞ւմ է այն իր հետաքրքրություններին և հնարավորություններին, -նախընտրած մասնագիտությունը համապատասխանո՞ւմ է սովորողի ֆիզիկական առողջությանը, -արդյո՞ք ծնողների կողմից ընդունելի է նրա նախընտրությունը : Դպրոցում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման շրջանակներում նախատեսվում է ձևավորել **մասնագիտական կողմնորոշման խորհուրդ** ,որի հիմնական նպատակը կդառնա համակարգել ծառայությունների իրականացման գործընթացը: Խորհրդի կազմում կընդգրկվեն ներկայացուցիչներ դպրոցի ղեկավար և մանկավարժական կազմից ՝ մասնագետ մանկավարժներ,ծնողական և աշակերտական խորհուրդներից, գործընկեր և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ (զբաղածության տարածքային կենտրոն, մասնագիտական ուսումնական հաստատություն,ՏԻՄ,գործատու): Խորհուրդը կղեկավարի տնօրենը կամ կրթական աջակցությունների և դաստիարկչական աշխատանքների համակարգողը: Խորհրդի հիմնական խնդիրը պետք է լինի պլանավորել, կազմակերպել,մշտադիտարկել և կառավարել դպրոցում սովորողների տրամադրվող մասնագիտական կողմնորոշման ծառայությունների իրականացման ուղղությամբ աշխատանքներն ու միջոցառումները, կապեր հաստատել դպրոցից դուրս կառույցների ու մասնագետների հետ, միջոցառումների ընթացքում առաջացած խնդիրներին տալ համապատասխան լուծումներ: **Խորհուրդն իրավունք է ունենալու՝**	

-առաջադրված խնդիրները համատեղ քննարկելու և լուծելու նպատակով ,ըստ անհրաժեշտության, իր նիստերին հրավիրելու շահագրգիռ անձանց, մասնագետների,գործատուների և մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, -ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով, նախաձեռնությունների և միջոցառումների կազմակերպման վերաբերյալ դպրոցին ներկայացնելու առաջարկություններ, **Խորհրդի պարտականություններն են լինելու՝** -դպրոցում մասնագիտական կողմնորոշման ռեսուրս-կենտրոնի ստեղծում, -մասնագիտական կողմնորոշման տարեկան պլանների քննարկում և հաստատում, -սովորողներին ուսումնական հաստատություններին ծանոթացնելու նպատակով միջոցառումների կազմակերպում, -ուսուցիչների,մանկավարժ-մասնագետների համար սովորողների մասնագիտական կողմնորոշման գործընթացին վերաբերող թեմաներով պարբերաբար դասախոսությունների, գործնական կարողությունների ձևավորման պարապմունքների նացկացում, -պարբերաբար տեղեկատվության տարածում, մասնագիտական կողմնորոշման գործընթացների լուսաբանում, -հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների,նրանց ծնողների,ուսուցիչների և այլ շահագրգիռ կողմերի համար դասախոսությունների,ինտերակտիվ քննարկումների,զրույցների,ցուցադրությունների,էքսկուրսիաների, բաց դռներիօրերի կազմակերպում և անցկացում, -պարբերաբարկատարված աշխատանքների վերլուծություն: **Մասնագիտական կողմնորոշման խորհրդի կազմում կարող են ընդգրկվել՝** - կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողը, -դաստիարակչական աշխատաքների կազմակերպիչը, - հոգեբանը, -գրադարանավարը, -բուժաշխատողը, -ծնողական խորհրդի նախագահը, -դասղեկները, -աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, -գործատուները:	
---	---
4.Սովորողների գնահատման չափանիշների ներդրում Չափորոշչի կարևոր գործառույթներից է նաև ընթացիկ գնահատման ներդրման հարցերը: Գնահատման նպատակը պետք է լինի որոշել յուրաքանչյուր	Ըստ՝ ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցի Տնօրեն Տնօրենի տեղակալ

սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ առարկայական չափորոշիչներով և առարկայական ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռքբերած գիտելիքների,հմտությունների,դիրքորոշումների և արժեքների ձևավորման աստիճանի: Գնահատումը պետք է նպատակաուղղել սովորողների ուսումնական գործունեության խթանմանը,ուսուցման և ուսումնառության վերահսկմանը ու շարունակական բարելավմանը և զարգացմանը՝ ապահովելով հավաստիության,հուսալիության,մատչելիության,արդարության, թափանցիկության և օբյեկտիվության սկզբունքներ: Գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը պետք է օգտագործել սովորողների կրթական կարիքների բացահայտման,անհրաժեշտ վերլուծությունների, ուսումնական առաջընթացի, բացահայտված դժվարությունների,ինչպես նաև սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար : Ուսուցման և դասավանդման գործընթացում կիրառվելու է սովորողների գնահատման հետևյալ տեսակները. **1.Հայտորոշիչ գնահատում-**որի կիրառմամբ պետք է բացահայտել սովորողի ունեցած նախնական գիտելիքները,հմտությունները,վերաբերմունքն ու արժեքները նոր թեմայի վերաբերյալ ,այն հնարավորություն կտա պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը և դրան համապատասխան ուսուցչի կողմից ընտրելու դասավանդման գործընթացի կազմակերպման նպատակային և արդյունավետ մեթոդներ ու եղանակներ: Հայտորոշիչ եղանակով գնահատման ձևերի (բանավոր հարցում, բաց հարցերով քննարկում, թեստ կամ գրավոր այլ աշխատանք) ընտրությունը պետք է կատարի ուսուցիչը՝ հաշվի առնելով սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, ուսումնասիրվող առարկայի , դասի թեմայի առանձնահատկությունները: **2.Ձևավորող գնահատում-**ուսուցման և ուսումնառության գործընթացի բարելավման համար ձևավորող գնահատումն նպատակ ունի բացահայտել յուրաքանչյուր սովորողի , ինչպես նաև ամբողջ դասարանի ձեռբերումները,դժվարությունները,բացթողումները: Ձևավորող գնահատման միջոցով պետք է ապահովել ներառական ,փոխներգործուն ու համագործակցային ուսուցման և ուսումնառության միջավայրի ստեղծում,սովորողների զարգացմանը նպաստող ,կառուցողական հետադարձ կապ,սովորողի կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերում:Ձևավորող գնահատումը պետք է ապահովի սովորողի ստացած ձեռքբերումների համեմատությունը նախկինում նրա ունեցած ձեռքբերումների հետ:	Մեթոդական միավորումների նախագահներ Ուսուցիչներ Մշտապես իրականացվող և վերահսկվող շարունակական գործընթաց

Ձևավորող գնահատման ձևերն(բանավոր հարցում, գրավոր աշխատանք,տնային աշխատանք,քննարկում,բանավեճ,նախագծային աշխատանք, գործնական, լաբորատոր աշխատանք,թեստ) կիրառելիս անպայմանորեն պետք է հաշվի առնվի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները,ուսուցանվող նյութի բովանդակությունը, սովորողի կրթական կարիքները: Ձևավորող գնահատումը պետք է ապահովի՝ **1)Ուսումնառության սահմանված վերջնարդյունքների հաշվառում** Ուսուցիչների կողմից սովորողների առաջադիմության կանոնավոր մշտադիտարկումը և վերջնարդյունքների մասին անընդհատ հիշեցումը պետք է օգնեն սովորողներին մտքում մշտապես պահել ուսումնառության վերջնարդյունքները,ունենալ հստակ թիրախներ,որոնց ուղղությամբ պետք է աշխատեն: Ուսուցիչները պետք է օգնեն հստակեցնելու բարդ ,անհասկանալի և դժվար ըմբռնելի կետերը, որպեսզի սովորողները լինեն ուսումնառության ճիշտ ուղու վրա: **2)Բարենպաստ կրթական միջավայրի ստեղծում** Ձևավորող գնահատման կիրառմամբ ուսուցիչները պետք է հավաքեն անհրաժեշտ տեղեկություններ սովորողների ուսումնառության կարիքների վերաբերյալ: Եթե ուսուցիչը գիտի ,թե ինչի կարիք ունեն սովորողները հաջողություններ ունենալու համար նա պետք է ստեղծի այնպիսի կրթական միջավայր,որը կմոտիվացնի,կքաջալերի յուրաքանչյուր սովորողին գրանցելու աճ: **3)Ուսումնական ձեռքբերումների բարելավում** Ձևավորող գնահատման հիմնական գործառույթը սովորողներին կանոնավոր կերպով հետադարձ կապ տրամադրելն է իրենց առաջնթացի վերաբերյալ՝ նրանց ուղղորդելով դեպի սահմանված վերջնարդյունքների ձեռքբերմանը ,այն պետք է օգնի մանկավարժներին սովորողներին հնարավորինս մոտեցնել նախանշված վերջնարդյունքների ձեռքբերմանը: **4)Սովորողի մոտիվացիայի բարձրացում** Քանի որ ձևավորող գնահատումը ներառում է ինչպես ուսումնառության վերջնարդյունքերը, այնպես էլ դեպի վերջնարդյունքները տանող առաջընթացի անընդմեջ չափումն ու ստուգումը, ապա սովորողների մոտ բարձրանում է սովորելու մոտիվացիան:Երբ սովորողները ունենան հստակ նպատակ,արդյունքները նկատելի կդառնան: **5)Սովորողի ուսումնական գործընթացին ներգրավվածության աճի ապահովում** Սովորողները պետք է իրական իմաստ տեսնեն այն աշխատանքներում,որոնք կատարում են դասարանում, կապեն	

ուսումնառության վերջնարդյունքները իրական կյանքի խնդիրների և իրադարձությունների հետ , ուսումնառության նպատակով տարբեր գործողություններ կատարեն,որոնց միջոցով բավարարեն աշխարհի նկատմամբ իրենց հետաքրքրասիրությունը:

6)Նպատակային հետադարձ կապի կիրառում

Բնութագրական հետադարձ կապով թվարկվում է սովորողի ձեռքբերումները ,նրա կողմից թույլ տրված սխալները, վեր է հանվում և ընդգծվում ուսումնական նյութի ընկալմանը խանգարող բացթողումները, առաջարկություններ է արվում սովորողին, թե ինչպես կարելի է բարելավել իր ուսումնառությունը՝ ապահովելով երկկողմ բարենպաստ ուսումնական գործընթաց ուսուցչի և սովորողի միջև:

7)Նպատակային ուսուցման կազմակերպում

Ձևավորող գնահատման տվյալների վերլուծությունը թույլ կտա ուսուցիչներին անդրադառնալու և ուսումնասիրելու իրենց իսկ գործունեությունը,որպեսզի որոշվեն ցանկալի արդյունք ապահովելու արդյունավետ դասավանդման մեթոդներ:

8)Անկախ սովորողներ

Սովորողներին իրենց ուսումնառությունը մշտադիտարկելու և պատասխանատվություն կրելու համար անհրաժեշտ հմտություններ սովորեցնելը ձևավորելու է ինքնակառավարվող կամ անկախ սովորողների :

Անհրաժեշտ է սովորողներին ապահովել որակյալ աշխատանքի օրինակներով և այլ հնարավորություններով՝ վերանայելու և ճշգրտելու իրենց սեփական աշխատանքը ,որպեսզի ձևավորվեն անկախ և ինքնուրույն մտածող սովորողներ:

9)Տվյալների հիման վրա որոշումների կայացում

Ուսումնառության ընթացքի հաճախակի ստուգումները թույլ կտան ուսուցիչներին կայացնելու լուրջ որոշումներ,որոնք պետք է հիմնավորված լինեն տվյալներով և ապացույցներով:

3.Ամփոփիչ գնահատման նպատակը պետք է լինի ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումը՝ դասի,թեմայի,կիսամյակի,ուստարվա ավարտին,ինչպես նաև կրթական աստիճանի (տարրական և հիմնական)ավարտին ամփոփիչ ատեստավորման միջոցով ՝ միավորային կամ բնութագրող գնահատման եղանակներով: Ամփոփիչ գնահատման մեթոդների ընտրությունը կատարելու է ուսուցիչը՝ մեթոդական մասնախմբերի նիստերում քննարկվելու,հավանության արժանանալու և տնօրենի կողմից հաստատվելու պարագայում և ուսումնական տարվա ընթացքում ,ըստ անհրաժեշտության, կարող են փոփոխվել կամ լրացվել:

1) Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողի

ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է ,որը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է միավորներով,որի դեպքում կիրառելի է 10-միավորային սանդղակը: Միավորային գնահատումը իրականացվելու է գնահատման այնպիսի ձևերով,ինչպիսիք են ՝ բանավոր հարցումը,թեստը,գրավոր աշխատանքը,գործնական ,լաբորատոր աշխատանքները, նախագծային աշխատանքը և այլն: Պետք է նկատի ունենալ ,որ միավորային գնահատման ցանկացած ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ և ձևավորող գնահատումները: **2)Բնութագրող գնահատում-** սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու, ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով կազմվում է սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը (1-4-րդ դասարանների կիսամյակների և 5-րդ դասարանի առաջին կիսամյակի ավարտին և տարրական կրթական ծրագրի ավարտին): Բնութագրող գնահատման ընթացքում ուսուցիչը պետք է արձանագրի սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը, տեղեկատվության մտապահումը,աշխատանքի ճշգրիտ և մանրակրկիտ կատարումը, առարկայական գիտելիքների,հմտությունների,վերաբերմունքի և արժեքների յուրացումը, սովորողի ուսումնառության մոտիվացիան, սովորողի ինքնուրույնությունը,սովորողի ինքնագնահատման ունակությունը:	----------
----------	
5.Ուսումնական նախագծերի վրա հիմնված ուսուցման միջոցով սովորողների կրթության որակի և ուսումնառության բարելավում Հանրակրթական պետական նոր չափորոշչով նախատեսված է ,որ յուրաքանչյուր սովորող սկսած 7-րդ դասարանից պետք է տարվա մեջ իրականացնի առնվազն 1 ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Նախագծերի վրա հիմնված ուսուցման մեթոդի կիրառման ընթացքում սովորողները տնական աշխատանքի ընթացքում ձեռք կբերեն գիտելիքներ և հմտություններ ,կուսումնասիրեն, կվերլուծեն և կպատասխանեն արդիական և բարդ հարցերի,խնդիրների կամ մարտահրավերների և ձեռք կբերեն ավելի խորը գիտելիքներ: Նախագծային ուսուցումը պետք է անդրադառնա արդիական հարցերի ,խնդիրների կամ մարտահրավերների՝ առանց դրանց լուծման կանխորոշված տարբերակի,որը պահանջում է անհրաժեշտ գիտելիքների իմացություն և հմտությունների տիրապետման մակարդակ, քննադատական մտածողություն,խնդիրների լուծում, համագործակցություն և հաղորդակցման տարբեր ձևեր: Ուսումնական նախագծի վրա հիմնված ուսուցման առավելություններից է այն, որ արդյունավետ ուսումնական	Տնօրեն Տնօրենի տեղակալ Մեթոդական միավորումների նախագահներ Մշտապես իրականացվող և վերահսկվող շարունակական գործընթաց

նախագծերը կխրախուսեն սովորողներին խորությամբ աշխատել խնդրի վրա, ինչը կնպաստի իրական գիտելիքի և փորձի կարևորության ընկալմանը: Սովորողները կներգրավվեն ժամանակացույցի կազմման աշխատանքներում,ինչը կձևավորի ինքնահսկողություն և պատասխանատվություն: Ուսումնական նախագծերը,հետազոտական աշխատանքները կնպաստեն սովորողի հետազոտական,ստեղծագործական, նախաձեռնողական,ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտություններ ձևավորմանը և հնարավորություն կտան նրան ինքնուրույն կամ մյուսների հետ համատես աշխատանքի շնորհիվ գործնականորեն կիրառել ձեռքբերած գիտելիքները և դրսևորել իրողությունները քննադատաբար ուսումնասիրելու, վերլուծելու, ստեղծագործական նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ, որոշումներ կայացնել,հիմնավորել և պաշտպանել իրենց տեսակետը քննարկումների ժամանակ: Ուսումնական նախագծերի իրականացման ժամանակ համագործակցային ուսուցումը կխրախուսի սովորողների ակտիվ ներգրավվածությունն ու մասնակցությունը ուսումնական գործընթացում,նրանց մոտ կձևավորվի թիմային աշխատանքի,ինչպես նաև ընդհանուր պատասխանատվության զգացում: Ուսումնական նախագծերը պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով ուսումնական նախագծերին ներկայացվող պահանջները,որոնք սահմանված են նախագծային ուսուցման հայեցակարգում: Դասավանդող բոլոր ուսուցիչները պետք է տիրապետեն նախագծային ուսուցման մեթոդաբանությանը,ուսումնական նախագծի պլանի գնահատման չափանիշներին: Ուսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից,թե որքանով են դասավանդողները կարողունակ Հանրակրթական պետական չափորոշչով սահմանված,ինչպես նաև առարկայական ծրագրերում ներառված թեմաների առանձնահատկություններից ելնելով պլանավորելու և իրականացնելու նախագծերի վրա հիմնված ուսուցում: --- **6.Նպատակային դասալսումների իրականացման միջոցով ուսումնառության որակի շարունակական բարելավում,այդ թվում <<Թիչ>> դասալսման գործիքի միջոցով** Ելնելով դպրոցին առաջադրված ներկայիս պահանջներից, դասալսումների ժամանակ՝ որպես ներդպրոցական վերահսկողության կարևոր կողմերից մեկը, պետք է ուշադրություն դարձնել դասի հետևյալ բաղադրիչներին . **1.Դասի կահավորանք** -ուսումնական նյութերը և ուսումնաօժանդակ գործիքները (դասագրքեր,պաստառներ, ցուցադրական և դիդակտիկ նյութեր,	---------- Տնօրեն Տնօրենի տեղակալ Մեթոդական միավորումների նախագահներ Մշտապես

բառարաններ,քարտեզներ, ատլասներ և այլն) օգտագործվո՞ւմ են արդյունավետ և դասի նպատակներին և վերջնարդյունքներին համապատասխան: **2.Դասի կառուցվածք** -արդյոք դասի նպատակը և վերջնարդյունքը բխո՞ւմ են նոր ծրագրերից, -դասի նպատակը և վերջնարդյունքների միջև կապը առկա՞ է, -դասի կառուցվածքի համապատասխանությունը դասապլանին . եթե կա շեղում.ապա ո՞րն է շեղման պատճառը, -ինչպե՞ս է դասի ընթացքը նպաստում վերջնարդյունքների իրականացմանը, -դասի տարբեր փուլերի միջև կապն առկա՞ է ,անցումները սահո՞ւն են, -խմբային աշխատանք կազմակերպվո՞ւմ է դասաժամին, -աշակերտների ներգրավվածությունը դասին ինչպիսի՞ն է, -տրված առաջադրանքի կամ փուլի համար ժամանակի հստակ սահմանում և վերահսկում կա՞, -ուսուցչի խոսքին հատկացվող ժամանակը և աշակերտի խոսքին տրվող ժամանակը ինչպե՞ս է բաշխված, -նյութի մատուցումը ուսուցչի կողմից մատչելի՞ է արվում, -ինչպիսի՞ մեթոդներ է կիրառում ուսուցիչը դասը բազմազան դարձնելու և նյութը հեշտությամբ մատուցելու համար, -ներառարկայական և միջառարկայական կապեր ստեղծվո՞ւմ են տվյալ դասաժամին, -դասի ամփոփում արվո՞ւմ է, -տնային հանձնարարություն տրվո՞ւմ է, -տնայինների ստուգումը ինչպե՞ս է իրականացվում և քննարկվո՞ւմ է արդյոք աշակերտների թյուրըմբռնումը: **3.Սովորողների կարողունակությունների զարգացում** -սովորողների ո՞ր կարողունակություններն է զարգացնում ուսուցիչը տվյալ դասաժամին, -ինչպե՞ս,ի՞նչ առաջադրանքներով է ուսուցիչը զարգացնում այդ կարողունակությունները, -խմբային աշխատանք կատարելիս ո՞ր կարողունակությունների վրա է ուսուցչի շեշտադրումը, -սոցիալական նորմերի,անձնային արժեքների դաստիարակում արվո՞ւմ է դասաժամին, -սովորողների արդյունավետ համագործակցային կարողունակությունը զարգացնելու համար ի՞նչ է անում ուսուցիչը տվյալ դասաժամին, -սովորողների ակտիվ լսելու,հաղորդակցվելու հմտությունների զարգացմանը միտված ինչպիսի՞ ուսումնական գործունեություն է կազմակերպում ուսուցիչը, -թեմայի շուրջ իրական կյանքի ինչպիսի՞ իրավիճակներ է	իրականացվող և վերահսկվող շարունակական գործընթաց

առաջադրում,որպեսզի զարգացնի սովորողների կարողունակությունները՝ քննադատական մտածողություն, ստեղծագործականություն, համագործակցություն, հաղորդակցություն, -զարգացնո՞ւմ է սովորողների հետազոտելու հմտությունները՝ դասը սկսելով հետազոտող մտագրոհային առաջադրանքով, -քննադատական մտածողությունը զարգացնելու համար առաջարկո՞ւմ է սովորողներին միասին դուրս բերել առաջադրանքի կատարման հաջողության չափանիշները: **4.Սովորողներին տրվող հետադարձ կապ** -ինչպիսի՞ հետադարձ կապ է տրվում սովորողներին, -ի՞նչ պարբերությամբ է ուսուցիչը տրամադրում հետադարձ կապ սովորողներին, -հետադարձ կապն ո՞ւնի մեկնաբանող,կառուցողական բնույթ, -հետադարձ կապը դրսևորվո՞ւմ է խրախուսող բառերի միջոցով, -հետադարձ կապն աջակցո՞ղ է ,այսինքն՝ հստակ ասվում է ,թե՞ ինչը պետք է բարելավի աշակերտը, -հետադարձ կապը հասկանալի՞ է սովորողին,չափի մեջ ուղղորդո՞ղ է. այսինքն՝ ասվում է ,թե ինչպես բարելավել պատասխանը, -հետադարձ կապը տրվո՞ւմ է անհատապես սովորողին և բխո՞ւմ է ուսումնառության համատեքստից, -հետադարձ կապը տրվո՞ւմ է և՛ սովորողին,և՛ ամողջ դասարանին, -հետադարձ կապը սովորողի մտածողությունը խթանո՞ւմ է: **5.Առաջադրանքների բազմազանություն** -ինչպիսի՞ առաջադրանքներ են տրվում սովորողներին , -առաջադրանքի նպատակը հասկանալի՞ է, -առաջադրանքները նպաստո՞ւմ են սահմանված վերջնարդյունքների իրականացմանը, -առաջադրանքները արդյոք հասկանալի և մատչելի՞ են ներկայացվում սովորողին, -առաջադրանքները կարողունակությունների զարգացմանը միտվա՞ծ են, -առաջադրանքները միջառարկայական կապ ստեղծո՞ւմ են այլ առարկաների հետ, -ուսուցչի աջակցության աստիճանը առաջադրանքների կատարման ընթացքում ինչպիսի՞ն է, -ի՞նչ բարդությամբ են կազմված առաջադրանքները, -ըստ առաջադրանքների տարբերակում արվո՞ւմ է, -առաջադրանքը համապատասխանո՞ւմ է սովորողի կարիքներին.հետաքրքրություններին, -հնարավորություն տալի՞ս է սովորողին կապակցելու նոր ձեռքբերած գիտելիքները, հմտությունները,արժեքները,վերաբերմունքը հնի հետ, -առաջադրանքները հիմքեր ստեղծո՞ւմ են սովորողի հետագա	

ուսումնառության համար, -առաջադրանքները կազմված են խաչվող հասկացությունների հիման վրա: **6.Հարցադրումների մեթոդ** -հարցադրումները արդյո՞ք պարզից բարդ են կազմված, -հարցադրումները բխում են արդյո՞ք դասի նպատակից, -որքանո՞վ են հարցադրումները հասկանալի,պարզ,մատչելի և հակիրճ, -հարցադրումների ի՞նչ տեսակներ է կիրառում ուսուցիչը, -հարցադրումների միջոցով ներգրավո՞ւմ է բոլորին, -ուսուցիչը հարցադրումների միջոցով տարբերակում անո՞ւմ է, -հարցադրումները խթանո՞ւմ են սովորողի բարձր մտածական հմտությունների զարգացմանը, -տրվո՞ւմ են արդյոք վերլուծական մտածողության զարգացնող հարցեր, -հարցերի պարզաբանումը ինչպե՞ս է ընթանում, -ովքե՞ր են հարցադրումներ կատարողները՝ սովորողները,թե՞ ուսուցիչը. -ուսուցիչը խթանո՞ւմ է սովորողներին հարցադրումներ անել, -ուսուցիչը սովորեցնո՞ւմ է ճիշտ հարցեր ձևակերպել: **7.ՏՏ գործիքների կիրառումը** -կիրառո՞ւմ է արդյոք ուսուցիչը ՏՏ գործիքներ, -ի՞նչ նպատակով է ուսուցիչը կիրառում ՏՏ գործիքներ, -սովորողները կարողանո՞ւմ են օգտագործել ՏՏ գործիքներ դասաժամին, -ՏՏ գործիքների կիրառմամբ ուսուցիչը սովորեցնում է աշակերտին աշխատել տեղեկատվության առցանց աղբյուրների հետ, -տեխնոլոգիաների կիրառմամբ ուսուցիչը բարձրացնում է դասի արդյունավետությունը, աշակերտների նպատակային ներգրավվածությունը դասին, -ուսուցչի կիրառած գործիքները անհատականացնում են ուսումնառության գործընթացը է հնարավորություն տալով յուրաքանչյուր սովորողի սովորելու՝ ըստ իր կրթական կարիքի, -ՏՏ գործիքների կիրառմամբ ուսուցիչը բարելավում է սովորողների գիտելիքը, -տեխնոլոգիաների կիրառմամբ դասը սովորողի համար տեսողականացված է, -ՏՏ գործիքների կիրառմամբ դասանյութի ընկալումը սովորողի կողմից դառնում է ավելի թեթև, մատչելի և միաժամանակ հաճելի: **8.Գնահատում** -ուսուցիչը կիրառո՞ւմ է սովորողների գնահատման չափանիշներով սահմանված գնահատման տեսակներ և գործիքներ, -գնահատումը միտվա՞ծ է յուրաքանչյուր սովորողի ուսումնական	

գործունեության խթանմանը, ուսուցման և ուսումնառության վերահսկմանը, բարելավմանը և շարունակական զարգացմանը, -գնահատման գործընթացի հիմքում ընկա՞ծ են հավաստիության,օբյեկտիվության, մատչելիության,արդարության և թափանցիկության սկզբունքները, -գնահատականները որքանո՞վ են հիմնավորվում և մեկնաբանվում, -հայտորոշիչ գնահատումը օգտագործվո՞ւմ է պլանավորելու ուսուցման և ուսումնառության գործընթացը և ի՞նչ ձևերով է իրականացվում, -ձևավորող գնահատումն ապահովո՞ւմ է ներառական,փոխներգործուն ու համագործակցային ուսուցում և ուսումնառության միջավայրի ստեղծում, սովորողի զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապ,ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերում, -միավորային գնահատման դեպքում գնահատված միավորները համապատասխանո՞ւմ են սահմանված 10-միավորային սանդղակի գնահատման բնութագրիչներին, -բնութագրող գնահատման դեպքում սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը կազմվո՞ւմ է սովորողի ուսումնական ձեռքբերումները նկարագրելու,ուսումնառության որևէ փուլի արդյունքներն ամրագրելու նպատակով: Ուսուցչի կողմից խրախուսվո՞ւմ է նախաձեռնողականության դրսևորումը,հարցերին պատասխանելը,ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցությունը, խմբում աշխատելու պատրաստակամությունը: Այսպիսով՝ կրթության որակի և առաջադիմության հետագա բարելավումը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով,թե ինչպես կկատարվեն ՀՊՉ-ի, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջները: --- **Ակնկալվող արդյունքները՝** Սովորողների կրթության որակի և առաջադիմության բարելավում, ներառական կրթության և հավասարության ապահովում, հանդուրժողականության մթնոլորտի ստեղծում,ուսումնառության և դաստիարակության գործընթացում սովորողների կարողունակությունների ձևավորում, մասնագիտական ընտրության հարցում նրանց օգնության ցուցաբերում, ճանաչողության և հետաքրքրությունների զարգացում, արժեքային համակարգի ձևավորում, առողջության պահպանում, հանգստի և ժամանցի կազմակերպում, հանրակրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտում և ընդգրկում դպրոց:	----------

Նպատակի և դրանից բխող խնդիրների իրականացման հնարավոր ռիսկերը
- Ֆորս-մաժորային իրավիճակներ, - Մասնագիտական կողմնորոշման դժվարություններ, - Ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտների հաղթահարման համար անհրաժեշտ ռեսուրսների և միջոցների անբավարարություն, վերաբերմունք, կարծրատիպեր - Սովորողների հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված դեռահասության շրջանի խնդիրներ:
Ռիսկերի կանխմանն ուղղված գործողություններ
- Աշակերտների շրջանում մշտական տարվող դաստիարակչական աշխատանքների և կրթական աջակցությունների տրամադրում, - Հանդուրժողականության վերաբերյալ միջոցառումների իրականացում, գիտակցական վերաբերմունքի ձևավորում, - Աշակերտական խորհրդի հետ ակտիվ համագործակցություն, - Դպրոց-ծնող-համայնք համագործակցության ուժեղացում:

4.Դպրոցի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողության մեխանիզմները

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի , դպրոցի կանոնադրության 33-րդ կետի 1-ին ենթակետի, 48-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների համաձայն՝ տնօրենը խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը, իսկ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և դպրոցի կանոնադրության 33-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների համաձայն ՝ պետական ուսումնական հաստատության խորհուրդը աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն:

Զարգացման ծրագրի արդյունքների գնահատումը պետք է իրականացնել պարզ և բարդ ցուցանիշների համեմատական ներկայացման,ինչպես նաև համապատասխան հաշվետվությունների և այլ միջոցներով, դրանք պետք է հասանելի լինեն դպրոցի շահառուներին(պետական լիազորված մարմիններ,դպրոցի աշխատակազմ, ծնողներ, սովորողներ, համայնք և այլն): Զարգացման ծրագրում ընթացիկ աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ պարբերաբար հրապարակել մատչելի տեղեկատվություն դպրոցի պաշտոնական էլեկտրոնային կայքում, դպրոցի հայտարարությունների համար առանձնացված տեղում, իրազեկել մանկավարժներին, ծնողներին ժողովների և քննարկումների ժամանակ:

Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի վերահսկողությունը պետք է իրականացնել ծրագրում նախապես մշակված միջոցառումների միջոցով,որոնք ժամանակի ընթացքում պարբերաբար կարող են ենթարկվել փոփոխությունների:

Դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային ծրագրի մշակման համար հիմք է հանդիսանալու դպրոցի զարգացման ծրագիրը և տարեկան աշխատանքային ծրագրային դրույթները պետք է կառուցվեն զարգացման ծրագրի հիման վրա:

Դպրոցի զարգացման ծրագիրը,ըստ անհրաժեշտության և հիմնավորվածության, կարող է վերանայվել և կատարված փոփոխությունները պետք է քննարկվեն և հավանության արժանանան դպրոցի խորհրդի կողմից:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները>> հաստատելու մասին N35-Ն հրամանի հավելվածի 3-րդ կետի համաձայն ՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո երեսուն աշխատանքային օրվա ընթացքում ՝ խորհրդին ներկայացնել հաշվետվություն՝ դպրոցի զարգացման ծրագրի տվյալ տարվա համար սահմանված գործողությունների և արդյունքների կատարողականի վերաբերյալ :

Տարեկան աշխատանքային պլանի հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունը,ըստ բովանդակությանը ներկայացվող պահանջների, ներառելու է՝

1. Զարգացման ծրագրով նախատեսված նպատակներին ուղղված գործողությունների արդյունքները և դրանց հիմքերը,

2. Չկատարված կամ թերի կատարված գործողությունների հիմնավոր պատճառները,

3. Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները,

4. Հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները,

5. Ըստ անհրաժեշտության այլ ցուցանիշներ:

Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները

N	Նպատակներին ուղղված գործողությունների արդյունքները և դրանց հիմքերը	Չկատարված կամ թերի կատարված գործողությունները	Դրանց պատճառները	Փոփոխությունների և լրացումների առաջարկություններ	Հաղորդակցության և համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները

1					
2					
3					
4					

Հաշվետվության ձևաչափին կցվելու են փաստացի տվյալներ , վերլուծություններ, հիմնավորող փաստաթղթեր՝ յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման վերաբերյալ:

Դպրոցի զարգացման ծրագրի կատարողական ցուցանիշները պետք է ներառեն հետևյալ հիմնական ցուցանիշները՝

1.Զարգացման ծրագրի իրականացումը տնօրենի առաջնորդությամբ խթանում է սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը՝ ուսուցման և ուսումնառության ընդհանուր պատկերացումների,դրանց զարգացման,քննարկման, իրականացման և գնահատման արդյունքում,

2. Դպրոցի ուսումնական պլանը ամեն տարի կազմվում է դպրոցում գործող կառավարման և խորհրդակցական մարմինների ակտիվ ներգրավվածությամբ՝ որպես մասնակցային գործընթաց՝հենված լինելով հանրակրթության պետական չափորոշչի ,համայնքի և դպրոցի գործունեության նպատակների վրա,

3.Դպրոցում ուսումնական տարվա ընթացքում և դրա ավարտին պարբերաբար իրականացվում է սովորողների առաջադիմության տվյալների , անցկացվող ընթացիկ,ամփոփիչ և արտաքին գնահատումների,կիրառվող մանկավարժական մեթոդների ու մոտեցումների վերլուծություն՝ դրանց արդյունքում բարելավելով առաջադիմության ցուցանիշները՝ ամեն տարի ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համամասնության կրճատման և սովորողների առաջադիմության միջին ցուցանիշների բարելավման միջոցով,ինչպես նաև,ըստ անհրաժեշտության, վերանայելով մանկավարժական մոտեցումներն ու մեթոդները,

4.Ապահովում է ուսուցիչների հասանելությունը անհրաժեշտ ռեսուրսներին(մարդկային, ժամանակային,նյութատեխնիկական)՝ մանկավարժական ընտրված մեթոդների և մոտեցումների կիրառությունն ապահովելու համար,

5.Գործում է ներդպրոցական վերահսկողության արդյունավետ համակարգ՝ ուսումնական տարվա ընթացքում ուսումնառության և ուսուցման գործընթացում առկա խնդիրների բացահայտման և դրանց կարգավորման համար,

6.Դպրոցում ապահովված է մանկավարժական ինքնավարության, ակադեմիական ազատության , դրական և ապահով մթնոլորտ բոլոր շահակիցների համար,

-ուսումնական գործընթացն իրականացվում է կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում,

-որոշումները կայացվում են համագործակցության արդյունքում, առանձին իրավիճակների կամ խնդիրների քննարկման ժամանակ ապահովում է բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը,

-կառավարման գործընթացում բոլոր շահակիցների խմբերին պարբերաբար հատկացվում է ժամանակ՝ անհրաժեշտ դիտարկումներ և առաջարկներ ներկայացնելու համար,

-մանկավարժական աշխատողների ընտրությունն իրականցվում են արդարացի և բարեխիղճ եղանակով, գործում է նրանց աջակցության և զարգացման համակարգ,

-մանկավարժական աշխատողների թափուր տեղերի համալրումն իրականացվում է սահմանված ընթացակարգերի համաձայն ՝ ապահովելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը,

-մանկավարժական աշխատողների թափուր տեղերի մրցույթի արդյունքում դրա չհամալրման պարագայում արդյունավետ կիրառվում են օրենսդրության շրջանակներում նախատեսված գործիքակազմերը՝ առարկայի ուսուցման շարունակականությունն ապահովելու նպատակով,

-դասաբաշխումներն իրականացվում են կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացման սկզբունքներից ելնելով, դրանց կազմման սկզբունքները թափանցիկ են և ընկալելի գործընթացների բոլոր մասնակիցների համար,

-մանկավարժական աշխատողները խրախուսվում են մասնագիտական զարգացման տարաբնույթ ծրագրերի մասնակցության համար, ամեն տարի մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցող և դրա արդյունքում վարձատրության բարձրացում գրանցող աշխատակիցների թիվն ամեն տարի աճում է (կամավոր ատեստավորում, տարակարգի ձեռքբերում),

-պարբերաբար իրականացվում են դասալսումներ տնօրենի և տնօրենի տեղակալի կողմից, դրանց արդյունքները քննարկվում են առարկայական մասնախմբերում և մանկխորհրդի նիստերում,մանկավարժներին ցուցաբերվում է անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական աջակցություն,

-տնօրենի կողմից իրականացվում է մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում և հետադարձ կապի ապահովում՝ դրանց արդյունքում մանկավարժների

կողմից ուսուցման գործընթացում նոր հմտությունների, մեթոդների կիրառությունն ապահովելու համար:

8.Կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով դպրոցն ապահովում է արդյունավետ հաղորդակցություն ուսումնական գործընթացի շահակիցների հետ և ներգրավվում է համայնքին՝

-ծնողները ժամանակին իրազեկվում են ուսումնական գործընթացի մասին, մասնակցում են կառավարման գործընթացինէ ներկայացնելով իրենց դիտարկումները ու առաջարկները,

-կառավարման և խորհրդակցական մարմիններում քննարկվում են հանրակրթության ոլորտին վերաբերող օրենսդրական առաջարկներն ու նախագծերը,առկայության դեպքում ներկայացվում են առաջարկներ և դիտարկումներ դրանց վերաբերյալ ,

-նախագծային և այլ աշխատանքների իրականացման ժամանակ իրականացվում է համայնքային կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն և դրանք հաշվի են առնվում աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ,

-դպրոցի զարգացման նպատակով հաշվի են առնվում համայնքի կարիքներն ու ներուժը, առաջարկվում են նոր ծրագրեր և մոտեցումներ, արդյունավետ է համագործակցությունը և կապը կրթության ոլորտի ,ուսուցչական կազմակերպությունների, արհեստակցական միությունների, այլ շահագրգիռ կողմերի հետ:

Զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները ,հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը պետք է ներկայացնել կառավարման խորհրդի հաստատմանը: Զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացվում է կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն երկու անգամ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

Հաստատության զարգացման ծրագրի կատարման ընթացքը վերահսկելու համար կառավարման խորհուրդը կարող է ստեղծել վերահսկող հանձնախումբ: Եթե ծրագրի ընթացիկ կատարողականի ներկայացմամբ ի հայտ են գալիս բոցթողումներ, թերություններ,ապա կառավարման խորհուրդը որոշում է կայացնում այն վերացնելու ուղղությունների մասին և սահմանում համապատասխան ժամանակացույց:

Դպրոցի զարգացման ծրագրի նպատակներին ուղղված գործողությունների արդյունքների կատարման գնահատման սանդղակներն՝ ըստ զարգացման ծրագրի բաղադրիչների՝ յուրաքանչյուր գործողության համար

1.Դպրոցի գործունեություն

2.Իրավիճակի վերլուծություն

3.Նպատակների և խնդիրների սահմանում

4.Սահմանված խնդիրների և նպատակների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

5.Պատասխանատուներ

6.Արդյունքների գնահատման չափանիշներ

7.Ռիսկեր

8.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաներ:

Զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի գնահատման համար կիրառվելու է 4 վարկանիշ՝

1.Արդյունավետ- 9-10 միավոր (եթե զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70% -ը գնահատվել է արդյունավետ),

2.Զարգացնող- 7-8 միավոր (եթե զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70%-ը գնահատվել է զարգացնող),

3.Բավարար 4-6 միավոր (եթե զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 70%-ը գնահատվել է բավարար),

4.Ոչ արդյունավետ- 0-3 միավոր(եթե զարգացման ծրագրի բոլոր բաղադրիչների հանրագումարի նվազագույնը 50%-ը գնահատվել է ոչ արդյունավետ):

№	**1.Դպրոցի գործունեություն**	Արդյունավետ 9-10 միավոր	Զարգացնող 7-8 միավոր	Բավարար 4-6 միավոր	Ոչ արդյունավետ 0-3 միավոր	Հիմնավորում
1.	Զարգացման ծրագրով սահմանված սովորողների որ կրթական կարիքներն են բարելավվել					
2.	Զարգացման ծրագիրը ինչպես է համապատասխանել և աշխատանքի ընթացքում համապատասխանեց վել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու					

	խմբերի կարիքներին ու հնարավորություններին					
3.	Որքանով է զարգացման ծրագիրը համապատասխանել դպրոցի ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին					
	Ընդամենը միավորներ					
	Միջին թվաբանական միավորը					

№	**2.Իրավիճակի վերլուծություն**	Արդյունավետ 9-10 միավոր	Զարգացնող 7-8 միավոր	Բավարար 4-6 միավոր	Ոչ արդյունավետ 0-3 միավոր	Հիմնավորում
1.	Որքանով են զարգացման ծրագրով ներկայացված դպրոցի շենքային պայմանները բարելավվել և արդյունավետ օգտագործվել					
2.	Ինչ չափով է համալրվել նյութատեխնիկական բազան					
3.	Որքանով է արդյունավետ եղել դպրոցի խորհրդի և տնօրենի համագործակցությունը					
4.	Որքանով է արդյունավետ եղել դպրոցի համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների, շահառու					

	կազմակերպություններ ի հետ					
5.	Որքանով է դպրոցի ուսումնական միջավայրը հարմարեցվել սովորողների որակյալ ուսուցմանը և ուսումնառության կազմակերպմանը					
6.	Որքանով է իրականացվել մանկավարժական համակազմի՝ մասնագիտական որակների զարգացումն ապահովվող միջոցառումները					
7.	Որքանով է կրթության որակն ապահովվել չափորոշչային պահանջներին համապատասխան					
8.	Ինչ արդյունավետությամբ են կիրառվել դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և նորարարությունները					
	Ընդամենը միավորներ					
	Միջին թվաբանական միավորը					

№	**3.Սահմանված նպատակների և խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների և արդյունքների , պատասխանատուն**	Արդյունավետ 9-10 միավոր	Զարգացնող 7-8 միավոր	Բավարար 4-6 միավոր	Ոչ արդյունավետ 0-3 միավոր	Հիմնավորում

	երի, ժամկետների և անհրաժեշտ միջոցների մասին					
1.	Յուրաքանչյուր խնդրի իրականացման համար իրականացված գործողությունները որքանով են բխում նպատակներից					
2.	Ծրագրի հիման վրա կազմված տարեկան աշխատանքային պլանի նպատակներից բխող աշխատանքների կատարողականները փոխհամաձայնեցված խորհրդի հետ					
3.	Զարգացման ծրագրի իրականացման համար տարեկան աշխատանքային պլանով սահմանված գործողությունները ինչքանով են կատարված ,որքանով են ապահովված ակնկալվող արդյունքները, ինչ չափով են պատասխանատուները կատարել իրենց պարտականությունները, որքանով են պահպանվել ժամկետները , որքանով են նպատակային ծախսվել նյութատեխնիկական կամ ֆինանսական միջոցները					
4.	Կատարված գործողությունները իրականացվել են ժամանակին և որքանով են ապահովվել տվյալ					

	խնդրի լուծումը					
5.	Մշակված և իրականացված աշխատանքային ծրագրերը որքանով են նպաստել սահմանված նպատակների իրականացմանը					
6.	Աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքում ապահովված առաջընթացը ինչպես է գնահատվել և վերանայվել զարգացման ծրագիրը					
7.	Ստացված արդյունքները ինչ չափով են արտահայտված կոնկրետ ցուցանիշներով՝ թվերով, տոկոսներով, բնութագրիչներով և որքանով են ընկալելի գործողությունն իրականացրած պատասխանատուներ ի,կատարողների և շահառուների համար					
8.	Աշխատանքային գործունեության ընթացքում հավաքագրված տվյալների հիման վրա որքանով են բացահայտվել առկա խնդիրները, գնահատվել է դպրոցի կառուցվածքից բխող աշխատանքի արդյունավետությունը և աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար աշխատակազմը վերապատրաստվել է					
9.	Իրականացված					

	աշխատանքները որքանով են նպաստել դպրոցի զարգացման ծրագրի շարունակական բարելավմանը					
	Ընդամենը միավորներ					
	Միջին թվաբանական միավորը					

№	**4.Զարգացման ծրագրով սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների , կատարողների (պատասխանատուների) , անհրաժեշտ միջոցների և ժամանակացույցի, տարեկան աշխատանքային ծրագրի մշակման վերաբերյալ**	Արդյունավետ 9-10 միավոր	Զարգացնող 7-8 միավոր	Բավարար 4-6 միավոր	Ոչ արդյունավետ 0-3 միավոր	Հիմնավորում
1.	Տնօրենը համագործակցել է մանկավարժների հետ՝ մշակելու հաստատության տեսլականը և առաքելությունը					
2.	Տնօրենը մանկավարժների և սովորողների մոտ խթանել է համագործակցության վստահության, սովորելու և մեծ ակնկալիքների մշակույթ					
3.	Ուսումնական պլանը					

	մշակված է զարգացման ծրագրի նպատակներին և խնդիրներին համապատասխան					
4.	Բոլոր սովորողների համար ստեղծված է անհատականացված և մոտիվացնող ուսումնական միջավայր					
5.	Տնօրենի կողմից հավաքվել և վերլուծվել է կրթական միջավայրին վերաբերող տվյալներ և տեղեկություններ					
6.	Իրականացվել է ծնողական հայնքի մշակութային, սոցիալական և մտավոր ներուժի գնահատում, ինչ միջոցառումներ են կազմակերպվել դրանց զարգացման համար և ինչպես են դրանք օգտագործվել զարգացման ծրագրի նպատակներին հասնելու համար					
7.	Սովորողների ընտանիքների հետ ստեղծվել են արդյունավետ հարաբերություններ					
8.	Համայնքի գործընկերների հետ ստեղծվել են արդյունավետ հարաբերություններ					
9.	Մշակվել է սովորողի ակադեմիական և սոցիալական հմտությունների զարգացման հաջողությունները նկարագրող հաշվետվողականության մեխանիզմներ և					

	ապահովվել է դրանց լրացումը բոլոր սովորողների համար					
10	Սահմանվել է մանկավարժների և սովորողների համար ինքնագնահատման, ռեֆլեքսիայի, թափանցիկության և էթիկական վարքագծի սկզբունքներ և կազմակերպված աշխատանքները համապատասխանում են դրանց					
11	Աշխատանքի ընթացքում պահպանվել է ժողովրդավարության, արդարության և բազմազանության արժեքները					
12	Աշխատանքի ընթացքում տնօրենը խթանել է սոցիալական արդարությունը որոշումների կայացման ժամանակ տնօրենը դիտարկել և գնահատել է հնարավոր իրավական հետևանքները և աշխատանքի ընթացքում առաջնորդվել դրանցով					
13	Իր իրավասությունների շրջանակում տնօրենը մասնակցել է կրթությանը վերաբերող որոշումների կայացմանը տարբեր մակարդակներում					
14	Դպրոցի աշխատանքին հարմարեցնելու նպատակով տնօրենը					

	գնահատել, վերլուծել և կանխատեսել է առաջնորդության ռազմավարությունների զարգացման միտումներն ու նախաձեռնությունները					
15	Տնօրենի կողմից վերահսկվել է հրամանների, հրահանգների, ցուցումների կատարումը					
16	Սովորողների առաջադիմությունը և աշխատողների աշխատանքի որակը վերահսկելու համար տնօրենը մշակել է գնահատման և հաշվետվողականության մեխանիզմներ					
17	Տնօրենը նպաստել է անձնակազմի ուսուցողական և առաջնորդական կարողությունների զարգացմանը					
18	Ուսուցչի և վարչական անձնակազմի աշխատանքն ուղղված է որակյալ ուսուցմանը և ուսման արդյունավետության բարձրացմանը					
19	Ուսուցման և դաստիարակության արդյունավետության բարձրացման նպատակով տեխնոլոգիաների կիրառումը					
20	Դիտարկվել և գնահատվել է ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով հատկացված ժամաքանակների արդյունավետությունը					

	սովորողների ուսումնառության արդյունքների վրա					
21	Իրականացվել են աշխատանքներ աշխատողների խրախուսման և սովորողների անվտանգության բարելավման ուղղություններով					
22	Զարգացման ծրագրում սահմանված նպատակներից և խնդիրներից բխող գործողությունների իրականացումը համապատասխանում է ժամանակացույցին					
23	Զարգացման ծրագիրը տնօրենի կողմից պարբերաբար վերանայվել է , կատարվել են փոփոխություններ, դրանք ներկայացվել են խորհրդի քննարկմանը					
24	Պատասխանատուները իրենց կատարած տարեկան աշխատանքների մասին ներկայացրել են հաշվետվություններ տնօրինությանը, մանկավարժական խորհրդի և կառավարման խորհրդին					
25	Վերահսկվել և գնահատվել է զարգացման ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի կատարման պատասխանատուների գործողությունները տնօրենի կողմից					
26	Զարգացման ծրագրով					

	նախատեսված յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները եղել են բավարար և նպատակային են կիրառվել					
27	Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսները արդյունավետ են օգտագործվել					
	Ընդամենը միավորներ					
	Միջին թվաբանական միավորը